



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L6D
✓1430

1999

Եղ. Գ. Խոջա-Կեօքչյան
Ե Ղ Ծ

ԲԱՆԱՔԱՂՈՒԹԵԱՆՑ

ԶԱՄՈՒՐՃԵԱՆ ՊԱՏՈՒԵԼԻՈՅՆ

Գ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
—
1866

Ltin
1430

1914-15 - 100 - 100



Ա Ռ Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ղ Ն

Մտադրութեամբ կարդա սոյն տետրակն, ուշիմ ընթերցող, և կը տեսնես ակներև, որ լոկ անձնական վիճաբանութիւն չ'է այս, այլ մի մտաւորական մաքառումն լուսոյ ընդ խաւարի, յառաջադիմութեան ընդ յետադիմութեան: Վասն զի կը տեսնես մէկ կողմէն մի ուսումնականարօտ ժողովուրդ, որ դաստիարակութիւն և դաստիարակ կը խնդրէ, իսկ միւս կողմէն մի ուսումնասիւած կուսակցութիւն, որ կը տազնալի վարժարաններ խանգարել և մատաղ սերունդը ուսմունքէ զրկել: Կը տեսնես մէկ կողմէն աննկուն ճշմարտասիրութիւն, իսկ միւս կողմէն ամօթահար ստութիւն և տգիտութիւն: Կը տեսնես մէկ կողմէն քրիստոնէական քաղցրութիւն և ներողամտութիւն, իսկ միւս կողմէն թշնամանք և հալածասիրութիւն: Կը տեսնես մէկ կողմէն աննենգ հարազատութիւն և անձնանուիրութիւն Ազգի և Յկեղեցւոյ, իսկ միւս կողմէն նենգութիւն և չարակամութիւն: Եւ երբոր այս ամենը կը տեսնես և կը շօշափես, յուսանք որ չ'ես ասիլ այն ժամանակ, թէ այս մտաւոր պատերազմին շահն կամ վնասն Մուրատեանին կը վերաբերի կամ Չամուրճեանին, այլ ընդհանուրին՝ և քեզ ուրեմն, սիրելի ընթերցող: Եթէ այս այսպէս չ'լինէր, իմացիր, որ մենք ամօթ կը համարէինք միայն անձնական պաշտպանութեան համար՝ Երեւակի զըրարանութեանց դէմ գրիչ ձեռք առնուլ:

Գ. Մ.

ՀՔ. 1433

41430-60

ԵՂԾ

ԲԱՆԱԲԱՂՈՒԹԵԱՆՑ ՉԱՄՈՒՐՃԵԱՆ ՊԱՏՈՒԵԼՈՅՆ

Ա .

Ամենայն երկիր ապաւինի իճըշ-
մարտութիւն , և երկինք օրհնեն
զճշմարտութիւն . . . Քան զամե-
նայն ինչ զօրաւոր է ճշմարտու-
թիւն : ԶՕՐԱԲԱԲԵԼ

Մարդիկ կան , որոնք ամեն սրտի մէջ բարութիւն կորոնեն' և
զեղեցիկ յատկութիւն կը հարցախուզեն , որպէս զի մարդ սիրեն :
Մարդիկ էլ կան , որոնք ամենազնիւ և յայտնապէս բարի սիրտն
անգամ կը փորեն , կը քրքրեն , որպէս զի մի արատ կամ պակասու-
թիւն գտնեն և մարդուն ատեն : Մարդիկ կան , որոնք ներողու-
թեամբ և մարդասիրութեամբ կապրին : Մարդիկ էլ կան , որոնք
բանասարկութեամբ և մարդատեցութեամբ կը տառապին : Եթէ
ասենք որ այս երկրորդ տեսակէն է և Տէրոյնց պատուելին , կար-
ծեօք շատերը մեզ հետ կը միաբանին : Լուսնի լուսի նման պայ-
ծառ սիրտ ունեցիր , արեգակի նման լուսաւոր միտք . փոյթ չէ ,
Երեւակի խմբագիրը այդ բանը չը տեսներ , դարձեալ իր սևացոյց
դիտակը կը տնկէ որ փայլուն լուսնի ու արեգակի մէջ բծեր նշմարէ
և լսյսը խծբծէ : Ասոր ապացոյցը շատ անգամ և շատ տեղ տեսնը-
ւած է . պատուելին շատ օրտեր վիրաւորած է , շատերէն վերք

ստացած , շատ թերթեր մրտաւած , շատ պատասխաններ ստացած , շատ անգամ յորդորուած է և խրատուած , բայց դարձեալ նոյն Չամուրճեանն է , դարձեալ նոյն պատուելին , որ ոչ մարդկութեան պատիւ կը ճանաչէ և ոչ արդարութեան պայման : Թէ քանի քանի բարի և շահաւէտ սկզբանց դէմ մաքառած է , քանի անգամ լուսոյ դէմ աչքերը խփած , քանի վիճաբանութիւններ յարուցած , քանի մարդիկ մոլորեալ քարոզած և քանիսն էլ հաւատաքննութեամբ դժոխք դրկած կամ սատանայի մատնած , քանի անգամ Եկեղեցւոյ և Ազգի անունով նոյն իսկ Եկեղեցւոյ հիմունքը փորած և Ազգի մէջ խռովութիւն և կուսակցութիւն յարուցած , այս ամենը բարեմիտ ընթերցողաց կը թողունք մտածել , և մենք կը դառնանք այն զրաբանութիւնը եղծել , որ շարժառիթն է մեր ներկայ զրութեան :

Այս հինգերորդ անգամն է , որ Չամուրճեան պատուելին վայրապար կը յարձակի մեր վրայ և մեզ հետ միասին Պ. Շանշեանի վրայ : Այս հինգերորդ անգամն է , որ իւր Երեւակ թերթով կը ջանայ մեր հաւատոյ սրբութիւնը արատաւորել և խիղճը բռնաբարել : Այս հինգերորդ անգամն է , կասենք , որ գիտութեամբ թէ անգիտութեամբ , ինքնին թէ այլոց հրապուրմամբ , կը բամբասէ , կը չարախօսէ , կը հայհոյէ և կը ճգնի վատահամբաւել : Առաջին անգամներուն լռեցինք , առաւել լաւ համարելով վեհանձնութեամբ տանել նորա անիրաւ զրախօսութիւնքը , քան թէ մի անվերջ վիճաբանութեան դուռն բանալով պատասխանել մի այնպիսի թերթի , որ պատրաստ է իւր իմացած ճշմարտութիւնն անգամ անարգ դահեկանի վաճառել , թող թէ որ և իցէ յայտնած ճշմարտութեան վրայ համոզուիլ և արդարութիւնը ամեն շահէ ի վեր նախադասել : Բայց որովհետեւ այս անգամ , որպէս իւր զրախօսութեանց յենարան , երկու կոնդակ ևս ունի հրատարակած , որով գուցէ գայթակղին պարզամիտները , ուստի արդարութիւնը կ'ստիպէ մեզ ճշմարտութիւնը յերեւան ածել և այն կոնդակներու նախնեաց և հետևորդ դէպքերը համառօտիւ պատկերացնել , զորս հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի հետ ի խորս հանգստեան շիրմին իջեալ կը համարէինք մենք , բայց այսօր Չամուրճեան պատուելին սկսել է արծար-

ծել և իւր հալածասիրութեան խարոյկը վառելու համար՝ նոյն կոն-
դակները լուցկի դարձուցել :

Ահա եղելութիւն իրացն , որ որչափ հանրածանօթ է Հայոցն Ռու-
սաստանի , գուցէ ոչ ամենեւին Հայոց Տաճկաստանի : Ուստի Պ. Չա-
մուրճեանի զրաբանութեան դէմ զրաժ մեր եղծը լիովին հասկնալու
համար՝ կը խնդրենք ընթերցողներէն անտեղի չհամարել հետևեալը :

Մի քանի տարիէն առաջ՝ Ղարաբաղու հայ ժողովուրդը , այն
Հայաստանի անիշխանութեան ժամանակին արիական հոգի սնու-
ցանող և բարբարոսութեանց դէմ պատերազմող Հայկազանց սե-
րունդը , սթափեցաւ և ամենակերպ զոհողութեամբ սկսաւ մանկանց
դաստիարակութեան և կրթութեան հոգս քաշել : Բացաւ ստորագ-
րութիւն դրամական մեծագումար նուիրաբերութեան , հաստատեց
հոգաբարձութիւն դպրոցի , ապահովեց եկամտից և արդեանց աղ-
բիւրներ , որոշեց ուսումնարանական տուրքեր , և այսպէս նիւթա-
կան պիտոյքը կատարելապէս հոգալէն զկնի՝ բարոյականն ջանաց
բարեկարգել . Պ. Շանշեանին հրաւիրեց Ս. Պետերբուրգէն , Կա-
թողիկոսական կոնդակով հաստատեց Տեսուչ , և ուսումնական
հսկողութիւնը նորան յանձնեց . հրաւիրեց Տփլիսէն զանազան ա-
ռարկայից և լեզուաց ուսուցիչներ . հրաւիրեց և մեզ որպէս օգնա-
կան Տեսչի և դասատու հայրենի դպրութեան . բայց այս հրաւերին
ընդդիմացաւ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը , որովհետև
մեզ վրայ էր նոյն վարժարանի տեսչական պարտաւորութիւնը և
այլ դաստիարակական պաշտօններ : Բացուեցաւ Ղարաբաղի մէջ
նոյնպէս և օրիորդաց վարժարան ընդ հովանաւորութեամբ նոյն ժա-
մանակեայ առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսի և ընդ տես-
չութեամբ Պետրոսի Շանշեանց : Դաստիարակաց կարօտութիւնն
աւելի զգալի եղաւ , և մենք կրկին և կրկին անգամ Թախանձական
հրաւերներ ստանալով՝ ի սէր Ղարաբաղու լեռնասուն և ուսում-
նակարօտ մանկանց թողինք Ներսիսեան ուսումնարանը , այն նուի-
րական տունը , ուր մօտ 15 տարի անընդհատ , նախ որպէս աշա-
կերտ և անդրանիկ որդեգիր զիշերօթիկ բաժնի , և ապա որպէս վե-
րակացու , ուսուցիչ , օգնական տեսչի և պաշտօնակատար տնօրէն ,

զարգացել և զարգացուցել էինք, դաստիարակուել և դաստիարակել էինք. Թողինք՝ ասպէս ասել՝ մեր հայրական տունը, վասնզի Տըփ-խիսի մէջ դաստիարակներ գտնելը աւելի դիւրին էր, և զնացինք Ղարաբաղ, ուր դաստիարակաց կարօտութիւնն սաստիկ կ'ըզգային :

Ամարային արձակուրդը լրացած էր, աշակերտք պատրաստական, ուստի և ուսմունքներն սկսան : Աշակերտաց Թիւը օր աւուր բազմացաւ, դպրոցի պարունակութեան անձկութիւնն զգալի եղաւ, ուրիշ ընդարձակ շէնք չճարուեցաւ, և Ղարաբաղու մետրապօլիտական գեղեցկադիր, պարտիզափակ և բազմապարունակ շէնքը առաջնորդարանէ ուսումնարան փոխուեցաւ : Հոգաբարձութիւնը իւր արխութիւնը օր աւուր կը բազմապատկէր. առաքինի տեսուչը աչալուրջ կը հսկէր, և ուսուցիչները անձանձիր կաշխատէին, աշակերտները ժրաջան մեղուաց նման մեղր կը կազմէին բարուց քաղցրութեան և մոմ մտաց լուսաւորութեան. կը յառաջէին մանկունք, կը յառաջէին ընդ նմին և ծնողք, վասնզի ուսումնարանական դասերն ուրախ ուրախ կը պատմէին մանկունք նաև ընտանեկան խաղաղ յարկի տակ : Ժողովուրդը յառաջադիմութեան ճանապարհի վրայ էր, երկսեռի վարժարանաց համբաւը բոլոր ուսնիական Հայոց մէջ տարածուած. լռած էին նաև այն անձինքը, որոնք անընդունակութեան պատճառաւ ուսուցչական պաշտօնէ արձակուած լինելով՝ երբեմն երբեմն գաղտնի դարանակալութեանց կը դիմէին և անստորագիր նամակներով Ս. Կաթողիկոսի անդորրութիւնը կը պըղտորէին :

Այսպէս բարեգուշակ էին Ղարաբաղու մէջ ամեն հանգամանք, այսպէս տաղաւարած էին դաստիարակութեան քաղցր հովանեաց տակ հարիւրաւոր մանկունք, և ահա յանկարծ յարեաւ քաղաքի մէջ մի ահագին փոթորիկ և աղմկալից խռովութիւն : Վարժարանի երաժշտութեան ուսուցիչը հրապարակի մէջ, առաջնորդարանի առջև, հայհոյեցաւ, ծեծուեցաւ, վիճակաւորի (*) մօտ նոյն օրը

(*) Այս միջոցին Ղարաբաղցւոց ամենասիրելի առաջնորդ Արք-

ճաշող և արբեալ մէկ անձնէ, Տեսչի հրաժարման կոնդակի անուն լսուեցաւ, ժողովուրդը խուռն բազմութեամբ առաջնորդարան յարձակեցաւ, առաջնորդը սարսափեցաւ, այլագունեցաւ և իւր անձն ազատելու համար յերևան հանեց երեք օր յառաջ յանուն Հոգաբարձութեան ստացած, զաղտնի պահած և արբեցելոյն միայն յայտնած մէկ կոնդակ դպրոցի Տեսուչը արձակելու մասին: Ժողովուրդը զայրագնեցաւ, հոգաբարձութիւնը վրդովեցաւ, և նոյն գիշերը Փերապատիւ առաջնորդը Էջմիածին փախաւ: Կազմեցան ժողովներ գրուեցան Թղթեր, ընտրեցան պատգամաւորներ, որ Էջմիածին գնալով նոր և օրինաւոր վիճակաւոր պահանջեն, ուսումնարանի վիճակը ապահովեն և Տեսչի արդարութիւնը պաշտպանեն: Թուղթ մի գրուեցաւ բոլոր ժողովրդեան կողմէն, Թուղթ մի քաղաքապետի կողմէն, և 2 Թուղթ հոգաբարձութեան կողմէն (*): Ընտրուեցան 3 պատգամաւորք ի դիմաց քաղաքայնոց և արուեստաւորաց, 2 պատգամաւորք ուսումնարանի հոգաբարձութեան անդամներէն, ընդ նմին Տեսուչն, իւր օգնականն և Փ. աշակերտք ուսումնարանէն: Ղարաբաղու ուսումնախնդիր ժողովուրդը այս խոհեմ և արդար միջոցը գործ դրեց, այսքան անձինք ուղևորեց առ Կաթողիկոսն ամենայն Հայոց, որպէս զի Էջմիածնի մէջ հրապարակաւ քննուին՝ Թէ Տեսչի դասագիրքը, Թէ աշակերտները, Թէ ժողովրդեան իրա-

ւելիսկոպոսն Ստեփաննոս, բոլորովին առանց ժողովրդեան կամքին, փոխուած էր, և նորա տեղը նոր վիճակաւոր կարգուած մէկ վարդապետ Գէորգ Արամեան:

(*) Մեր այս գրուածքի պատմական թելն չընդհատելու պատճառաւ պատշաճ համարեցինք Ղարաբաղի ազգայնոց բոլոր թղթակցութիւնքն առ Կաթողիկոսն և Մեղու Հայաստանի լրագրին մէջ հրատարակուած երկու գրուածք ուսումնարանական անցքերուն վրայ, ամբողջապէս այս յօդուածի վերջը դնել այսպիսի վերնագրով — Գրութիւնք, որ ընթերցողք կարենան դիւրութեամբ խելամտել թէ որչափ անտեղի և անհիմն են Երեւակի և Երեւակականաց անպատկառ գրախօսութիւնները: —

ւունքները և տառապանքները և թէ ուսումնարանի թշնամեաց
գաղտնի և խարդախ թղթակցութիւնքը : Բայց ինչ, կատարուեցնւ
արդեօք ժողովրդեան այս փափաքը և քննեցնւ արդարութիւնը :
Ցաւօք սրտի կը պատասխանենք թէ ոչ : Պատգամաւորներ, դաստի-
արակներ և աշակերտներ ի միասին տաժանելի նեղութիւններ կրե-
լով, Ծ օր անընդհատ, Նոյեմբեր ամսուան մէջ երբեմն տղմալից
ճանապարհաց և երբեմն բքաբեր հոսանաց և սառնամանեաց տո-
կալով՝ հազիւ հազ հասանք Էջմիածին, իջանք, հանգստացանք և
ներկայացանք Ս. Կաթողիկոսին, յանձնարարական թղթերով, դա-
սական տետրակով և աշակերտներով, և ի դիմաց Ղարաբաղու
բոլոր հայազն ժողովրդեան և յանուն արդարութեան առաջարկե-
ցինք աղերսագրերը կարդալ, թէ դասատետրը և թէ աշակերտները
քննել, թէ գաղտնի և խարդախ թղթեր կան՝ այն թղթերը յայտնել,
փախած առաջնորդն յատեան կոչել, և այլն և այլն : Բայց՝ ոչ ա-
ռաջնորդը կոչուեցաւ (որ մեզանէ Զ օր առաջ Էջմիածին էր հասել),
ոչ հակառակ գրուած թղթեր յերևան եկան և ոչ մեր առաջ արդա-
րութիւնը քննելու յօժարութիւն երևեցաւ : Շատ խօսեցանք, շատ
աղաչեցինք, և բաւարարութեան նշոյլ չտեսնելով՝ դասատետրը
իւր մօտ թողինք և վեհարանէն ելանք : Համբերեցինք երկու օր
ևս, առաջաւոր եպիսկոպոսաց և վարդապետաց հետ խորհրդակ-
ցեցանք, յորդորեցինք որ գոնէ նոքա դասատետրը կարդան և գոր-
ծոյն վախճան տան, և լսեցինք որ զիշերով կարդացել են և ըստ
ամենայնի համաձայն են գտել վարդապետութեան Հայաստանեայց
եկեղեցւոյ, երաշխաւորներ անգամ եղան թէ դուք գնացէք և մենք
շուտով վաւերացնել կուտանք և կուղարկենք :

Այսպէս ահա մեր աչքով չտեսնելով ժողովրդեան թախանձանաց
և աղերսագրաց կատարումն, համբուրեցինք Էջմիածնի երանելի
Հայրապետաց հինօրեայ մասունքները, և ելանք Էջմիածնէն : Տե-
սուչն ուղղակի Թիֆլիզ գնաց, յայտնելով բոլոր պատգամաւորաց
որ մինչև իւր դասատետրը չքննուի և ճշմարտութիւնը բացարձակ
պաշտպանուի, ինքը Ղարաբաղ չպէտք է դառնայ. իսկ մենք պատ-
գամաւորներով և աշակերտներով հանդերձ՝ դարձանք ի Ղարաբաղ

ակնկալող ժողովուրդը փոքր ինչ անդորրացնել և սպասել Հայրապետի պատասխանուն : Անցան օրեր, անցան շաբաթներ, և ահա եկաւ մէկ եպիսկոպոս առաջնորդական տեղապահ նշանակուած և նորա հետ միասին փախած նախկին առաջնորդ վարդապետը՝ բերելով իրենց հետ այն կոնդակը՝ որ Պ. Չամուրճեանը հրատարակել է Երեւակի 111 թուոյն մէջ : Կարդացուեցաւ յիշեալ կոնդակը, որոյ մէջ յետ ընդ երկար տատանմանց այս խօսքերն ևս լսուեցան առանց փաստի և ապացուցի դասատետրի քննութեան մասին . « Դատեցաք առաջի մտաւոր քանի մի անձանց յուսումնականաց և երկուց եպիսկոպոսաց վարժելոց յուսումն Սատուծոյ, յորում երեւեցան բազում վրիպակք բանից և խորհրդոց, որ հայէին ստէպ ի մոլորամիտ վարդապետութիւնս օտար առ իմէնջ եկեղեցեաց : » Բայց թէ հոյք էին այդ ուսումնական անձինքը և եպիսկոպոսունքը, ինչ էին մոլորամիտ վարդապետութիւնքը, հր օտար եկեղեցւոյն կը վերաբերէին, որոնք էին վրիպակք բանից և խորհրդոց, այս ամենն որպէս գաղտնիք հաւատաքննութեան ծածկեալ մնաց և դասատետրը չդարձաւ Էջմիածնէն : Ժողովուրդը քանի քանի անգամ վերստին խնդրագիր ուղղեց առ Ս. Կաթողիկոսն և աղաչեց որ, եթէ արդարեւ կան վրիպակներ, հրապարակաւ յայտնէ և կամ ուղղէ և դասատետրը դարձնէ տպագրելու. բայց պատասխան չստացաւ : Իրաւացի է արդեօք սոյն օրինակ մի դատաստան և վճիռ, համաձայն է Աւետարանի, համաձայն է օրինաց, ընթերցողաց կը թողունք պատասխանել :

Վարժարանի բոլոր ուսուցիչները ելան, աշակերտները ցրուեցան, ժոջովրդեան վառ եռանդը և ուսումնասիրութեան ջերմ փափաքը պաղեցաւ. Առաջնորդի շնորհիւ և Վ. Կաթողիկոսի հրամանաւ մտան վերստին դպրոցի մէջ այն հինօրեայ վարպետները, որոնք յանուն դաստիարակութեան և կրթութեան՝ վարժած են աշակերտաց ծունկերը մաշել չոքեցնելով, փայտակոծ և բրածեծ առնել, ականջ ու մազեր քաշել և ապտակ զարնել, աշխուժութիւնը մեռցնել, միտքը բծացնել և ազգի մէջ յառաջ բերել ինքնաշարժ մեքենաներ, անբան գրագէտներ, խարդախ և նախապա.

շարեալ գլուխներ , անիմաստ իմաստակներ , անպատիւ պատուելիներ : Քերականութեան և հարտասանութեան անունով ժողովուրդ խաբել , աղքատ ազգի նուիրաբերութեան լուսաները վատնել , Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեան անունով՝ Պիլուարտի և Յաբերդի բորբոսած աստուածաբանութիւնները դպրոցի մէջ խոթել , « Ուղ և ծուծով » խեղճ մանկանց ուղեղը ծծել և ցամքեցընել , և ուսումնարանէն այնպիսի զաւակներ տալ ազգին , որոնք ոչ թէ միայն զուրկ են հանրական գիտութեանց և ուսմանց հմտութիւններէն , այլ և ոչ իւրեանց Ազգի և եկեղեցւոյ պատմութիւնը գիտեն , ոչ մայրենի լեզուի և գրականութեան պատմութիւնը և ոչ հայրենեաց օրինաւոր աշխարհագրութիւնը , և դաստիարակութեան համար վարժարան մտնելով դարձեալ կելանեն այն զաւթէն առանց բարոյական և քրիստոնէական սկզբանց , առանց զարգացման կարողութեանց հոգւոյ , կամ աւելի կարճ ասել , առանց դաստիարակութեան : Այսպէս՝ մտան ուսումնարանի մէջ դաստիարակութեան թաղման հանդիսի սև կերոնակիրները՝⁽¹⁾ լուսաւորութեան

(1) Այս յօդուածը Մաւիս լրագրի մէջ հրատարակած ժամանակ մենք ականէ յանուանէ չէինք նշանակել և ոչ մի ուսուցչի անուն , որոց ձեռքին խաղալիք էր դարձել Ղարաբաղու դպրոցը Պ. Շանշեանի հրաժարմանէն յետոյ : Ասան զի մեր միտքը զբաւող զլիաւոր առարկան Ուսումնարանի դառնազէտ վիճակն էր և ոչ թէ ուսուցչաց անձնական թերութիւնները , որոց վրայ խօսելը զգուանք կարող էր պատճառել ընթերցողին . ինչպէս պատճառած էր ականատես ժողովրդին : Բայց Տէր Գրիգոր Աւագեանցը՝ Արշալոյս լրագրի մէջ տպագրած իր յօդուածով իրաւունք կուտայ մեզ մէկ քանի խօսք ասել իւր մասին : Այս քահանայն որ իւր նմաններէն հայկաբան կոչուած է , և որոյ բանաստեղծութիւնը գինու մէջ է , պերճախօսութիւնը՝ անպարկեշտ խօսակցութեան , իսկ իմաստասիրութիւնը՝ խոհերական հնարիմացութեանց , որոյ համար բաց ի Սալլանթեան քերականութիւնը և Աովզնու հատորները՝ ամենայն ուսմունք և գիտութիւնք մոլորութիւն են և նորադանդութիւն , այս քահանայն տեսուչ և հայկաբանութեան դասատու ընտրուեցաւ , երբոր դաս-

առաջնորդի անունով, և մենք քաղաքը թողլով գնացինք արքունի զօրաց և զօրապետաց ձմերոցը Խանքէնտի գիւղաքաղաքը ձմերելու և ի գարնան թիֆլիզ դառնալու:

Չանցաւ երեք ամիս, լսուեցաւ որ յանուն վիճակաւորի մի կոն-

տիարակութիւնը և հայութիւնը ուսումնարանէն հալածուեցաւ: Այսպէս կամեցաւ առաջնորդը և այսպէս հաճեցաւ Մատթէոս Վաթողիկոսը: Վասն զի նոցա համար փոյթ չէր թէ տեսուչն տգէտ է, անկիրթ է, յարբեցող է, դասարան մտնելով, աշակերտաց առջև կը դեղնի և երբեմն էլ գետին ընկնելով՝ խեղկատակութեան առարկայ կը դառնայ, փոխանակ դասախօսութեան անդադար կը յօրանջէ և շատ անգամ նիրհելով կը խորդայ խոր ի քուն, բաւական էր միայն որ եկեղեցական է և ոչ աշխարհական: Այս իրողութիւնը ցաւալի էր մեր համար դպրոցի նկատմամբ, բայց զարմանալի չէր ընտրողաց որոշմամբ, վասն զի ամեն մարդ զիտէ, որ տգէտ և նախապաշարեալ գլուխներու համար՝ բարոյականութիւնը և ուղղադաւանութիւնը կոչման և հագուստի մէջ է և ոչ թէ առաքինական գործոց, բաղմահմուտ դաստիարակութեան, լուսաւորմտաց և ազնուագործեալ սրտի մէջ: Բայց մեր համար զարմանալին այն եղաւ, որ Արշալոյս լրագրի մէջ Չամուրճեանի հրատարակած կոնդակներն վերատին տալագրուած աւսանք Տէր Գրիգորի նամակագրութեամբ, որով կը զեկուցանէր յիշեալ քահանայն թէ՛ Տաճկաստանցիք կուզեն Վաթողիկոս ընտրել զՇանշեանն, բայց չ'պիտի ընդունուի: Շատ յարմար առիթ էր երկարօրէն պատասխան գրել այս երազագէտ նամակին, բայց մենք միայն այսքան ծանօթութիւնը բաւական համարեցինք, վասն զի միայն Տէր Գրիգորն չէր որ տազնապի մէջ էր այս մասին, այլ նորա հետ էին և շատերը, որոց ոգիները թուրացած լինելով երկնաւոր առաքինութենէ՝ մեծ ահուդողի մէջ է իրենց բնութիւնը, ամեն հողմէ կը շարժին, ամեն բանէ կը խռովին, յամեն իրաց կը դողան և երազագէտ են իրանց բոլոր կենաց մէջ: Վաթողիկոսական ընտրութիւնն էլ վերջացաւ, տեսնենք այսուհետեւ ինչով պիտի զբաղին Տէր Գրիգորի հրապուրիչները և համախոհները:

դակ էլ յատկապէս մեղ համար է եկել այսու պարունակութեամբ , որպէս թէ մենք բացած ունինք ի Խանքէնտի առանձին վարժարան , ունինք 100ի չափ աշակերտ , կստանանք իւրաքանչիւրէն հինգ ռուբլի ամսական , ուստի հարկ է այս դպրոցն ևս խափանել : Այս երկրորդ կոնդակի բովանդակութիւնն այնչափ երևակայական էր և ծաղրելի , որ Առաջնորդն պատկառեցաւ պատճէնն անգամ մեզ տալ , թէպէտ և ինչպէս Ղարաբաղ , նոյնպէս և Թիֆլիզէն գրութեամբ խնդրեցինք մեր բարեկամներէն որ մի կերպով ստանան , բայց չյաջողեցան : Այս կոնդակն է որ Պ . Չամուրճեան հրատարակել է Երևակի 116 թուով , որոյ մէջ Երեւակի աներևոյթ թղթակիցը Խանքէնտ յայտնի անունը (որ Ղարաբաղու խանի վաղեմի ձմերոցն է և այժմ կալուածական վարձով արքունի զօրաբանակին տուած) դիտմամբ խարդախելով « Խռնքեռնդ » է փոխել , որպէս զի կոնդակի ստուծիւնը ծածկուի : Որովհետև ի Խանքէնտի ոչ թէ միայն դպրոց չկար (ինչպէս կոնդակի մէջ գրուած էր) այլ և ոչ Հայոց եկեղեցի կամ հայու բնակութիւն , բացի երկու գերդաստանէ , որ զօրաբանակի նշանաւոր բժիշկներէն օգնութիւն գտնելու համար ժամանակաւորապէս այնտեղ կը բնակէին ի պատճառս տկարու . թեան երկուց ծանր հիւանդաց : Ղարաբաղու ժողովուրդը զգաց և շօշափեց թէ խարդախ և նենգաւոր մարդիկ ինչպէս կը պատրեն և կը խաղացընեն խեղճ ծերունի կոնդակագիրն իւրեանց ցած նպատակին հասնելու համար : Զգաց ժողովուրդը , որ այն « աղանդաւորութիւն , մոլորութիւն » բառերն ևս նոյնպէս երևակայական էին ինչպէս Խանքէնտու դպրոցը : Ինչպէս որ Խանքէնտի մէջ հայ մանուկներ չկային և ոչ Հայ դպրոց , նոյնպէս և ոչ աղանդաւորութիւն և մոլորութիւն Ղարաբաղու դպրոցին մէջ , և ոչ « վրիպակ բանք և խորհուրդք » դասատետրի մէջ , ինչպէս որ Պօլսոյ ազգային Կրօնական ժողովոյ քննութեամբ և վաւերացմամբ արդէն տըպագրուած է դասագիրքն և ընտրութիւնն ամեն ընթերցողաց յայտնի (*) : Հասկացաւ ժողովուրդը և մորմոքեցաւ իւր ուսումնարանի

(*) Պ . Շանշեանի « Համառոտութիւն Քրիստոնեական ուսման

բարոյական շէնքը հիմնայաւորակ տեսնելով, այն շէնքը որ վեց տարի անընդհատ վաստակելով, քրտնելով և ամեն արգելքներու յաղթելով՝ հազիւ հազ կանգնեցուցել էր : Յաւեցաւ ժողովուրդը, այն ուսումնաւարաւ ժողովուրդը, որ խրախմանութեան ամենաշքեղ հանդէսներով, նրազալոյծներով և ատենախօսութեամբք տօնել էր իւր լուսաւորութեան ապաստանարանի կանգնումն, հարիւրաւոր թղթեր գրել Էջմիածին և պատգամաւորներ ուղարկել, մինչև իւր փափաքին հասել էր և օրինաւոր Տեսուչ նարել, ցաւեցաւ և ջանաց պաշտպանել և յարատեւել . բնայ վերջը ստիպուեցաւ համաքաղաքային ժողով կազմել և նուիրաբերութեանց մայր գումարը կապել, որպէս զի ի զուր չվատնուի շնորհիւ Առաջնորդին և ուսումնահալած ուսուցիչներուն :

Այժմ կը լսուի որ ուսումնարանի բարոյական շէնքը կործանելէն

Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ » գրաւոր աշխատասիրութիւնը, որ ամենայն օրինաւորութեամբ առաջարկուել է Արօնական ժողովին և երեք ամսէն աւելի ժողովի անդամները իրանց մօտ պահելով՝ կարդացել, քննել և վաւերացուցել են : Այն աշխատասիրութիւնը՝ որ տալագրուելէն զկնի՝ ոչ միայն շատ ընթերցողներ ըանիւ բերանոյ, այլ և հայկական լրագիրները՝ Արշալոյս, Մասիս, Ժամանակ, Վարագայ, Ծաղիկ, Ծիլն Աւարայրի հրապարակաւ ջատագովել են ինչպէս ամենընտիր և իւր տեսակների մէջ առաջին դասագիրք բրիտոնէական ուսման, այն աշխատասիրութիւնը ըսկսել է Պ. Չամուրճեանը իւր բնատուր բժախնդրութեամբ խմբծել ընդդէմ վկայութեան հասարակաց : Մենք հաւաստի գիտենք, որ Չամուրճեանին ճանաչողները ամենևին չեն զարմանար նորա բժախնդրութեան վրայ. որովհետև Չամուրճեան և բժախնդրութիւն, կամ բժախնդրութիւն և Չամուրճեան համանուն բառեր են, ուրեմն և ոչ բնաւ զարմանալի : Մենք ևս չենք զարմանար, թէպէտ և ի մօտոյ չենք ճանաչեր, վասն զի այն Չամուրճեանը՝ որ Պատգալայ խորհրդածութիւնքը կը թարգմանէ և ճիշտութեան վրայ սիրտը ցաւելով նոցա դէմ գրած էջերը ի բաց կը թողու ասելով « այս .

զկնի՝ նոր առաջնորդը նոր դպրոց կուզէ կառուցանել . բայց երանի
 թէ Հայք բուն իսկ դաստիարակութեան վրայ մտածեն և ոչ թէ պատ-
 ու պատուարներով իւրեանց զլուխը խաբեն : Որչանի շէնքեր կան
 այսօր կանգնուած մեր Ազգին մէջ , որոնք ոչ թէ վարժարան ,
 այլ ծուլարան , պատժարան և խաղարան են դարձած : Երանի
 թէ որչափ վարժարանական շէնքեր կան , գոնէ այնչափ էլ դաս-
 տիարակներ լինէին՝ դաստիարակ բառի բուն նշանակութեամբ
 կրթուած և պատրաստուած : Բայց թողնենք այս փափուկ առար-
 կան , որ ամեն զգայուն և հայասէր սրտի համար խորին ցաւա-
 կցութեան նիւթ է , և գանք դարձեալ մեր խնդրոյն :

Պ. Չամուրճեան մեր նկարագրած ազգային եղելութեանց անգէտ
 լինելով և կամ անտեղեակ ձեւանալով՝ « մոլորեալ և աղանդաւոր »
 բառերը բերան առած՝ ջանացել է և կը ջանայ հաւատաքննութեան
 խաւարի մէջ արդարութիւնը վարագուրել և նշմարտութիւնը խեղ-

ինչ էջը Ճիգուիթներուն վերաբերելով շթարգմանեցինք . . . հեղի-
 նակը կրիւք կը խօսի Լայլն » (տես թարգ. Չամուր. երես 455):
 Այն Չամուրճեանը՝ որ այնքան փառախնդիր է Ճիգուիթականու-
 թեան , որ Պասքալայ աղօթքը արժան չի համարիր թարգմանել
 ասելով . « Ճիգուիթներու դէմ զաւառական համակները գրող մար-
 դուն առ Աստուած սէրը այնքան տաք չկրնար ըլլալ , որ շինած
 աղօթքը կարդացողները ջերմեռանդութեան շարժէ » (տես նոյն
 թարգ. 556): Այն Չամուրճեանը , որ Հայաստանեայց եկեղեցին մո-
 լորեալ քարոզող Գաթրճեանի Տարբերութեան գրքին մէջ կը գով-
 ուի իբրեւ մի հատ ուղղափառ . այն Չամուրճեանը որ երբեմն իւր
 Ձոհալով նշանակուել է իբրեւ պապական՝ և հայոց պարբերական
 գրիչներով միշտ քարոզուած է որպէս լուսայ և յառաջադիմութեան
 խոչընդակ . այն Չամուրճեանը՝ իհարկէ ուրախ սրտով չէր կարդար
 Պ. Շանշեանի քրիստոնէական աշխատասիրութիւնը , որոյ առջև
 իւր բազմամեայ ճգունքը կոչնչանան և կը ցնդին՝ որպէս մառա-
 խուղ առաջի արեգական : Բայց այս բաւական չէ , Բ. և Գ.
 զլուխներուն մէջ . մենք աւելի ընդարձակ կը խօսինք թէ՛ այս՝
 և թէ՛ մեր վարդապետանալու մասին արած բանասրկութեան դէմ :

դել: Կը մոռանայ Պ. Չամուրճեանը, որ ճշմարտութիւնը իւր կար-
ճամտութենէն շատ բարձր է, և տգիտութեան ու ատելութեան կիր-
քը և խաւարը չեն կարող փաթաթել և ծածկել: Կը մոռանայ որ
ճշմարտութիւնն արդէն յաղթանակած է, խարդախներն ամօթա-
պարտ եղած, Պ. Շանշեանի դասատետրն արդէն տպագրուած,
որ հեռաւորներն անգամ կարեն կարդալ և հեղինակի բարեպաշ-
տութեան պատկերը նորա մէջ ցոլացած տեսնել: Կը մոռանայ Տէ-
րոյէնց պատուելին, որ Պ. Շանշեանը բոլորովին ապահով ճշմար-
տութեան վրայ՝ և ոչ վրդովուած է անգամ, բայց ժողովուրդը զինքն
արեամբ չափ պաշտպանած է, նորա արժանաւորութիւնն զգացած
և այս րոպէին դարձեալ ժողովրդեան Թախանձանօք ամենաբարե-
կարգ գիշերօթիկ վարժարան ունի բացած Թիֆլիզի մէջ, և հայ
մանուկներ թէ տեղւոյն և թէ զանազան քաղաքներէ ժողովուած կը
վայելեն նորա դաստիարակութեան քաղցրութիւնը: Կը մոռանայ Պ.
Չամուրճեանը, որ ոչ թէ Մատթէոս Կաթողիկոսն ինքն, այլ մի քա-
նի խարդախներ էին կոնդակներու բուն պատճառն, և այս ամեն
մարդ պարզ կարող է տեսնել, որովհետեւ Հայրապետն վաղուց
արդէն իւր մահկանացուն կնքած է, բայց մի քանի խաւարաշրջիկ
բնագաւորներ նախ զինքն ի կենդանութեան և այժմ նորա կոնդակ-
ներն և զԵրեւակն իւրեանց դժոխային ատելութեան գործիք շինած
են, ոչ թէ Հանգուցելոյն յիշատակը յարգելու համար, այլ աշխարհի
մէջ ծաղր և ծանակ անելու համար: Վասն զի նոքա լաւ գիտեն,
որ այն կոնդակներն ամենեւին արժէք չունեցան Ռուսաստանի ժողո-
վրդեան առաջ և երբէք չեն կարող ունենալ և ուրիշ տեղ, մանա-
ւանդ Պօլսոյ մէջ, ուր երանելի Հայրապետի բնաւորութիւնը ամե-
նուն յայտնի է: Նոյն Հայրապետը Պ. Չամուրճեանի և Սրմենակ
Հայկունույ (խմբագիր Մուշայֆ Մասեաց) վրայ ջատագովական
կոնդակներ ունի գրած իբրեւ եկեղեցւոյ հարազատ որդւոց վրայ,
բայց մենք գիտենք որ սոքա երկոքեան մէկզմէկ ամենեւին ճշմարիտ
Հայ չեն ընդունիր, ինչպէս որ կարդացած ենք իւրեանց վիճարա-
նութիւնքը: Ինչ՞ պատասխան կը տայ մեզ այս մասին Պ. Չամուր-
ճեանը, կոնդակի սխալականութիւնը կընդունի, թէ իւր անվերջ

վիճարանութիւնը կուրանայ Հայկունոյ հետ . երկուսէն մէկը կը կպահանջենք :

Թող իմանայ Պ. Չամուրճեանը , որ իւր հրատարակած կոնդակին ստորագրող Մատթէոս Հայրապետը Պ. Շանշեանի տեսչական հաստատութեան կոնդակի մէջ այս խօսքերն ունի գրած .

Թէ և ի լրոյ և եթ հաւաստի եղեալ էաք ազգասիրական և հոգեկան ազնուութեան յարգելոյն Պետրոսի Շանշեանց , որ երբեմն բաւական աւուրբք ի միջոցս կենդանութեան արժանայիշատակ նախորդին մերոյ Տեառն Ներսիսի ծառայեալ է ազգասիրական եռանդուն անձնանութիւրութեամբ , որ յետ կենազրաւ լինելոյ Հանգուցելոյն ի Տէր , ելեալ ի պաշտամանէն բնակէր ի Պետերբուրգ լի ազգասիրութեան ոգւով , սոյն սիրելին մեր ի Տէր , արժանին գովութեան , ներկայացեալ առաջի մեր՝ հասու ազնուութեան հոգւոյ նորա եղաք . » և այլն (19 սեպտ. 1863 ամի Ն^o 452 . սեւ յարձանագրութիւն կարողիկոսական կոնդակաց ի Ս. Ջըմիածին) :

Թող իմանայ Պ. Չամուրճեանը , որ Գ. Մուրատեանն ևս ոչ միայն չէ « մերժուած Ներսիսեան դպրոցէն » (ինչպէս չամաչելով կը գրէ Երեւակի մէջ) այլ այսօր ևս նոյն ուսումնարանն բաց է իւր առաջ , և ահա իւր վարած պաշտօնակատարութեանց համար ստացած գոհութեան վկայագրի պատճէնը .

Տուաւ այս Վկայագիր ի Հոգաբարձութենէ Ներսիսեան Հայոց ազգային հոգևոր դպրոցի Պ. Գարեգնի Մուրատեանց առ այն , զի որպէս տեսանի ի գործոց դպրոցին , նա ըստ հրաւիրանաց և ըստ տնօրէնութեան կառավարութեան դպրոցիս կարգեալ է ի պաշտաման ի սմին -- ի 1857 ամի՝ ուսուցիչ Հայոց լեզուի յերկրորդ և յերրորդ դասատունս , ի 1862 ամի՝ ուսուցիչ գրականական տեսութեան Հայոց՝ ի չորրորդում դասատան , և աւագ վերակացու ի վերայ որդեգիր (գիշերօթիկ) և երթևեկ աշակերտաց և միանգամայն օգնական Տեսչի՝ և ի 1863 ամի՝ Պաշտօնակատար Տեսչի , ազատ մնալով ի վերակացութենէն , և զայնսսիկ պաշտամունս կատարեալ է նա ամենայն արիութեամբ և ջերմեռանդութեամբ , և որ մեծն է՝ գովելի

բարեբարոյութեամբ: Ի ստուգութիւն որոյ տուաւ նմա այս վկայա-
կան ի ցոյց շնորհակալութեան ի կողմանէ Հոգաբարձութեանս,
պարտուպատշաճ ստորագրութեամբ և դրոշմամբ դպրոցական կնքոյ
ի 10 Օգոստոսի 1864 ամի Ն. 242 Թիֆլիզ » . (Յիշեալ քուսնահամարով
արձանագրեալ գտանի իդպրոցին):

Ստորագրուիւն հոգաբարձուաց
եւ կնիք դպրոցին:

Չարմանալին այս է, որ 1864ին ուսումնարանի վարչութիւնն այս
վկայագիրն ունի տուած Գ. Մուրատեանին իւր անընդհատ պաշ-
տօնակատարութեանց համար, և Պ. Չամուրճեանը 1863 թուա-
կանէն արդէն դպրոցէն մերժուած կը գրէ, այն ինչ ամենաբարձր
պաշտօնը այն ժամանակն ունի ստացած: Արդեօք Երեւակի խմբա-
գիրը պիտի կարմրի իւր անհեթեթ ստախօսութեան վրայ: Արդեօք
պիտի ամաչէ թէ իւր խարդախ թղթակցին պիտի մեղադրէ: Բայց
միթէ ինքն ևս մեղաւոր չէ, որ խարդախներուն բերան կը դառնայ
և սուտակաւորապէս տեղեկութիւնք կը հրատարակէ: Աւելի լաւ կանէ
Պ. Չամուրճեանը, որ իւր աներևոյթ թղթակիցը յերևան հանէ,
ապա թէ ոչ՝ այս անամօթ ստախօսութեան աղտը իւր վրայէն յա-
ւիտեան չի սրբուիր: Թող լաւ իմանայ Պ. Չամուրճեանը, որ Ղա-
րաբաղու դպրոցի հոգաբարձութիւնն ևս ամենամեծ գոհութեան
վկայագիր ունի մեզ տուած Կաթողիկոսի կոնդակներէն յետոյ, որ
եթէ մեզ չհաւատար, կարող է այժմեան տեղական առաջնորդ Սար-
գիս սրբազան արքեպիսկոպոսի ձեռքով ուսումնարանի արձանա-
գրութիւններէն ստանալ, ընդ նոսին և շատ թղթեր, որոնք կը
պարունակին իրենց մէջ ժողովուրդի սրտի եռանդը և ակնկալու-
թիւնը ազագայ սերնդոց յառաջադիմութեան և տեսչի բարեմաս-
նութեանց համար: Ուրեմն Պ. Շանշեանի և Մուրատեանի դաս-
տիարակութեան վկաները Չամուրճեանի հրատարակած մեռեալ
կոնդակները չեն, այլ կենդանի ժողովուրդը, զգայուն ժողովուրդը
իւր մատաղ սերնդով:

Այս օրուան օրս հազարաւոր անձինք կան ուսնական հայաբնակ
քաղաքաց և գիւղից մէջ Պ. Շանշեանի դաստիարակութեան շնորհը

վայելողք : ոմանք հովիւք եկեղեցւոյ , ոմանք արքունի պաշտօնա-
տարք , ոմանք ուսուցիչ վարժարանաց , ոմանք ուսանողք համա-
լսարանաց , այլ և ոմանք վաճառականք : Չէրքէզահայոց , Լէզկի-
ահայոց և Ուտիահայոց մէջ անգամ քահանայք կան , որոնք հայու-
թեան նախնի դարուց մնացորդները հովուելով և պահպանելով՝
չէրքէզախօս , լէզկիախօս և ուտիախօս հայ մանուկները ազգային
դաստիարակութեամբ կը կրթեն (¹) . Պ . Շանշեանի հարիւրաւոր և
հազարաւոր աշակերտաց մէջ մինչև ցայսօր ո՛վ տեսաւ երբէք
կրօնափոխ կամ մայրենի եկեղեցւոյն անհարազատ , և ընդհակա-
ռակն ո՛վ չիտեսաւ նոցա մէջ ջերմաջերմ հայութիւն , կրօնասի-
րութիւն , սէր յառաջադիմութեան , սէր ազգի և եկեղեցւոյ :

Թող իմանայ Պ . Չամուրճեանը որ իւր հաւատաքննութեան սև
հայհոյանքը , իւր չարախօս բարուրանքը , իւր սուտակասպաս
բանասարկութիւնքը՝ ոչ թէ արատաւորել , այլ զայրացնել անգամ չեն
կարող Պ . Շանշեանին և Գ . Մուրատեանին , քանի որ նոքա իրենց
Ազգի և եկեղեցւոյ սիրով միայն կապրին , քանի որ հազարաւոր
ծնողներ և մանուկներ մխիթարած ունին , քանի որ զգուանօք կը

(¹) Երջանկայիշատակ Ներսէս Աթոռիկոսը բազմաթիւ Չէրքէ-
զահայ և Աւտիահայ մանուկներ բերել տալով Ներսիսեան դպրոցը
Պ . Շանշեանի տեսչութեան ժամանակ յանձնեց նորա հսկողութեա-
նը , և հայերէն խօսիլ անգամ չիմացողները , օրինաւոր ուսմունք ու-
սան , քահանայ ձեռնադրուեցան և ուսուցիչ կարգուեցան իւրեանց
հայրենակցաց համար : Բաց յայսմանէ՝ երբոր զաւառներէն խընդ-
րագրով քահանայացուներ կառաջարկէին ձեռնադրութեան համար ,
երանելի Հայրապետը նախ Պ . Շանշեանին կը յանձնէր , որ գոնէ
վեց ամիս կամ մի տարի ուսուցանէ հարկաւոր ուսմունքները , ո-
րոնց համար սոսանձին դաս կար որոշուած դպրոցի մէջ , և ապա
հրաման կուտար ձեռնադրուելու : Մենք մեր աչքով տեսել ենք քա-
հանայացու հայրը իւր որդւոյ հետ ուսմունք սովորելիս նոյն վար-
ժարանի մէջ :

նային այն մարդկանց վրայ, որոնք հաւատոյ սրբութիւնը Երեւակի նման կարճամտութեան առարկայ կը շինեն և իրենց կուրութիւնը և տգիտութիւնը աստուածային իմաստութեան և սրտագիտութեան հաւասար կը կարծեն. քանի որ հաւատացած են Պ. Շանշեան և Մուրատեան, որ չարերը՝ որչափ էլ ատամներ կրճտեն, չարախօսեն, զրաբանեն, դարձեալ՝ ազնուասրտութեան, արդարութեան և ճշմարտութեան յաղթանակը անհրաժեշտ է: Երկինք ու երկիր կանցնին, բայց ճշմարտութիւնը չի անցնիր:

Բայց մենք ի վախճան մեր գրութեան այս միայն կասենք Պ. Չամուրճեանին, որ այսուհետեւ իւր սրտի հետ խորհրդակցի և ոչ թէ ականջներու, և կոյր ատելութեան ճանապարհը թողլով՝ ինքզինքը սիրոյ վարժեցնէ, և անշուշտ իւր մարդատեաց ընծացքը կը փոխէ, վասն զի՝ սատանայի համար անգամ Ս. Թերեզան այսպէս կը բացագանչէ. « Ո՛հ, եթէ սատանան կարենար սիրել, չարութենէ կը դադրէր. » և այս խօսքով ահա կը կնքենք մեր գրութեանը:

Արդարեւ՝ այսչափա բաւական համարելով՝ մենք արդէն Մասիս պատուական լրագրի 743 և 744 թիւերուն մէջ կնքած էինք մեր Եղծը Պ. Չամուրճեանի դէմ, բայց յանկարծ իրերը կերպարանափոխ եղան: Երեւակը մեր աչքէն աներևութացաւ, երբոր Պ. Թահիրեանի զրախօս նամակագրութիւնները Ծիլն Աւարայրի հանդիսին մէջ երևան ելան, իսկ Սարգիս Արքեպիսկոպոսի առ Կ. Պօլսոյ Ժողովն ուղղած բողոքագիրն առանձին տետրակով: Յիշեալ հրատարակութիւնքն ամեն զաղտնիք մերկացուցին, վասն զի ամեն ընծերցող տեսաւ և հաւատաց, որ Երեւակը միայն լոկ գործիք է ներկայ տարւոյն մէջ, իսկ Թահիրեանի և Ս. արքեպիսկոպոսի հալածասիրական և զրպարտիչ զրագրութիւնքը 1863 թուականէն արդէն սկսած են ի Կ. Պօլիս յանախել: Սարգիս եպիսկոպոսի զըրուածքին դէմ բաւական կը համարինք Մասիսի 758 համարի մէջ հրատարակած մեր պատասխանը տպագրել այս տեղ, իսկ Թահիրեանի նամակներուն դէմ հարկէ անշուշտ գոնէ մէկ քանի խօսք ասել:

Ամեն մտադիր ընծերցող նշմարած է արդէն, որ Թահիրեանի

նամակներն իրանց անհեղեղ հակասութեամբ կը նշաւակեն զրողի սուտակասպաս խորհուրդները և պղտոր մտադրութիւնները: Թողնենք նորա անամօթ հայհոյանքը Պ. Շանշեանի և այլոց դէմ, թողնենք նորա թերիմաց և նենգամիտ մտածութիւնները ազգային այս ինչ կամ այն ինչ գործոց համար, դիտողութեան առնուէք միայն նորա զրած տողերը Մատթէոս Կաթողիկոսի գործողութեանց նըկատմամբ: Մատթէոս Կաթողիկոսն, Պ. Թահիրեանի համար, երբեմն քարքարոս է, անիրաւ է, անկանոն է, քոյշ է, չարանախանձ է, անհաստատ է, անարժան է Կաթողիկոսական կոչման եւ արժանի մեռնելու, իսկ երբեմն սուրբ է, պաշտելի է և անսխալական: Բարբարոս և անիրաւ է Սարգիս եպիսկոպոսի նկատմամբ, իսկ անարխալական է Պ. Շանշեանի և Մուրատեանի համար զրած կոնդակներով: Ահա այս խօսքերը կը գրէ Պ. Թահիրեան իւր նամակներուն մէջ Մատթէոս Կաթողիկոսի համար, որ քաղուածելով հանած ենք Ծիլն հանդիսի յունիսի ամսատետրէն. « Մատթէոս Կաթողիկոսն բարբարոսաբար վարեալ է և վարի ի պաշտօնի իւրում ըստ ամենայն մասանց: Միաբանութիւնն Էջմիածնի նկարագրեալ է որքան ինչ մերձաւորապէս յայտնի էր սմա զանկանոն արարմունս Մատթէոսի ի 116 յօդուածս: — Սարգիս (Չալալեան) արժանակոչ արհին առ ի խոյս տալ ի բռնաբարութենէ և յանիրաւ և չարանախանձ արհամարհանաց առ նա (որպէս ասացից զկոչումն չգիտեմ) Մատթէոսի: — Վասն զի ոչ մի առաջնորդ չէ առաջնորդ, զի իրաւունս չունի, այլ կուրօրէն զանիրաւ կամս Հայրապետին ունի կատարել. — Ճանաչելով զթուլութիւն Գլխոյն (Մատթէոսի) վերամբարձեալ են զնա յիրաւունս ինքնիշխանութեան. — Լաւ է միոյ անձին (Մատթէոսի) մեռանիլ, քան բոլոր Ազգին կորնչիլ: — Չեռնտու Մակարին եղեն անհաստատ բնութիւնք Մատթէոսի, և այլն և այլն: » Իսկ միւս կողմէն Պ. Թահիրեան կը մեծացուցանէ զՄատթէոս Կաթողիկոսն, որ կոնդակներ է զրած Պ. Շանշեանի և Մուրատեանի համար և այն կոնդակներն էլ առիթ բռնելով՝ Երեւակի խաւարին մէջ կ'աներևութանայ, կը հայհոյէ, Մատթէոս Կաթողիկոսէն նզովեալ կանուանէ և դառն տագնապի ու քրտանց մէջ մտնելով

կը ջանայ արատաւորել զմեզ և Պ. Շանշեանի գրաւոր երկասիրութիւնը փականքի տակ դնել: Կարծեմ որ այս տեսակ անամօթութիւնը երկար բացատրութեան կարօտ չէ, վասն զի եթէ Պ. Թահիրեան կրնդունի որ Մատթէոս կաթողիկոսն քարքարոս է, անիրաւ է, չարանախանձ է, կարողիկոսական կոչման անարժան է, քոյլ է, անկանոն է, անհաստատ է, հետևապէս ուրեմն պարտ է ընդունիլ, որ նորա գրած կոնդակներն բնաւ ամենևին արժէք չունին: Բայց եթէ մէկն կրնդունի իսկ միւսն ոչ, այդ էլ մի տեսակ աշկարայ տմարդութիւն է, որուն վրայ անարժան համարելով երկար խօսել՝ կանցնենք մեր հետևեալ պատասխանւոյն, որ հրատարակած ենք Մասիսին մէջ Ս. Եպիսկոպոսի գրուածքին դէմ:

Աստուածային օրէնքը կը պատուիրէ ամէն մարդու ոչ միայն իւր իրաւունքը պաշտպանել, այլ և իւր ընկերինը, և ահա այս սուրբ պարտքը, որ ընկերականութեան նուիրական հիմն է, պարտաւորեց մեզ մի համառօտ պատասխանի գրել այն թերթին մի քանի կէտերուն դէմ, որ նորումս հրատարակուած է Արամեան տպարանէն այս վերնագրով. « Առ Գերագոյն ազգային ժողով Կ. Պօլսոյ ի Սարգսէ արքեպիսկոպոսէ Զալալեանց »: Մեր գրած պատասխանին է հետևեալը, զոր ուղարկելով ձեր յարգութեանը՝ կը խնդրենք որ բարեհաճիք հրատարակել ձեր անկողմնասէր լրագրին միջոցաւ:

Սարգիս արքեպիսկոպոսի յիշեալ գրուածքը, որ ի 14 մայիսի 1864 ամի ուղղած է յանուն Կ. Պօլսոյ ազգային ժողովոյն և այժմ տպագրութեամբ հրատարակուած, ըստ բուն պարունակութեան՝ է մի բողոք Պ. Ս. Փափագեանի « Ազգային Պատմութիւն » անուամբ դասագրքին դէմ. բայց՝ որովհետև արտաքոյ այս բողոքարկութեան պատմուած են և այնպիսի իրողութիւններ և զրպարտութիւններ, որոց ստուծիւնը յայտնի է մեզ. ուստի հարկ կը համարինք, ի սէր ճշմարտութեան, յիշեալ սխալները ուղղել և զրպարտութեան բարուրանքները քերել:

Սրբազան Սարգսի բողոքագրին մէջ ի շարս այլոց, հրատարա-

կուած կան երեք կոնդակ Ներսէս Կաթողիկոսի, որոնք բոլորովին հեռի բողոքարկութեան նպատակէն՝ Ներսիսեան դպրոցի անցքերուն կը վերաբերին և միանգամ ևս տպագրուած են ի Թիֆլիզ: Այս կոնդակներու կրկնակի տպագրութեան շարժառիթն այն է, որ Սարգիս արքեպիսկոպոսն, զուցէ խղճահարութենէ շարժեալ, (վասրն զի պահանջող չկայ) կը ջանայ ընթերցողները համոզել որ ինքն չէ եղած Պ. Շանշեանի հրաժարման պատճառն Ներսիսեան դպրոցի տեսչութեան պաշտօնէն, և հետևապէս կը պնդէ, որ « Շանշեանի համախոհքն » (Սրբազանի ստեղծած բառն է) եղած են պատճառ այն զայնթակղութեան, որ ըստ իւր ասութեան « Տարածեալ կայ յամենայն ուրէք » և տեղի գտած է Պ. Փափագեանի դատագրքին մէջ: Թողլով բողոքագրութեան և դատախազութեան խնդիրն Սրբազան արքեպիսկոպոսին և Պ. Փափագեանին, որ իրենց գիտենալու բանն է, խօսինք այն կէտերուն վրայ, որոնք սուտ են և ինքնահնար:

Ա. Սարգիս արքեպիսկոպոսն շարունակ ինն տարի է, որ բանիւ և գրով կը պնդէ թէ ինքն չէ եղած Պ. Շանշեանի հրաժարման պատճառն, Թիֆլիզի մէջ քարոզեց այս բանս, բայց արդիւնք չունեցաւ, վասն զի եղելութիւնը յայտնի էր ժողովրդեան: Մատնէոս Կաթողիկոսին նամակներով գրեց, բայց Շանշեանէն զրաւոր պատասխան (*) ստացաւ, նշմարտութիւնն չծածկուեցաւ: Ներսիսեան դպրոցի կարկատուն հաշուետեսութեան գրքին մէջ փաստաբանութիւններ հրատարակեց, բայց օրագիրներն ընդդէմն աղաղակեցին. այժմ էլ Տանկաստանի մէջ վաճառ կը հանէ ինչ որ Ռուսաստանում անցած, հնացած և մոռացուած է, բայց ցոյց կը տանք որ ինքնահնար են և նոյն իսկ ինքն Ս. արքեպիսկոպոսն է Շանշեանի հրաժարման պատճառն. ցոյց կը տանք ոչ թէ Ներսիսեան

(*) Ծիշն Առաքայրի իր Յունուարի թուոյն մէջ և նոյնպէս Ծաղիկն հրատարակած ունին այս պատասխանին, հարցասէր ընթերցողք կարող են կարդալ:

դպրոցի դիւանին մէջ արձանագրած բազմաթիւ վաւերագիրներէն և կոնդակներէն , որոնք այժմ մեր ձեռքն չեն , բայց անյայտ չեն Ս. արքեպիսկոպոսին , այլ ցոյց կըտանք նոյն իսկ սրբազան Սարգսի հրատարակած երեք կոնդակներէն՝ միայն ընթերցողաց մտադրութիւնը դարձնելով յետագայ թուականներուն : Առաջին կոնդակը գրուած է Թիֆլիզէն Պետերբուրգ առ Հայազգի իշխան Աղաթոն Դաւթեան ի 1850 ամի , և միւս երկուսն գրուած են Էջմիածնէն Թիֆլիզ դպրոցի վարչութեան վրայ ի 1855 ամի , Օգոստոս ամսուն մէջ : Ներսէս Կաթողիկոսն կախճանած է 1857ին , իսկ Պ. Շանշեան հրաժարած է դպրոցէն 1858ին , Սրբազան արքեպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ : Այս ժամանակագրութեան կողմանէ փաստաբանութեան տեղիք չկայ :

Բայց Սարգիս սրբազանն կասէ որ , առաջին կոնդակն ապացոյց է , որ Պ. Շանշեան գործակից չէ կամեցել ընդունել ուսումնարանի կառավարութեան մէջ և առաջին հրաւիրանաց ժամանակ չէ շարունակել տեսչութեան պաշտօնն : Մենք էլ կասենք և մեզ հետ բոլոր Թիֆլիզեցիք , որ Պ. Շանշեանն իրաւունք ունէր իր պաշտօնն չշարունակել 1850ին , իր գործակիցներուն պատճառաւ . վասն զի , թէպէտ իր գործակիցներուն մէկն իշխանագն Արղուծինսկին էր և երկուսն ազնուազգի Խերոդինեան և Մանդինեան , բայց դաստիարակութեան բոլորովին անհմուտ էին և երկուսն լոկ վաճառականք , վրացերէն լեզուով հաշիւ պահող (*) և փոխանակ ուսումնարանի ելեմտական և տնտեսական մասն կառավարելու , որոյ համար նշանակուած էին , սւսումնական և ուսուցչական գործքերուն կը խառնուէին և կը խանգարէին : Սակայն վերջը իրենց թե-

(*) Մեկ օր զիշերօթիկ աշակերտները այս գործակիցներու մեկէն կը խնդրեն աշխարհագրական Ատլաս գնել իրենց համար , կը բարկանայ և կը յանդիմանէ թէ « աշակերտն ինչ , ատլասն ինչ . » կարծելով թէ ատլասէ հագուստ կուզեն :

բուժիւնը զգացին և թախանձանաց զիր զրելով առ Պ. Շանշեանն ի Պետերբուրգ, վերստին հրաւիրեցին և ուսումնական մասն կառավարելու լիակատար իշխանութիւնն նորան յանձնեցին, կամօք և հաստատութեամբ Ներսէս Կաթողիկոսին, որ և կառավարեց մինչև 1858 թուականը:

Բայց Սարգիս սրբազանն կասէ որ՝ այս կառավարութեան ժամանակ լսելի են եղած Ս. Հայրապետին ի Ս. Էջմիածին « ի հասարակական համբաւոց շնչիւնք, իբր զի յառաջադէմ աշակերտք ուսումնարանի անհաւանք գտանին զբուժեանց գերարժան հեղինակաց Հայոց . . . իբր զի տկարութեամբ կատարելութեան գիտութեանց աստուածաբանութիւնք կամ այլ շարադրութիւնք նախնեաց Հայոց չեն այնպէս կատարեալք » և այլն: Բայց մենք էլ կասենք, որ հասարակական կամ փողոցական համբաւներու մէջ աստուածաբանական գիտութեան և գերարժան հեղինակաց բաղդատութիւնք չեն կարող լինել, ուրեմն Սրբազանն ինք էր որ այս ժամանակ Էջմիածին էր և իբրև աստուածաբան համբաւներ կը հաղորդէր Ներսէս Հայրապետին, և այս համբաւներն ինքնահնար էին, վասն զի ուսումնասէր Հայրապետն ինքնին Թիֆլիզ գալով, վերահասու եղաւ, ստուգեց և տեսաւ, որ այդպիսի համբաւներ չկան, ոչ Թիֆլիզի մէջ և ոչ դպրոցի, ուստի և մինչև իր կենաց վերջին դառն օրն՝ սիրեց, զգուեց և խնամեց թէ աշակերտներն և թէ իրենց առաքինի տեսուչն Պ. Շանշեան, և մահն իր զրած կոնդակներէն երկու տարի յետոյ պատահեցաւ, և Պ. Շանշեան Հայրապետի մահուանէն մի տարի յետոյ հրաժարեցաւ՝ երբոր սրբազան Սարգիսըն առաջնորդ դարձաւ: Հրաժարման պատճառն էլ այն էր, որ նոր առաջնորդը խորհուրդ հրաւիրելով, դպրոցի երեք հոգաբարձուները, Էջմիածնի Պրօքուրօր Միրաքեանն, վարժարանի աւագ ուսուցիչները Պատկանեանն ու Կարենեան և զտեսուչն Պ. Շանշեան, առաջարկեց փոփոխել այն պրօգրամէն, որ՝ որպէս վերջին կամք Հիմնադրին՝ ստորագրուած և վաւերացած էր առաջուց, և Շանշեանն փոփոխութեան անհամաձայն գտնուեցաւ, և մնաս բա-

րով ասելով՝ միւս օրը իր հրաժարականը ուղարկեց Կաթողիկոսական Տեղապահին ի Ս. Էջմիածին ,

Բ. Սրբազան Ս. արքեպիսկոպոսն երեսակայութեամբ ստեղծաբանելով մի կարգ մարդիկ և Շանշիական կուսակցութիւնք կամ համախոհք անուանելով՝ անդադար կը կրկնէ , որ նորա են իր վրայ եղած տարաձայնութեանց և ձախորդութեանց պատճառն : Բայց թէ ոյք են այդ մարդիկը , ոչինչ յայտնի չէ որոշակի : Արդեօք Ներսիսեան դպրոցի մեծագումար ժողովականքն են , որոնք իւր առաջնորդութեան ժամանակ ազգային վարժարանի հաշիւն կամեցան տեսնել : Արդեօք Եղիազար և Մակար արքեպիսկոպոսներն են . որոնք Էջմիածնէն պատգամաւոր եկան դպրոցի մասին ծագած խռովութիւններն անդորրացնել և նոր Հոգաբարձուներ հաստատել Մատթէոս Կաթողիկոսի կոնդակով : Արդեօք Թիֆլիզու Հայազգի հասարակութիւնն է , որ ահագին բողոքագրով սրբազան Ս. արքեպիսկոպոսին վիճակաւորութենէ հանեց . բայց ոչ ապաքէն այս բոլոր անցքերու ժամանակ Պ. Շանշեանն Պետերբուրգ էր և ոչ ի Թիֆիզ : Սարգիս արքեպիսկոպոսն մինչև ցայսօր գտնած է արդեօք մի ամենադոյզն ապացոյց , մի վրէժխնդրութեան նշմարանք , որով Պ. Շանշեանն զրկանք լինի հասուցած նորա կոչման կամ պատուոյն , քնւ լիցի , վասն զի ամենուն յայտնի է Շանշեանի աննման առաքինութիւնը , որ ամենայն վեհանձնութեամբ կարէ իր անիծողները օրհնել , իր թշնամիները սիրել և իր հալածիչներու վրայ աղօթել : Բայց Ս. արքեպիսկոպոսն , եթէ ձեռքը կուրծքին դնէ , չէ կարող ուրանալ այն զրկանքները և զրպարտութիւնները որ հասուցած է Շանշեանին :

Սարգիս սրբազանն չէ կարող ուրանալ , որ ինքն էր Ներսիսեան ուսումնարանի յառաջադիմութեան դէմ մատնութեան առաջին և վերջին քար ձգողն , համբաւելով որպէս թէ բողոքականութիւն կը քարոզուի նորա մէջ , որոյ անհեթեթ ստութիւնը ժամանակը նշաւակեց : Սարգիս սրբազանը չէ կարող ուրանալ , որ իր առաջնորդութեան ժամանակ ինքն եղաւ պատճառ Պ. Շանշեանի հրաժար-

ուելուն , աշակերտաց ցրուելուն և Ներսիսեան դպրոցի տարիներով յետադիմելուն , վասն զի Շանշեանի տեսչութենէն անչափ զոհ էնն թէ Ներսէս Կաթողիկոսն և թէ բովանդակ Հայք Ռուսաստանի , որոց որդիքը զանազան քաղաքներէ գումարուած էին նոյն դպրոցին մէջ :

Սարգիս սրբազանն չէ կարող ուրանալ , որ անուղղակի կերպով ինքն եղաւ նոյնպէս Ղարաբաղու դպրոցի խանգարման պատճառն , վասն զի Շանշեանի հրաժարուելուն պէս՝ ինքն նոյն վիճակին առաջնորդ դարձաւ և մինչև ցայսօր նոյնը կը վարէ :

Սարգիս սրբազանն չէ կարող ուրանալ , որ իր ուղղակի կամ անուղղակի քաջալերութեամբն է , որ Չամուրճեան պատուելին ըստիպուած է ծամածռել և քաշքշել այն քրիստոնէական դասագիրքը , որ Կրօնական Ժողովն չորս ամիս քննեց , ընտրութեանը վկայեց և տպագրութենէն յետոյ աշխարհ ամենայն հաւանեց , բաց ի պատուելի Չամուրճեանէն , որ բոլոր Հայոց ազգի մէկ հատիկ ուղղափառն է :

Սարգիս սրբազանը չէ կարող ուրանալ որ դարձեալ իւր քաջալերութեամբն է , որ իր մտերիմները , հայկական գրոց քննիչ Տ. Ղազարն և Պ. Կարենեան , առանց Ս. Մակար առաջնորդի հանութեան , չորս ամսէն աւելի է որ քննութեան պատրուակաւ Թիֆլիզի մէջ բանտարկած ունին նոյն քրիստոնէական դասագրքի 500 օրինակն , որ մի գուցէ ժողովուրդը կարդայ և այն անձանց ամօթալի մերկութիւնը տեսնէ , որոնք պարզամիտները պատրելու համար անդադար որոմն կը ցանէին թէ Պ. Շանշեանը բողոքականութիւն կուսուցանէ , և մի գուցէ իրենք իրենց ունեցած պատուէն էլ զըրկուին՝ փոխանակ մեծ պատուի հասնելու :

Վերջապէս Սարգիս սրբազանն չէ կարող ուրանալ , որ նոյն իսկ այսօր իւր բողոքագրի հրատարակման պատճառն այնքան իւր անձն արդարացնելն չէ , որչափ Պ. Շանշեանի անունն արատաւորել : Այս բանի հաւաստի ապացոյցն այն է , որ 1864ին առաջարկուած և առանց ուշադրութեան մնացած բողոքագիրն այսօր կը հրատարակուի , և արտաքոյ բողոքարկութեան նպատակին Պ. Շանշեանի

անունն կը հայհոյուի, և զրպարտութեան համար երեք կոնդակներ յաւելմամբ և թիւը մեկնութեամբ հանդերձ կրկին կը տպագրուին: Սարգիս սրբազանն եթէ դատ ունէր Պ. Փափագեանի հետ, ուղղակի իր դատն պէտք է վարէր և ոչ թէ վայրապար Շանշեանի անունն յիշէր և զրպարտէր: Արդարութեան փառաբողն չպէտք է ուրիշի արդարութիւնն ջարձար, թոնակոխ առնէ, վասն զի ինչպէս ամենուն, նոյնպէս և Սարգիս սրբազանին այնպէս կը պատուիրէ Աւետարանն. « Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա, զի այն իսկ են օրէնքն և մարգարէք: (Մատ. է. 12.) »

ՔՐՈՒԹԻՒՆՔ

Անկարգաւ կը դնենք այս տեղ Լարաբաղու ազգայնոց աղերսական գրութիւնքն առ Կաթողիկոսն, զորս յիշած ենք 7 երեսին մէջ, և ընթերցողաց դիւրութեան համար՝ կաւելցնենք համառօտ բացատրութիւններ իւրաքանչիւր գրութեան սկսուածքէն առաջ:

Պատասխանագրութիւն Ա. Այս գրութեան մէջ կը տեսնուի, որ դպրոցի հոգաբարձուքը առանձին կոնդակ ստանալով Կաթողիկոսէն պատկառելեն բացերեակի յայտնել Տեսչին և որպէս զի դպրոցի անդորրութիւնը չվրդովուի լռելեայն պատասխանել են այնպէս:

Վեհափառ Տէր.

Արբատառ կոնդակ Ձերդ վեհափառութեան յանուն վիճակատրին տեղւոյս ի 10 մայիսի յայտնեցաւ հոգաբարձութեան և քննեցաւ խո-

րին ուշադրութեամբ, այնու ուշադրութեամբ, զոր վայել է ունիլ հաւատարիմ և երախտագէտ որդւոց Ձերոց և Սոաքելական սուրբ Յկեղեցւոյ: Ի հանգամանս զծագրեալս ի նմին կոնդակի, ոչ կարեմք թագուցանել ի Ձերդ վեհափառութենէ թէ՛ յընթեռնուլն մեր ըզ սուրբ կոնդակ զայն՝ սիրտք մեր վիրաւորեցան ի խոր խոցեալ և լցան յիրաւի դժգոհութեամբ առ այն անձինս, որք ոտնակոխեալ զսպառիւ ազգային և զխղճմտանս և մոռանալով իսպառ զՀայ անուն համարձակեցան զրպարտել զանձն, որոյ նմանն, ի դժբաղդութենէ մերմէ կամ բոլորովին չիք յազգի մերում, կամ են, այլ յոյժ սակաւք այն է, զՊ. Շանշեանց, և այս ոչ միայն ուղղակի ստգտանք առ այդպիսի անձն յանբարեմտութիւն, այլ և զմտաւ ածելն կամ սակաւ իւրիք երկմտելն վասն նորա է միանգամայն սրբապղծութիւն, նոյնպէս և մեծ անիրաւութիւն առ մարդ զարդարեալ ճշմարիտ քրիստոնէական բարոյականութեամբ և առաքինութեամբ, որպիսի է Շանշեանց, վասնորոյ մեք հարկադրեալ գտաք զայս թախծեալ անցս մեղադրանաց նորա պահել ի խորին դանխլութեան, վասն զի յայտ ածումն այդպիսի զրպարտութեան կարէ բերել միայն ամօթ և անպատուութիւն բոլոր բարեմիտ Հայոց, նա մանաւանդ Ղարաբաղցւոց, ուսումնասէր Ղարաբաղցւոց:

Սեք պարտ անձին համարիմք ներկայացուցանել առաջի Ձերդ վեհափառութեան թէ՛ բոլոր հաւատարիմ որդիք Ձեր բաղդաւոր զինքեանս համարեն և պարծին, այնու զի ունին ի միջի իւրեանց զայնպիսի անձն որպէս է Շանշեանցն, որ է կատարեալ դիմառնութիւն առաքինութեան, և բարձր զնա գասեն քան զսեպհական երջանկութիւն իւրեանց: Եթէ հարկ է դաստիարակել զմտերիմ որդիս եկեցեցւոյ և հայրենեաց, եթէ հարկ է տալ նոցա զհոգի գիտութեան և զընթացս ըստ ցանկութեան հայրական սրտի Ձերդ վեհափառութեան՝ ընդունակս յանձնազոհութեան վասն հայրենեաց, եթէ հարկ է ճշգրիտ լուսաւորութիւն, միով բանիւ եթէ հարկ է կրթել հայ մարդիկ, վստահաբար կարեմք ասել վասն այդր նպատակի չիք այլ ոմն բաց ի Շանշեանցէ, գտանիլն որոյ աստ, որքան յայտ է մեզ, և անձնազոհութիւն ի կողմանէ նորա. բայց եթէ հարկ է յանդունդս արկանել զթանկագինն Ձերդ վեհափառութեան և մեր սրտի զգրարոցն ընդ նմին և զյոյս մեր, և արկանել զՂարաբաղցիս ի յաւիտե-

նախան խաւար և ի ստրկութիւն, յիրաւի սլարտ է հեռացուցանել
աստէն փութանակի զՇանշեանց, վասն զի լոկ գտանելն նորա աստ,
թէ և առանց պաշտօնի, է լոյս ի փարատ տգիտութեան կամ լաւ ևս
ասել՝ մաքառումն լուսոյ ընդ խաւարի: Ժողովուրդ մեր ցանկայ
ունիլ զուսումնարան և ընտրեալ է զմեզ առ ի վարել զգործս նորա
և տանել զնա առ ի նախասահմանեալ նպատակ լուսաւորութեան:
Որպէս հաւատացեալք ի հասարակութենէ և գործակատարք նորա
մեք քննելով զամենայն պարագայս և հայեցեալ շուրջանակի՝ պար-
տիմք ասել, թէ Շանշեանց և լուսաւորութիւն, կամ Շանշեանց և
ուսումնարան են հարմարեալ և մի առանց միւսոյ ոչ կարէ կեալ,
քանզի Շանշեանց է անփոխարինելի, ապա ուրեմն ի հեռանալն նո-
րա պարտիմք հեռանալ և մեք, զի յայնժամ ուսումնարանն փակեա-
ցի և մեզ ոչինչ մնայ գործել և ոչ իմիք ծառայել. հինգամեայ փորձ
ստուգիւ հաստատեալ է զմեզ յայսմ դատողութեան, թողումք ասել
զի Շանշեանց ունի զայնպիսի կարգ հեղինակական առաջի Հայ ազ-
գի ուսումնականաց և բարեխոհ մարդկան, և յայտ է առաքինի վա-
րուք իւրովք, զի ի հեռանալն նորա աստէն մեք բոլորովին կորու-
սանիցեմք զհամարումն և զհաւատ, և չիցէ մարթ մեզ գտանել ըզ
սակաւ ինչ արժանաւոր վերատեսուչ՝ որ յօժարեացի գալ առ մեզ
ի նոյն պէտս:

Մեք չ'կարեմք անտարբեր հոգով հայել ի կործանումն տաճարի
լուսաւորութեան, որ ամփոփէ յինքեան զանթիւ աւանդս սարա-
գայ բարօրութեան ազգի: Բայց չ'իք գործողութիւն առանց պատ-
ճառի, ուրեմն ծնանի հարցումն: Եթէ ճշմարիտ է, զի Շանշեանցն
է անձն օգտաբեր և իսկ հայ, զիմք ծագին ձայնք ընդդէմ նմա:
Ձննելով զհարցմունս զայս՝ մեք հաւաստի եմք, զի արարք չարախօ-
սացն զՇանշեանցէ է աղտոտ զրպարտութիւն և զրգռումն նոցա ա-
մենեին անարգ: Աղբիւր այդր զրգռանաց յայտ է մեզ: Այն է՝ զոն
աստ քանի մի անձինք անբաւականք զՇանշեանցէ, մեք ճանա-
չեմք զնոսա և կարեմք անուանել մի ըստ միողէ: Անձինք այդոքիկ
զրպարտիչք, որք պատրաստ են զոհել զամենայն ինչ ազգային ի
կորուստ՝ անձնական շահուց իւրեանց, ցգալն այսր Շանշեանցի,
հարկիւ պարապէին ի դասատուութեան յուսումնարանի ստանալով
զուոճիկս: Նոքա էին դասատուք, վասն զի չէր մարթ գտանել զար-

ժանաւոր ուսուցիչս, արժանաւորք չյօժարէին զալ այսր, եղանակ
և կերպ ուսման, որք ի հերուն հետէ համարին անօգուտ և ոչ զոր
ոչ իւրք ուսուցանէին: Զայդպիսի դասատուս որք լիովանակ' բանա-
լոյ զմիտս աշակերտաց կուրացուցանէին զաչս մտաց և հոգւոյ նոցա
ի հարկէ Շանշեանցն ոչ կարէր թողուլ յուսումնարանի. վասնորոյ
հեռացուցանելով զնոսա կոչեաց ի տեղի նոցա զայլս ի զանազան
տեղեաց, որք եկին այսր հնազանդելով մի միայն կամաց և ցանկու-
թեան Շանշեանցի: Վերոյիշեալ անբաւականք՝ որք պատրաստ են
վաճառել զճշմարտութիւն միոյ դահեկանի անարգի, կազմեալ են ըզ-
խումբ հակառակորդաց, հանդերձ քանի մի անձամբք ի ժողովրդա-
կանաց, յայտնի անհաշտ թշնամեաց լուսաւորութեան, առաւել ևս
Ղարաբաղու ուսումնարանի: Զեն սոքա այնպիսի անձինք, որք
յանուն ճշմարտութեան խօսին բացայայտ և բացարձակ ի հրապա-
րակի, այլ սոքա այնպիսի անձինք են, որք հարկադրեալ՝ պարտ են
ի գործ դնել զանարժան և զթքանելի խորամանկութիւն, ընտրելով
զանազան ստգտանելի և արհամարհելի հնարս առ ի հասանել կոր-
ծանիչ նպատակի իւրեանց, նոքա պարտին գործել դոյնպիսի եղա-
նակաւ, վասն զի դիտաւորութիւն նոցա չարէ և բացամերժող լուսոյ
և սիրոյ:

Զրպարտողք բոլորովին ոչ խնայեսցեն, եթէ մեք լիցուք ինք-
նասպան, նոքա ուրախասցին առաւել ևս, եթէ պանծալի գործ
ձեռաց ձերոց, որ է պարծանք ազգի և զլսոյ նորա՝ ձերդ վեհա-
փառութեան՝ անկանիցի անդարձ յօրինեալ նոքումք յոստայնս.
այլ մեք պատրաստ նմք մարտնչիլ ընդդէմ անիրաւութեան, ար-
թուն կամք և նախագոյն գիտեմք զգաղափարս նոցա մինչ ի գործ
դնելն զնոսա: Մեք աշալուրջ հայիմք շուրջանակի, մեք վկայ եմք
վարուց, մտածմանց և գործողութեանց Շանշեանցի և ձեռս ի սըր-
տի եղեալ համարձակ տսեմք՝ զի է նա բարի մարդ և բարի քրիս-
տոնեայ ըստ զճազրելոյն Զերդ վեհափառութեան ի մատենի Զե-
րում. բայց միայն չէ զարմանք, զի նա ենթարկի հալածանաց՝
քանզի ի պատճառս ապարադղութեան մերոյ, ժողովրդականք
մեր չեն հասեալ յայն աստիճան կրթութեան, զի ի միջի նոցա զըտ-
ցին ճշմարիտ գնահատողք արժանաւորութեանց Շանշեանցի, որ-
պէս և ի հնումն չկարէին ճանաչել զգործս սրբոյ հօրն մերոյ Մով-

սիսի Սորենացւոյ, թշնամիք որոյ չյագելով հալածանօք նորա ի կենդանութեանն, այլ և յետ մահու ևս զքէն ազտոտ խորհելով զնրմանէ ի բաց հանին զոսկերս նորա և արկին ի ջուր : Մէք հաւատարի եմք, զի բերկրեցուցուք զհայրական սիրտ Ձեր վեհափառութեան, եթէ ունիցիմք բազդ տեսանել զսուրբ հայրդ ի միջի մերում ի Ղարաբաղ և ցուցանել անձամբ անձին զխակական դրութիւն գործոց : Մէք քաջայոյս եմք, զի յայնժամ աի ի բերան և կոր ի զլուխ լիցին ամենայն հակառակողք, որք շփոթեն զժողովուրդ ունելով միջոց հաղորդել Ձերդ սրբութեան ի հեռուստ զգործս տեղւոյս խարէութեամբ և խարդախ ոգւով :

Արդարեւ՝ երբեմն Շանշեանց հրաժարեցաւ ի Ներսիսեան դպրոցէ, բայց զնա ոչ էր հրաժարեցուցեալ երջանկայիշատակ պատրիարք Վաթողիկոսն Ներսէս, որ ընդ հակառակն բազումս համոզէր զնա մնալ, այլ հրաժարեաց զինքն հոգի նորա, յետ մահուանն Ներսիսի, որ չկարէր տեսանել և տանել զմատնողական գործողութիւնս Հոգաբարձուաց յափշտակողաց, որք հոգային միայն սակս գրպանաց իւրեանց : Տփխիսեցիք այժմ ևս խնդրեն զՇանշեանց և տարածեալ սպասեն նմա, այլ նա մերժէ զթախանձս նոցա :

Վստահ եմք, զի Ձերդ Վեհափառութիւն և ընտրող զմեզ ժողովուրդ ընծայեն մեզ հաւատ, վստահ եմք թէ ոչ որ զմտաւ ածիցէ, զի մեք յանձն առեալ զամենածանր պատասխանատուութիւն ցուցուք զանհոգութիւն և անիրաւութիւն առ Շանշեանցն և կործանեցուք զուսումնարան : ապա ուրեմն ձայն մեր է ձայն հասարակաց և պարտ է լսիլ, բայց եթէ ոչ լուիցի, յայնժամ մնայ մեզ լուանալ զձեռս մեր և թողուլ զպաշտօն Հոգաբարձութեան, զի մի լիցուք հաղորդ գործողութեան, որ անշուշտ անուանեսցի մարդասպանութիւն :

Եթէ Ձերդ Վեհափառութիւն հաւատայ յորդիական սէր մեր առ Ձեզ և ի հաւատարմութիւն առ առաքելական եկեղեցի Հայաստանեայց, մարթէ մեզ յուսալ զի ընդունելի գտցի այս առաջարկութիւն մեր վասն թողլոյ զՇանշեանց ի պաշտօնի վերատեսչի դպրոցի և սուրբ կոնդակաւ Ձերով մխիթարեսցիք զմեզ, այնու զարդարիցի տնկեալ ի Ձէնջ պարտեզ լուսաւորութեան, որ կոնդակաւ բերիցէ

սլարժանս մեզ , իսկ զըսլարտողաց զամօթ և զանարգանս յաւիտե-
նականս , տհա , այս է մեր ճշմարիտ կամք և ճշմարիտ դատո-
ղութիւն :

ի 10 Յունիսի 1864 ամի Շուշի :

Հոգարարձուք

ԲԱՆԱ ԲԵԳ ՄԵԼԻԲ ԴԱՐԱԳԵՕԶԵԱՆ .

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԲԵԳ ՍԱՐՈՒԽԱՆԲԵԳԵԱՆ .

ՍԱՐԳԻՍ ԲԵԳ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ .

ԳԱՐԻԷԼ ԱՂԱՄՍԼԵԱՆ .

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԽԱՉՍՏՈՒՐԵԱՆ .



Պատասխանագրութիւն Բ. Առաջին գրութեան պատասխան չ'ըս-
տացած՝ յանկարծ քաղաքի մէջ կը զարթնու մի անակնկալ յուզ-
մունք , որոյ պատճառները նկարագրուած է յետագայ Գ. Դ. և Ե.
գրութեանց մէջ և ընտրեալ պատգամաւորաց ձեռքով հաղորդուած
է Կաթողիկոսին :

Վեհափառ Տէր .

Տեսնելով քաղաքիս մի քանի չարագործ անձանց դարանագոր-
ծութիւնները Ուսումնարանի կործանման համար , և իմանալով թէ՛
ինչպէս այս տեղ են նենգ հնարքների դիմում իրանց Թիֆլիզի
վազուց յայտնի չար խրատտուների թելադրութեամբ , նոյնպէս և
պէտք է պղտորեն անշուշտ Ձեր հայրապետական սիրտը , Հոգա-
բարձութիւնս ի 12^ն Հոկտ. սոյն ամի յայտնեց Ձեր Վեհափառու-
թեան իրանց եղելութիւնը : Բայց մինչդեռ խաղաղութեան էինք
սպասում և կարծում էինք թշնամոյ դարանագործութիւնները մեր-
կապարանոց Ձեր վեհ նկատողութեան առաջ դրած , յանկարծ խան-
գարուեցաւ ակնկալեալ խաղաղութիւնը՝ մի անակնկալ անցքով :
Յայտնի ոսոխներից մինը , Վարապետ Բհաղրեան , որոյ ազգականն

Մարկոսն Թիֆլիզից սրատրաստուած գալով՝ խռովութեան առաջին ձայն տարածանողն եղաւ այս տեղ), ամսոյս 8 ին կիւրակի օրն քաղաքիս հրապարակում հայնոյում է Ուսումնարանի երգեցողութեան ուսուցչին, սպառնալով և խրոխտալով թէ Վաթողիկոսից կոնդակ է եկել. ինչո՞ւ չե՞ք հեռանում կորչում Ուսումնարանից, և մինչև այնտեղ գազանանում է, որ վայտով հարկանում է ուսուցչին բազմութեան առաջ :

Հոգաբարձութիւնս ստանալով այս անախորժ լուրն, քաղաքական Գլխոյ տնօրէնութեամբ յայտնեց քաղաքիս երեւելի անձանց, որ վիճակաւորի մօտ ատեան կանչուի յանցաւորը և դատաւարտուի հրապարակաւ, որ ընդհանուր Վաթողիկոսի կոնդակի անուամբ, հալածանք, ծեծ և մարդասպանութիւն է ազազակում փողոցումը, էն կոնդակի, որ տակաւին Հոգաբարձութեանս յայտնի չէր և Ուսումնարանի ոսոխը հրապարակումը քարոզում էր : Այն ինչ բազմութիւնը ատեան խմբեցաւ դատ սրահանջելու այս ապօրինի անցքի համար, թէ ո՞յք ոմանք են, որք մոլորութիւն են տեսնում Ուսումնարանի մէջ և ինչ մոլորութիւն է, որոյ անուամբ մի քանի դարանագործներ ջանահնար են լինում վրդովել Ուսումնարանի խաղաղութիւնը, վիճակաւորը չ'կամեցաւ լսել քաղաքացիների սրահանջմունքը, չ'կամեցաւ հրապարակաւ կոչել հակառակորդներին, քննել գործը, յայտնել խռովութեան ծագումն և խռովարարներին, և անդորրացնել բազմութեան ազմուկը, և իրան գլուխը ազատ կացուցանելու համար, հանեց իսկոյն և կարդաց Ձեր Վեհափառութեան կոնդակը, էն կոնդակը, որ վիճակաւորի շնորհիւ Ուսումնարանի հակառակորդը քարոզում էր հրապարակում և Ուսումնարանին տակաւին անյայտ է, էն կոնդակը, որ քաղաքի վրդովմունքից յետոյ միայն ստացաւ անձ Հոգաբարձութիւնս և դառնութեամբ սրտի գրում է իրան պատասխանն :

Վեհափառ Տէր, Արդարութիւնը պահանջում է որ դատ լինի զրկելոյն և պաշտպանութիւն իրաւանց : Արդարութիւնը պահանջում է, որ ամենայն ճշմարտութիւն քարոզուի յսկանջս ամենեցուն և ամենայն ստութիւն հրապարակաւ խայտառակվի : Արդարութիւնը պահանջում է, որ լոյսը և լուսաւորութիւնը պաշտպանվի և խաւարն հալածվի : Արդարութիւնը պահանջում է որ արդարն վարձ ստանայ և

յանցաւորն պատիժ : Արդարութիւնը պահանջում է, որ այս ամենայն խռովութեանց և տարածայնութեանց պատճառներն խստիւ քննուին և ժողովրդեան խաղաղութիւնը պաշտպանուի : Աւտի և հոգաբարձութիւնս, որպէս ազգից ընտրեալ պաշտպան լուսոյ և լուսաւորութեան, որպէս վրէժխնդիր ամենայն դարանագործութեանց, որպէս տէր և պահապան իրաւանց Աւսումնարանի, որպէս խնամակալ երջանկութեան մանկանցն Հայաստանի, անհրաժեշտ պարտք է համարում իրան, և այն պարտաւորութեամբ վստահանում է յառաջ բերել լուծելու մի քանի կարևոր խնդիրներ և հասարակաց խաղաղութիւնը կանգնել :

Վեհափառ Տէր, Սինօզն Ձեր հրամանաւ գրում է թէ՛ եկեղեցականներից պէտք է լինի կրօնի դասատուն : Բայց միթէ կոյ մեր քաղաքի մէջ մի արժանաւոր դասատու եկեղեցականներից և մենք չենք ցանկանում նորա դասատուութեանը : Մենք երջանիկ կը համարէինք մեր անձը, որ այնպիսի մի եկեղեցական լինէր մեր մէջ և կարողանայինք մեր մանկանց սիրտը և հոգին նրա դաստիարակութեանը հաւատալ : Բայց մեր քաղաքի հոգևորականները մեզ քաջ յայտնի են, վիճակաւորից սկսած մինչև յետին տիրացուն, յայտնի են ոչ թէ միայն այսօր, այլ տարիներով, այլ բազմադիմի փորձերով, և նրանցից ոմանք՝ թէպէտ ժամանակով ուսուցիչներ են եղել, բայց ոչինչ նշանաւոր արդիւնք չեն յառաջ բերել իրանց դասատուութեամբ : Նւ այս իսկ ցաւն է՝ որ մենք աշխատում ենք ապաքինել : Այս իսկ նպատակն է, որ ունի Աւսումնարանն իրան առաջին, այն է գոնէ այսուհետև արժանաւոր հոգևորականներ պատրաստել ժողովրդի համար, աղ պատրաստել, վասն զի անհամայն է տգէտ և անբարոյական հովիւների շնորհիւ : Մենք չունինք, ասում ենք, այս տեղ դաստիարակութեան կոչման արժանի հոգևորական, բայց եթէ Ձեր Վեհափառութիւնն ունի, եթէ Ձեր Վեհափառութիւնն ճանաչում է մի հոգևոր անձն, որ համապատասխան լինի մեր ցանկութեանը և ուսումնարանի նպատակին, թող ուղարկէ, բայց է նորա համար Աւսումնարանի գիրկը, պատրաստ է և Հոգաբարձութեան սիրալիր ընդունելութիւնը :

Վեհափառ Տէր, եթէ չկայ մեր մէջ մի արժանաւոր անձն հոգևորականներից կրօնի դասատուութեան համար և նոյն ուսումնաւարտ

խարհականներէրից մի արժանաւոր ուսուցիչ է մատակարարում Աւսումնարանի մէջ, այն է Պ. Շանշեանցն, սրանով ինչ յանցանք է գործում Հոգաբարձութիւնս և և Աւսումնարանն ընդդէմ հաւատոյ և ընդդէմ Հայաստանեայց եկեղեցւոյ: Սուրբ Գիրքն է արգելում արդեօք աշխարհականին՝ քրիստոնէութիւն սովորեցնելու: Հայաստանեայց եկեղեցին է արգելում արդեօք իրան աշխարհական որդւոյն իրան ուսմանն և պայծառութեանն սպասաւորելու: Հայաստանեայց եկեղեցւոյ Հարց կանոններն են խարդեօք քրիստոնէական ուսումը, եկեղեցւոյ վարդապետութիւնը երկու բաժանում աշխարհական և հոգևորական: Միթէ Հայաստանեայց եկեղեցին մի ուսումն, մի վարդապետութիւն չէ քարոզում, իւր թէ եկեղեցական և թէ աշխարհական որդւոցը, և միթէ ամենի վրայ միևնոյն պարտքը չէ դնում իրան ուսման տարածութեան և իրան պաշտպանութեան համար: Միթէ Հայաստանեայց եկեղեցին սրհամարում է և չէ տօնում Տրդատին Գրիգոր Լուսաւորչի հետ, Վարդանին Ղևոնդի հետ, այլովք հանդերձ: Եթէ մեր եկեղեցւոյ հոգին այսպէս կապում է մեզ միմեանց հետ. եթէ այս հոգւով ապրել է նա այսքան դարեր, եթէ այս հոգւով, այս անքակ միութեամբ պատերազմել է բիւրաւոր բռնութեանց և հալածանաց դէմ, ինչո՞ւ պէտք է մենք այժմ խտրութիւն դնենք մեր մէջ օտարոգի և նորամուտ մոլութեամբ, ինչո՞ւ պէտք է քակենք այս սուրբ և իսկ քրիստոնէական, առաքելական և հայրապետական հոգւով հիւսած կապը: Ով՞ է աշխարհականը և ով հոգևորականը, ո՞չ ապաքէն երկուսն ևս որդիք եկեղեցւոյ են, որոց վրայ պարտք կայ առ հասարակ նրա պայծառութեանն սպասաւորելու և նրա պաշտպանութեան համար հսկելու:

Վեհափառ Տէր, մեր եկեղեցին կրօնի դաստիարակութեան համար այսպիսի մի խտրութիւն չէ անում, երջանկայիշատակ Ներսէս Աթոռիկոսն ինքն էր հրաւիրել Պ. Շանշեանին և տարիներով լսում էր, ո՞չ միայն Շանշեանի դասախօսութիւնները, ո՞չ միայն աշակերտաց քննութեան պատասխանները Աւսումնարանում, այլ և աշակերտաց քարոզները եկեղեցումը լսում էր և քաջալերում: Ձեր Վեհափառութիւնը ի՞սկզգանէ չէ արել խտրութիւն որովհետև ինքն է օրհնել և հաստատել Պ. Շանշեանին. Հոգաբարձութիւնը

չէ անում, որովհետեւ ինքն է հազարաւոր մղոններից հրաւիրել Պ. Շանշեանին և ուրախ է նրա դաստիարակութեան համար, բայց եթէ չար մարդիկ, եկեղեցւոյ և ազգի դաւաճան մարդիկ, Ուսումնարանի կործանման հետամուտ մարդիկ, տգիտութեան և խաւարի սպասաւորող մարդիկ՝ ջանահնար են լինում քակել Հայաստանեայց եկեղեցւոյ դարեւոր կապը և մի օտարոտի նորութիւն մուծանել, այդ գործն էլ պէտք է պարզուի, այդ դարանագործութիւնը պէտք է խայտառակուի հրապարակաւ և ոչ գաղտնի :

Վասն զի Դուք գրում էք, Վեհափառ Տէր, Ձեր Հայրապետական կոնդակում, թէ ձայն բազմաց ձայն Աստուծոյ է, և այս ձայնն պահանջում է, որ Պ. Շանշեանը հրաժարուի իրան պաշտօնից : Ներեցէք մեզ հարցնելու Վեհափառ Տէր, ո՞րն է այդ ձայն բազմացը, որ դուք Աստուծոյ ձայն էք համարում : Որ՞ տեղից է հասել Ձեր Վեհափառութեանը այդ ձայնը, ո՞րն է այդ բազմութիւնը և ինչ է դրա ձայնի նպատակը : Անստորագիր նամակների ձայնն էք համարում արդեօք, ձայն բազմաց. դա մի ձայն է, Վեհափառ Տէր, և ո՛չ բազմաց, դա ուրուականների և աներեւոյթ հրեշների ձայն է, որով զարթնում են միայն ուրուականները, ուրեմն և ո՛չ ձայն, այլ շչումն օձից : Վիճակաւորի ձայնն էք համարում արդեօք ձայն բազմաց : Վիճակաւորը Ուսումնարանի գործի մէջ ձայն ու կիս է միայն և ո՛չ բազմութիւն ձայնի : Բազմութիւն ձայնի համարվում է քաղաքիս մէջ Հոգաբարձութիւնս, որ ընտրուած է ազգի ձայնով, որոց ամեն մինը հարիւրաւոր ձայնից բովանդակութիւն է, և Հոգաբարձութիւնս երբէք չէ բարձրացրել առ Ձեզ մի անգոհունակ ձայն ընդդէմ Պ. Շանշեանի, այլ ընդհակառակն ամենայն զրաւոր հաղորդութեանց մէջ յայտնել է Ձեզ իրան խորին երախտագիտութիւնը և անպատմելի գոհունակութիւնը, որ այնպիսի բարի դաստիարակ և արթուն Տեսուչ էք հաստատել նորա համար :

Կայ արդեօք ուրեմն Ձեր Վեհափառութեան մօտ մի զրաւոր ձայն, բազմաթիւ անձանց ստորագրութեամբ, աղաչում ենք Ձեզ յայտնել Հոգաբարձութեանս ականէ յանուանէ, որ մենք յանուն ազգի խաղաղութեան և Ուսումնարանի անգորրութեան պահանջենք նրանցից թէ՛ ինչ բանի համար կամ ինչ ուսումնարանական թերութեան համար է : Արովհետեւ, մենք ատեան հրաւիրեցինք ամենին վիճակա-

ւորի մօտ, խնդրեցինք որ դէմ յանդիման հրապարակ դուրս գան և յայտնեն թէ ո՞յք են այդ բազմութիւն ձայնին, որոնք վրդովել են Ձեզ և Ձեզանով կամենում են վրդովել հասարակութիւնը, բայց ո՞չ ոք դուրս չ'ելաւ :

Վեհափառ Տէր, եթէ Ձեր կոնդակը հիմնում էք յայտնի բազմութեան ձայնի վրայ, յայտնի բազմութեան ձայնը այս տեղ պաշտպան է արդարութեան, պաշտպան է Ուսումնարանի բարեկարգութեան, պաշտպան է հրապարակաւ և պաշտպան է իրան իրաւունքներով : Իսկ եթէ հիմնում էք անյայտ բազմութեան ձայնի վերայ, արդարութիւնը պահանջում է, ազգը պահանջում է, որ յայտնվի այդ բազմութիւնը, քննուի թէ ինչ բազմութիւն է, ինչ հոգւով է վառւած, որովհետեւ այն ամբողջն էլ բազմութիւն էր, որ ազազակում էր ի խաչ հասն զդա, այն տիրանենգ գունդն էլ բազմութիւն էր, որից Ս. Գրիգոր և Տրդատ անապատներն էին խոյս տալի, այն դասն ևս բազմութիւն էր, որ նորումս ձայն էր տալի և բողոքում էր ազգին, որ գահավիժի իրան Վաթոգիկոսին :

Բազմութիւնը պէտք է որոշուի իրան ձայնով, Վեհափառ Տէր, էն ձայնն է ձայն Աստուծոյ որ քարոզում է սէր և ո՞չ երկպառակութիւն, էն ձայնն է ձայն Աստուծոյ, որ քարոզում է լոյս և ո՞չ խաւար, էն ձայնն է ձայն Աստուծոյ, որ քարոզում է արդարութիւն, և ո՞չ զրկանք և հալածանք. էն ձայնն է ձայն Աստուծոյ, որ ազազակում է շինութիւն Ուսումնարանի և ոչ կործանումն, էն ձայնն է ձայն Աստուծոյ, որ լսվում է մանկանց և ստնտեաց բերանից, աշակերտաց և ուսուցչաց բերանից ի փառս Աստուծոյ և ազգի: Այսպիսի ձայնը օրհնութիւն է, որով օրհնում են Ձեզ մանկունքը և ծնողքը : Այս ձայնը պէտք է Ձեր հայրութեանը հաճելի լինի և ոչ ձայն անիծից, ձայն վշտաց և հեծութեանց, ձայն տառապանաց և խառնակութեան :

Վեհափառ Տէր, Հոգաբարձութիւնս ականերև նշմարելով բազմութեան ձայնը, որ կոչվում է ձայն Աստուծոյ, ձայն ճշմարտեան և շուսաւորութեան, նշմարելով որ էն ձայնը Ուսումնարանի կողմն է, և ոչ ինչ համարելով մի քանի դաւաճան ուրուականների ձայն, որ ո՞չ այլ ինչ է, եթէ ոչ արձագանք ազգամատնութեան և դաւաճանութեան եկեղեցւոյ, որ Միհրութանից, Վասակից և վեստ Սարգ-

սից բարձրանալով՝ մեր ապարադդութիւնից հասել է մեր օրերը ,
 Հոգաբարձութիւնս պատրաստ լինելով ամենայն հոգւով յանուն
 ազգի և եկեղեցւոյ այս ձայների դէմ մաքառելու , քանի որ ոյժ և
 զօրութիւն ունի , դիմում է Ձեզ , Ձեզ՝ որ փոխանորդ էք Լուսաւորչի
 և լուսաւորութեան , Ձեզ , որոյ հովանաւորութեան տակ մինչև ցայս
 օր Լաւաբաղը դիմել է դէպի լոյս և ոչ դէպի խաւար : Հոգաբար-
 ձութիւնս դիմում է դէպի Ձեզ և պազատում է որ երեկեան խռովու-
 թեան մէջ չ'զլորէք Լաւաբաղը , որ հազիւ հազ անդորրացել է :
 Դիմում է Ձեզ և յայտնում է , ինչպէս և յայտնել է Յունիսի 10 , որ
 Ուսումնարան և Պ. Շանշեան համանուն են , մինն առանց միւսին
 պէտք է կործանուի , կործանուի , ասում ենք , և այնպիսի խռովու-
 թեանց առիթ տայ , որ գործը մինչև արիւնհեղութեան հասնի :
 Հոգաբարձութիւնս դիմում է Ձեզ և արդար խղճիւ , առաջի Աստու-
 ծոյ և մարդկան , յանուն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ , խոստո-
 վանում է , որ Պ. Շանշեանի դաստիարակութեան մէջ , Տեսչութեան
 մէջ , չէ նշմարած , որչափ և վերահասու է եղել նշոյլ անգամ մո-
 լորութեան , այլ ընդ հակառակն ոգի քրիստոնէական , ոգի սիրոյ
 և խաղաղութեան , ոգի պաշտպանութեան ազգի և եկեղեցւոյ , որոյ
 պատասխանն ի պաշտպանութիւն Աթոռիկոսութեան , աչքի առաջն
 ունի այսօր ամենայն անդամ ազգի : Վասնորոյ և առաքելով առ հայ-
 րութիւն Ձեր Պ. Շանշեանի դասական տետրակը , ազաչում է Ձեզ
 որ զննէք , համեմատէք մեր նախնի հարց վարդապետութեան հոգ-
 ւոյն հետ , Գրիգոր Լուսաւորչի , Ներսէս և Սարգիս Շնորհալիւների
 և այլոց , եթէ նրանց հոգուն հակառակ մի բան նկատէք , ուղղէք որոյ
 մասին հոգւով չափ ուրախ կ'լինի ինքն Պ. Շանշեանը , և վերադար-
 ձնէք մեզ շուտով տպագրելու և ամենայն խռովութեանց և գահա-
 վիժութեանց առաջն առնելու :

Բազմութեան ձայնը Հոգաբարձութիւնս է , Վեհափառ Տէր , բազ-
 մութեան ձայնն արդարութիւնն է , որ ցանկանում է Պ. Շանշեանի
 մնալուն իրան պաշտօնի մէջ և դաստիարակութեանն սպասաւորե-
 լու : Հոգաբարձութիւնս չէ ճանաչում ուրիշ բազմութիւն ձայնի ,
 բացի էն հասարակութիւնը որ սիրել է ուսումն , աշխատել է Աւ-
 սումնարանի համար , և հաւատացել է նրան Ուսումնարանը : Հո-
 գաբարձութիւնս չէ ճանաչում իրան վիճակաւորին , վասն զի , նա

ինքն հրապարակաւ յայտնեց որ չէ կամենում ճանաչել ոչ Հոգաբարձութիւն և ոչ Ուսումնարան . Հոգաբարձութիւնս չէ ճանաչում ուրիշ բազմութիւն և ուրիշ համոզմունք բացի արդարութիւնը և պահանջում է որ այս արդարութիւնը յայտնի ապացոյցներով, քրիստոնէական հոգւով, ճշմարտութեան լուսով քննուի, երևան դուրս գայ և ոչ թէ գաղտնի դարանագործութեամբ և դաւաճանութեամբ մատնվի յաւեր և ի կործանումն Ուսումնարանի և ի խռովութիւն և յաղտտամբութիւն բոլոր Ղարաբաղի :

15 Նոյեմբ. 1864

Հոգաբարձութեան

Գրուքիւն Գ. Այս է մի բողոք, որով ժողովուրդը բացարձակապէս կը բողոքէ առաջնորդ Քէորգ վարդապետ Արամեանի արարմանց դէմ և նոր առաջնորդ կը խնդրէ քաղաքի և Ուսումնարանի անդորրութեան համար: Իյուշ կ'ածէ խեղճ ժողովուրդ իւր մետրապօլիտները, պատգամաւոր կընտրէ և կուղարկէ ի Ս. Էջմիածին իւր որդւոց ապաստանարան դպրոցը պաշտպանելու համար: Կը տեսնէ, որ լռելու ժամանակն անցած է, ուստի կաղաղակէ և կը թախանձէ:

Վեհափառ Տէր

« Ժամանակ կայ լռելու, ասում է Սողոմոն իմաստունը, ժամանակ խօսելու, ժամանակ սիրելու, ժամանակ ատելու: » Ժամանակ կայ, Վեհափառ Տէր, որ լուսթիւնը կը համարուի դաւաճանել ընկերսիրութիւնը, դաւաճանել ազգի և եկեղեցւոյ հոգեւոր և բարո-

յական օգուտը . այսպէս է մեր ներկայ դրութիւնն էլ, որ ստիպում է մեզ որդիաբար բանալ մեր սիրտը Ձեր Վեհափառութեան առաջ :

Ձենք թագցնում, և չենք կարող թագցնել, որ մի ժամանակ մեր ուրախութիւնը անվախճան էր, տեսնելով Ձեր մէջ Ղարաբաղու երջանկայիշատակ Աթոռիկոսաց և Մետրապօլիտաց հոգին . մենք տեսանք Ձեր մէջ հովիւ քաջ, բարի և արդար, ինչպէս էին մեզ համար մեր Մետրապօլիտները և էն ժամանակը նրանց չ'լինելը զգալի չ'էր մեզ համար . մենք փառաբանում էինք Աստուծոյն, որ մեր երջանկայիշատակ ազգի Հայր Բաղդասար Մետրապօլիտից յետոյ գտանք Ձեր մէջ, բարի և արդար հովիւ, որ պատրաստ է, ինչպէս ասում է Փրկիչն « Դնել զանձն իւր ի վերայ ոչխարաց » որոնք էլ իրանց կողմից չեն խնայիլ իրանց կեանքը զոհել այսպիսի հովուի համար :

Վեհափառ Տէր, Դուք մինչև ցայժմ էիք ճշմարիտ քաջ և բարի Հովիւ, Դուք պաշտպանեցիք Ղարաբաղացի հոգևոր և բարոյական օգուտը այնպիսի մարդկանցից՝ որոնք ինչպէս ասում է Նզիշէն . « Բնակում են թանձր խաւարի մէջ, որոնց հոգիները թաղուած « են իրանց մարմնումը, ինչպէս կենդանի մարդ գերեզմանումը և « որոնց համար Քրիստոսի սուրբ լուսոյ ճառագայթը՝ երբէք չէ « ծագում : »

Դուք տարաք մեզանից մեր նախկին վիճակաւոր Ստեփաննոս Արքեպիսկոպոսին և մենք որդիական հնազանդութեամբ հնազանդեցանք Ձեզ . բայց տուիք մեզ վիճակաւոր մի շուշտակ վարդապետ որ անարգանք է մեր երկրին, անարգանք մեր Աթոռիկոսական և Մետրապօլիտական վիճակին, անարգանք մեր անցեալին, անարգանք մեր ներկային և ապագային :

Մեր ներկայ դրութեան մէջ, մենք զգում ենք մեր Մետրապօլիտաց չ'լինելը, մեր քաջ և բարի հովուաց պակասութիւնը, զգում ենք երջանկայիշատակ Բաղդասարի չ'լինելը, որին ամենից առաւել սիրելի էր մեր հոգւոյ, մեր գերդաստանի և ազգի խաղաղութիւնը :

Մեր հաւատը Ձեր ունեցած սիրոյ համար Ղարաբաղացի վերայ՝ հաստատ և անդրդուելի է . Ղարաբաղացի՝ որոնց Դուք շատ անգամ կոչել էք Ձեր ընտրեալ և սիրելի որդիք, բայց մեր նոր վիճա-

կաւորի բռնած ճանապարհը և ուղղութիւնը մնասական է մեր ազգի և եկեղեցւոյ հոգեւոր և քարոյական օգտին, որովհետեւ նորա վարմունքը ցանում է մեր մէջ անձնական, ընտանեկան և ազգային թշնամութիւններ: Նոր վիճակաւորը գործ է բռնում այնպիսի անձանց հետ, որոնց յայտնի և ծածուկ դարանագործութիւններից Ղարաբաղը անդադար տակն ու վերայ է լինում: Սորհրդականներ ունի այնպիսի անձինք, որոնք ամենայն բռնութեամբ պատրաստի են Ղարաբաղցւոյ կենդանութեան արիւնն ծծել: Շրջապատել է իրան այնպիսի մարդկանցով, որոնք ազգի և եկեղեցւոյ համար եղած ժողովրդներից, ուսման և լուսաւորութեան համար եղած զոհաբերութիւններից միշտ փախել են մինչև ցայսօր, և ամենայն խառնակութեանց և կործանմանց մէջ զլուխ են հանդիսացել: Մենք չարչարուել ենք, մենք ընտանեկան և հասարակական կենաց վայելչութիւնից զրկուել ենք, Ձեր հայրապետական անձը նեղացնելով մեր սերնդոց համար ուսումնարան ենք կանգնացրել, հոգաբարձութիւն ենք հաստատել, հեռաւոր տեղերից տեսուչ և ուսուցիչներ ենք բերել, այսօր չար մարդկանցով, դաւաճան անձանց նենգութեամբ նոր վիճակաւորն կամենում է կործանել և հողի հաւասարցնել:

Ձենք իմանալ, վեհափառ Տէր, օտարներից կամ ոմանց անբարեմիտ հայերից է գրգռուած, թէ ինքն իրանից է շարժուած, չէ ուզում ճանաչել, ո՛չ քաղաքացի և ո՛չ քաղաքագլուխ, ո՛չ արուեստաւոր և ո՛չ վաճառական, ո՛չ հոգաբարձու և ոչ ուսումնարան, ոչ մէկի ձայնը չէ ուզում լսել, ոչ մէկի խորհրդին չէ ուզում անսալ: Հրապարակաւ անարգեց հոգաբարձութեանը, հրապարակաւ անարգեց քաղաքագլխին և իշխաններին: Առաջնորդը ժողովրդի համար է, վեհափառ Տէր, հովիւը հօտի համար է: Առաջնորդը սիրոյ արմատացնող պէտք է լինի և ո՛չ երկպառակութիւն սերմանող: Առաջնորդը հայր պէտք է լինի ընտանեաց եկեղեցւոյ և քարոզ լուսաւորութեան և ո՛չ թէ առաջնորդ խաւարի: Առաջնորդը մխիթարիչ պէտք է լինի տառապեալ ժողովրդին և ոչ անարգիչ և խոցոտիչ: Առաջնորդը պէտք է միաբան լինի իրան ժողովրդի հետ, պէտք է միացնի և օտարացածներին և ոչ թէ ջանահնար լինի բաժանել հայրը որջուցը, եղբայրը եղբօրիցը և ազգականը ազգականից: Սնուստ-

մելի է մեր հասարակութեան տառապանքը և աննկարագրելի մեր ցաւը և յուզմունքը :

Նայելով մեր ներկայ դրութեանը՝ մենք չենք կարողանում գուշակել ապագայի խաղաղութիւնը, մենք ընդհակառակն տեսնում ենք մեր առաջին՝ մոայլ ապագայ. տեսնում ենք ոչ միայն մեր սերունդի կորուստը, այլ և յուսահատում ենք նոյն իսկ ազգի և եկեղեցւոյ ապագայի վերայ : Մենք ցանկալով պահպանել յաւիտեան մեր որդիական սէրը առ սուրբ Եջմիածինն և առ Ձեզ վեհափառ Վաթուղիկոսդ ամենայն Հայոց՝ ուղարկում ենք ան պատգամաւորներ, Մայօր Նսայի բէգ Դուռխանեանց, (հոգաբարձու), Համբարձում Աղա Հախումեանց, Պ. Համբարձում Սաչատրեանց (հոգաբարձու), Մեսրոպ Թառումեանց, Բարաջան Սւան-Իւզբաշեանց, (էսնաֆապետ) որոնց տուած է լիովին իշխանութիւն անձամբ՝ անձին, գրով կամ բանիւ, յայտնել Ձեր վեհափառութեանը մեր երկրի, մեր եկեղեցւոյ և ուսումնարանի վիճակը, և այս ամէնի բարւոքելու համար ամենտեսակ դարման որոնելու և զործը ըստ ցանկութեան հասարակութեանն գլուխ տանելու, որով և իցէ եղանակաւ, որ մենք կարողանանք ներկայումս և ապագայումը ընթանալ լուսոյ և խաղաղութեան ճանապարհաւ, ուղարկում է Ձեզ նոյնպէս և դպրոցի հոգաբարձութեան ներկայ ալեկոծ դրութեան աղետալի նկարագիրը : Իմացէք վեհափառ Տէր, մենք այժմեան ժամանակումս զրկուած ենք, ինչպէս ընտանեկան, նոյնպէս և ազգային խաղաղութիւնից : Հերիք է մեր տառապանքը, վեհափառ Տէր, ազատեցէք մեզ նոր վիճակաւորի և իրան համախոհների դարանագործութիւններից, հանցէք նրան այս վիճակից, որին մենք չենք խնդրել, որոյ բնաւորութիւնը քաջ յայտնի է Ձեզ իրան յաջորդութեան ժամանակից և տուէք մեզ նրան, որին սիրած է հասարակութիւնը և որն որ իրան անձը պատրաստ է դնել հասարակութեան համար :

Վեհափառ Տէր, Ձեզ պարտ է այսօր լինիլ այնպէս, ինչպէս մինչև հիմա եղել էք մեզ համար, ինչպէս պարտաւոր է լինել ամեն քաջ և բարի հովիւ, որ ինչպէս ասում է Փրկիչը « Պարտ է դնել զանձն իւր ի վերայ ոչխարաց : »

Անդրում ենք, վեհափառ Տէր, որ մեր որդիական սիրով առաջարկուած գործքը ընդունէք, ինչպէս վայել է հոգևոր Հօր, թող

նէք մեր ուսումնարանը իրան յառաջադէմ ընթացքի մէջ և շնորհէք հասարակութեանը իրան անդորրութիւնը և խաղաղութիւնը ազատելով նրան անբարեմիտների դաւաճանութիւններից և բնաւ ունկն չմատուցանելով անստորագիր զրախօսութիւններին, այժմ և յաւիտեան :

15 Նոյեմբ. 1864 Շուշի .

Բագմարիւ ստորագրութիւնեմ ժողովրդոց

Պատասխանագրութիւն Դ. — Այս քաղաքական դեպքուտատի կամ քաղաքապետի գրութիւնն է, որով թէ քաղաքի և ուսումնարանի դառն վիճակի վրայ կը խօսի և թէ կ'ստիպուի ուղարկել Կաթողիկոսին իւր մօտ պահուած մէկ բողոքագիր բոլոր քաղաքի հասարակութենէն ստորագրուած, որով եկեղեցական և աշխարհական միասին ուխտելով՝ կը բողոքէին մի չհաս պսակի մասին, որուն հրաման տուած էր Մատթէոս Կաթողիկոսն: Ինչպէս միւս գրութեանց՝ նոյնպէս և այս չորրորդ գրութեան մէջ կը յիշուի Էջմիածնի ոմանց միաբանից ընդդէմ Կաթողիկոսի շրջաբերական բողոքը, որուն ընդդիմացած էր Պ. Շանշեան Ղարաբաղի մէջ և ժողովուրդն անդորրացուցած: Շանշեանը պաշտպանած էր Կաթողիկոսութիւնը շրջաբերականին դէմ, թէ բանիւ և թէ մէկ համառօտ գրաւոր յայտարարութեամբ, բայց Կաթողիկոսն չպաշտպանեց Շանշեանի արդարութիւնը տեսչական գործոյն մէջ և բողոքողներու ցանկութիւնն էլ այդ էր, որպէս զի նա վիրաւորուելով Կաթողիկոսէն համամիտ դառնայ այն կուսակցութեանը, որոնք կը փութային Կաթողիկոսը զահալիծել և Թահիրեանի նման կը կրկնէին թէ՛ « Լաւ է միոյ անձին մեռանիլ քան բոլոր ազգին կորնչիլ: » Աբէլ եպիսկոպոս

պոսն Էջմիածնի մէջ պարզապէս ասաց Ղարաբաղի պատգամաւորներուն թէ՛ Ռուք մեր շրջաբերականը չյարգեցիք, մենք եղ ձեռ իրաւունքը եւ արդարութիւնը չենք պաշտպանիլ. սակայն Պ. Շանշեանն ամեն զրկանք յանձն առաւ, բայց Կաթողիկոսութեան դէմ չ'զինեցաւ, վասն զի նորա նպատակն էր ոչ թէ Մատթէոսն պաշտպանել, այլ ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը: Էջմիածնի միաբանութիւնը եթէ արդար խղճիւ նայէր գործոյն վրայ, անշուշտ կ'զգար, որ Շանշեանի արածը նոյն իսկ Էջմիածնի փառաց և պատուոյն համար էր և ոչ թէ Մատթէոսէն ակնկալութեան. վասն զի եթէ զահալիժութեան գործը յառաջ գնար՝ Էջմիածնի միաբանութիւնը մի անջնջելի արատ պիտի թողուր ազգային պատմութեան էջերուն մէջ: Մատթէոսն մահկանացու էր՝ կանցնէր, ինչպէս որ անցաւ, բայց զահալիժութեան գայթակղեցուցիչ արարքը ժառանգութիւն կը մընար յետագայից: Փոյթ չէր ամենևին Պ. Շանշեանին՝ թէ իւր պաշտպանութեան փոխարէն պիտի հալածուէր Կաթողիկոսէն անբարեմիտներու շնորհիւ, նա Կաթողիկոսութեան համար այն արաւ, ինչ որ ամեն ճշմարիտ Հայ պարտական էր առնել. ինչ որ պարտն էր առնել: Անեղծ փառք էր Պ. Շանշեանի համար՝ որ նոյն իսկ իւր հալածանաց մէջ ամենևին չփոխեց իւր հաստատուն (համոզմունքը, ուրախութեամբ տարաւ ամեն զրկանք և զահալիժութեան կուսակիցներուն գործակից չեղաւ: Դարձեալ կ'ասենք, նա Հայոց Կաթողիկոսութեանը պաշտպան հանդիսացաւ և ոչ թէ Կաթողիկոսին, վասն զի անշուշտ բողոքողաց չափ Շանշեանն էլ կարող էր ճանաչել զՄատթէոսն. և միաբանութեան ոչ մէկ անդամի հետ կիրք և ատելութիւն չունէր և չունի: Ամեն մարդ կը խոստովանի, չեն կարող ուրանալ թշնամիքն անգամ, որ Շանշեանի բոլոր գործողութեանց մէջ իւր անձն մոռցուած է և միայն ընդհանուրի շահն և օգուտն է նորա սիրտը և միտքը գրաւող գլխաւոր առարկայն: Շանշեանն ամեն ժամանակ կարող էր մի առանձին դպրոց ունենալ իւր համար, ինչպէս այսօր ունի Թիֆլիզի մէջ, բայց չէր կարող այն բազմաթիւ աղքատ և գեղջուկ մանուկները ամփոփել իւր դաստիարակութեան հովանեաց տակ, որոնք զումարուած էին Ղարաբա-

դու դպրոցին մէջ. Վասն զի նա ձրի ուսուցանելու կարողութիւն ունի . բայց ձրիապէս մի ահագին դպրոց պահպանելու կարողութիւն չ'ունի : Ղարաբաղի մէջ բազմաթիւ աղքատ մանուկները կարող էին շահուիլ նորա դաստիարակութենէն, շնորհիւ ազգային եկամուտնրու, այսօր Թիֆլիզի մէջ միայն հարուստ ծնողաց սակաւաթիւ որդիքը կը շահուին, որոնք ամսական թոշակ կը վճարեն : Այս մասին էր որ կը ցաւէր Ղարաբաղու ժողովուրդը իւր թղթերով, ինչպէս և քաղաքապետը հետևեալ գրութեամբ :

Վեհափառ Տէր .

Վեց ամսից առաջ մեծ խռովութիւն ծագեցաւ քաղաքիս մէջ մի ապօրինի պսակի հաստատութեան համար, հասարակութիւնը շարժեցաւ, ստորագրութեամբ բոլոր եկեղեցականաց և աշխարհականաց խնդիր գրուեցաւ, պատգամաւորներ ընտրուեցան, և նոյն խնդրագիրը հասարակութիւնից յանձնուեցաւ ինձ, որպէս Ռէպուտատի կամ Գլխոյ հայ ժողովրդականաց, որ ի ձեռն ընտրեալ պատգամաւորաց հասուցանեմ Ձեր Վեհափառութեանը : Բայց նոյն իսկ միջոցին այնպիսի դէպքեր յառաջ եկան, որ ես բարւոք համարեցի առ ժամանակ պահպանել հասարակութեան խնդրագիրը ինձ մօտ : Այս դէպքերն էին քաղաքիս մէջ ոմանց երևելի իշխանաց մահն, իսկ Էջմիածնայ Աթոռից այն շրջաբերական բողոքը որ սպառնում էր ցահավիժութիւն Վաթոզիկոսութեան և հայրապետութեան Հայաստանեայց եկեղեցւոյ : Այս վերջին անցքը այնքան ծանրակշիռ էր քաղաքիս Հայ հասարակութեան և առ հասարակ բոլոր ազգի համար, որ մոռացնել տուեց միւս մասնաւոր ազգային խռովութիւնները, հետևապէս ուրեմն և այն խռովութիւնը, որ շարժվել էր այս տեղ ընդդէմ ապօրինի պսակակառարութեան Իւան Բէգի — Աւան — Իւզբաշեանց : Այն ինչ Հայ հասարակութեան պատգամաւորաց միջնորդութեամբ ոմանց միաբանից շրջաբերական բողոքն հերքուեցաւ և բողոքողներն ներողութիւն խնդրեցին Ձերդ Վեհափառութիւնից և հաշտուեցան, և այն ինչ քաղաքիս կամակոր հասարակութիւնը ստիպում էր ինձ դարձեալ

զարթուցանելու ապօրինի պսակի խնդիրը և ստորագրած խնդրագիրը Ձեր Վեհափառութեանը ղրկելու պատգամաւորաց ձեռքով, յանկարծ ամսոյս Տին ծագեցաւ մի խռովութիւն քաղաքիս մէջ վիճակաւորի դէմ, որ կամենում էր Ուսումնարանի դէմ մեղանշել, Հոգաբարձութիւնը ոտնակոխ անել, Տեսչին հրաժարեցնել, զպրոցին որաքայլ յառաջադիմութիւնը խանգարել մի քանի անձանց դաւաճանութեամբ, որոնք զաղտնի չարագործութեամբ պղտորել էին Ձեր Վեհափառութեան միտքը և Գուք շարժեալ այսպիսի իրողութիւններէց կոնդակ էիք ուղարկել Ուսումնարանի տեսչին հրաժարեցնելու։ Էն տեսչին, որ առաքելնի կենօք, բարի դաստիարակութեամբ հոչակուած է ամեն տեղ, էն տեսչին, որ իրան անարատ հայութեամբ յայտնի է քաղաքիս հասարակութեանը, վասն զի առաջին անգամ նա ձայն բարձրացրեց շրջաբերական բողոքի դէմ, Հայոց ընդհանուր հայրապետութեան պաշտպանութեան համար։

Վեհափառ Տէր, քաղաքիս Հայ հասարակութիւնը ստիպեց ինձ, որ այս վերջին Ուսումնարանական անցքի համար ընտրուած պատգամաւորաց ձեռքով հասցնեմ Ձեր Վեհափառութեանը և այն խընդրագիրը, որ ստորագրած յանձնած էր ինձ ապօրինի պսակի մասին և ես կատարում եմ տնա հասարակութեան պահանջմունքը և առաջարկութիւնը։ Նոյնպէս մեծ պարտք կայ ինձ վերայ յայտնել և այս վերջին ուսումնարանական անցքի համար և վիճակաւորի ապօրինի վարմանց մասին ընդդէմ յարգանաց քաղաքացեաց և իշխանաց։ Այս մեծ պարտաւորութեամբ յայտնում եմ Ձեզ, Վեհափառ Տէր, որ մինչև այս անցքերին համար մի օրինաւոր տնօրէնութիւն չ'լինի և չ'պահպանովի եկեղեցւոյ և ուսումնարանի իրաւունքը, անհնարին է որ խաղաղութիւն լինի հասարակութեան մէջ։ Յայտնում եմ Ձեր Վեհափառութեանը որ ոչ թէ միայն Գեորգ վարդապետն ինքն չէ կարող այսուհետեւ Մետրապօլիտական թեմին վիճակաւոր լինել, այլ և մի այլ անձն ևս չէ կարող մտնել այս քաղաքը վիճակաւորի անունով, մինչև իրան արթուն հովուութեամբ արժանի չ'լինի հասարակութեան սիրոյն, յարգանաց և սրտուոյն։ Զէ կարող, ասում եմ, մտնել մի այլ ոք այս քաղաքը մինչև պատրաստ չ'լինի որպէս քաջ և բարի հովիւ իրան անձն դնել ազգի բարոյական և հոգևոր օգտի համար, կամիմ ասել, ազգի

լուսաւորութեան համար, ազգութեան պաշտպանութեան համար :

Այս համոզմունքն է, որ ես յայտնում եմ Զեր Վեհափառութեանը ի դիմաց բոլոր հասարակութեան քաղաքիս, որ անհամբեր սպասում է Զեր հայրապետական խաղաղարար տնօրէնութեանը, որպէս ի մասին ապօրինի պսակին, նոյնպէս և վերահաստատութեան իրաւանց Հոգաբարձութեան և Ուսումնարանին, և այսու համոզմամբ յանձնելով զիս և զհասարակութիւնն քաղաքիս սուրբ օրհնութեան և ազօթից Զերոյ :

Անամ Զերում Վեհափառութեան նուաստ որդի և Գլուխ Հայ հասարակութեան քաղաքիս

16 Նոյեմբ. 1864 ամի Շուշի .

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅ



Պատասխանագրութիւն Ե. — Էջմիածնի մէջ երկար խօսակցութիւններ եղան Կաթողիկոսի և Ղարաբաղի պատգամաւորաց մէջ, պահանջեցին որ Շանշեանի դասատետրը հեղինակի առջև քննէ, չը հանճեաւ Կաթողիկոսն, պահանջեցին աշակերտները քննել՝ նոյնպէս չը հանճեաւ և երկար ու բարակ անցքեր անցին, որոնք հանգուցելոյ յիշատակը պատուելու համար չենք ուզեր մի առ մի գրել, լատիներէն առածին հետեւելով, որ կը պատուիրէ՝ կաւ քնաւ չխօսիլ մեռածի վրայ, կաւ չաւ խօսիլ. բայց պատգամաւորները դարձեալ չյուսահատելով՝ երբոր Երևան դարձան, այն տեղէն, ինչպէս մի քանի նշանաւոր միաբանից վրայ խնդրողական թղթեր, նոյնպէս և Կաթողիկոսի վրայ հետեւեալ գրութիւնը գրեցին :

Վեհափառ Տէր .

Արչափ անսահման էր մեր ուրախութիւնն և անպատմելի՝ երբ պատգամաւորութեամբ ղրկում էինք առ մեծախնամ հայրութիւնդ, այնչափ դառն է այժմ և վնասական մեր վերադարձն Ս . Եջմիածնից : Անսահման էր մեր պատգամաւորութեան ուրախութիւնն , վասն զի ապահով էինք , որ քաղցր ակնարկութեան կը հանդիպին մեր հասարակութեան խնդիրները , պաշտպան կը գտնի Զեր մէջ ճշմարտութիւնը , մխիթարութեան ապաւէն հասարակաց վիշտը և տառապանքը՝ և արդարադատ վերահասութեամբ կ'բացուի սրտութեան պատրուակն և պատիժ կստանայ չարն և ռիսերիմ թըշնամին հասարակաց խաղաղութեան , ազգային լուսաւորութեան և բարոյական սկզբանց յարատեւութեան : Անսահման է այժմ մեր տրտմութիւնը , վասն զի հասարակութեան ազգական չարժանացաւ մտադիր ունկնդրութեան , նրա պատգամաւորներն չարժանացան հարցասէր ընդունելութեան և հայրական օրհնութեան :

Վեհափառ Տէր , այժմ վերադառնում ենք անմխիթար սրտիւ , վնաս հոգեով , ալետանջ և բազմածուփ մտածութեամբ և յուսաբեկ կամքով , չենք իմանում թէ ինչ պէտք է պատասխան տանք մեր հասարակութեանը , ինչ աւետիք պէտք է աւետարանենք մեր ուսումնարանի բազմափաստակ Հոգարարձոններին և ուսումնաւարաւ մանուկներին , ինչ երեսով պէտք է ներկայանանք բազմազերբ ժողովրդին և ինչ՞ վնասութեամբ դարանագործներին և հասարակաց բարօրութեան թշնամիներին և աւերակաբնակ բուերին և խաւարասերներին :

Այս հոգեմաշ մտատանջութեամբ վերադառնում ենք մենք այժմ , Վեհափառ Տէր , և մեր առաջիկայ ապագայն սարսափեցնում է մեզ , փախում ենք որ քանդուի այն վաղեմի բարոյական հանգոյցը , որ ժողովրդին կապում էր հայրապետական Աթոռի հետ , փախում ենք , որ իսպառ վերանայ այն ակնկալութիւնը , որով սպասում էր բազմաթանջ ժողովուրդն լուսոյ և մխիթարութեան՝ հայրապետական Քահից և այնպիսի երկպառակութիւններ յառաջ գան , որ ապագայումն անհնարին լինի առաջն առնուլ : Վասնորոյ իբրև

հարազատ որդիք, իբրև վշտացած և դարձեալ մխիթարութեան ցանկացողք, իբրև օտարագրեալք ի հայրապետական Աթոռոյն և դարձեալ նորա յարասե փառացն փախաբողք, իբրև արտասուօք ելեալ և դարձեալ զաչերս ի կողմն կոյս Այրարատայ և Էջմիածնի յածեցուցանողք, խնդրում ենք Ձեզ, որ չմասնէք Ձեր փառքը մասնիչներին, չզոհէք Ձեր ապագայի պարծանքը ներկայի վազանցուկ դարանագործներին և շահախնդիրներին և Ձեր մինչև ցայսօր աշտանակի վերայ եղած ճրագը չծածկէք ընդ գրուանաւ խաւարի, ընդ գրուանաւ զրախօսութեան և դարանագործութեան չարասիրաց և հալածչաց լուսաւորութեան և խաղաղութեան:

Ազաշումներ Ձեզ, վեհափառ Տէր, որպէս հարազատ որդիք և մինչև ցայսօր փառալոյսալ ի հայրական զգուանաց Ձերոց, ազաշում ենք Ձեզ, փութալ կատարել մեր հասարակութեան և հոգաբարձութեան խնդիրները, այն խնդիրները, որոնք աւելորդ ենք համարում կրկին երկրորդել, այն խնդիրները, որոնք հասարակաց ճայն են, ճշմարտութեան հետ շաղախուած են և որոնց կատարումն ոչ միայն մեծամեծ բարեաց պէտք է լինի պատճառ, այլ և յաւիտեան պէտք է երախտագիտութեամբ կապէ ժողովրդին Ձեր հայրապետական Աթոռի հետ, Ձեր փառաց և անուան հետ, Ձեր յիշատակի և պատմութեան հետ: Պէտք է թազաւորի խաղաղութիւնը խռովայոյզ հասարակութեան մէջ և դուք պէտք է լսէք Ձեր շատ սիրած և հանապազօր կրկնած աւետարանական քաղցր բարբառը. « Երանի խաղաղարարաց, զինոքա որդիք Աստուծոյ կոչեցիր»: Այս է մեր որդիական սրտի հարազատ բղխուածքը, որ յայտնում ենք Ձեզ, այսուհետեւ կամք Ձեր եղիցին:

Մնամք անհամբեր սպասողք բարեոք կատարածի խնդրագործութեանց, Ձերում վեհափառութեան նուաստ որդիք:

Ի Դեկտ. 1864 տմի յերևան.

ՀԱՄԱԲԱՐՁՈՒՄ ՀԱՌԱՐԵԱՆՑ.

ՄԱՅԵՐԻ ԵՍԱՅԻ ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆՑ. ևայլն.

Երկու յօդուածք. — Պատգամաւորաց յուսահատ վերադարձէն և Տեսչի հրաժարմանէն յետոյ, Թէ քաղաքէն և Թէ զաւառակներէն դարձեալ գրութիւններ ուղղուած են առ Կաթողիկոսն, բայց մենք այսքանն էլ բաւական համարելով՝ ժողովրդի ուսումնասիրութիւնը և Կաթողիկոսի կողմէն անօգնական մնալն ցոյց տալու համար, արժան կը դատենք միայն յետագայ երկու արձակ և չափաւոր յօդուածները հանելով Թիֆլիզի Մեղու Հայաստանի լրագրի, 1865. 14 և 17 համարներէն՝ վերստին տպագրել այս տեղ, որոնք դարձեալ Ղարաբաղի դպրոցի վիճակին կը վերաբերին: Առաջինը յետադիմութիւն քարոզող առաջնորդ վարդապետին դէմ է և նորա հետ միասին բոլոր իւր համամիտներուն. իսկ երկրորդն է մի ազգային երգ, որուն մէջ Բուրաստանի դիմառնութեամբ խիստ կենդանի կերպով նկարագրուած է նախկին տեսչի հրամէշտըն և վարժարանի անխնամ վիճակի մէջ մնալը:

Թող քառասուն տարի յետ մնան, այսպէս էր ազազակում մեր վարդապետներից մինը, ուսումնարանի դաստիարակական խորհրդի մէջ: Թող քառասուն տարի յետ մնան, ազազակում էր նա հրապարակաւ, երբ որ կամենում էր ուսումնարանի մէջ մի յետադէմ փոփոխութիւն անել: Անմոռանալի կը մնան այս խօսքերը այն ուսումնարանի տխուր պատմութեան մէջ, և զույգէ քառասուն տարուց յետոյ միայն կը հասկանան, թէ ոչ էս խօսքերին ներկայումս արձագանք տվողները, գէթ նրանց որդիքը, թէ ինչ էին նշանակում այս խօսքերը: Ար հասկանան, բայց, աւաղ, շատ ուշ, թէ ինչն էր նեղում նրան, ինչն էր բռնադատում, որ յառաջադիմութիւն քարոզողների դէմ վստահանում էր կրկնել իրան կարողութիւնից չկախված խօսքեր. Թող քառասուն տարի յետ մնան Հայերը:

Շատ ծանր է լսել այս խօսքերը այն մարդկանց համար, որոնք հասկանում են ժամանակի գինը, որոնք յառաջադիմութեան համար գիշեր ցերեկ մտածում են, որոնք համար յետադիմութիւնը մահ է, մահ է անհատի համար, մահ է ազգի համար, մահ է մարդկութեան համար, որոնք ոչ թէ միայն քառասուն տարվան յետադիմութիւնը, այլ և մի տարուան, մի ամսուան, մի օրուան և մի ժամուան անգոր-

ծունէութիւնն անգամ համարում են անգիւտ կորուստ , որովհետեւ ժամանակը շատ թանկ է նրանց համար , այն ժամանակն , որ մի անհամեմատ պարգև է Աստուածանից մարդուն պարգևած իրան երկնաւոր և երկրաւոր ճշմարիտ երջանկութեան համար : Շատ ծանր է ժամանակի զինը հասկացողների համար . որոնք զգում են թէ ինչքան տարաբաղդ է մի ազգ , երբոր մի տարի շարունակում է մի գործ , մի տարուց յետոյ խախտնում և նորից սկսում , որոյ կեանքը լինում է մի նոյնանման կրկնութիւն , մի շարժուն անշարժութիւն և ոչ յառաջխաղացութիւն և նորոգ գործունէութիւն :

Քառասուն տարի քոյ յես մնան Հայերը , ասում է գերապատիւ վարդապետը . հերիք չէ համարում այնքան դարերով յետ մնալն , մի քառասուն տարի էլ ցանկանում է յետադիմութիւն : Բայց չ'զիտեմ իմանում է արդեօք , թէ այժմեան ժամանակում քառասուն տարի յետ մնալն ինչքան թանկ կարող է նստիլ Հայի համար : Իսկ ընդհակառակն , ոչ թէ քառասուն տարի , այլ հինգ տարի , տասն տարի յառաջ գնալն ինչքան օգուտ : Էնպէս տարիներ կան , էնպէս ժամանակներ կան , որ մի դարուան նշանակութիւն ունին մի ժողովրդեան համար , կարող են մի դար յառաջ տանել կամ յետ տանել : Այս տարիներիցն են Աեր քառասուն տարվան ամեն մինը , Ք. Վ. մանաւանդ առաջին տարիներն , խնայեցէք ուրեմն և այդպէս շտապով մի կրկնէք , քոյ քառասուն տարի յես մնան Հայերը :

Ի հարկէ , ինչ մարդիկ չեն իմանում ժամանակի յարգը . ինչ մարդիկ չեն իմանում ազգերի պատմութիւնը , թէ քառասուն տարի յես մնալով՝ ինչեր կարող են սլատահիլ մի ազգի : Ինչ մարդիկ չեն իմանում աշխատանայ օգուտը . ինչ մարդիկ կամենում են քնել . ինչ մարդիկ լոյսը բացված ժամանակն էլ կամենում են աչքերը խփել , նրանց համար շատ հեշտ է կրկնել . քոյ քառասուն տարի յես մնան Հայերը :

Ի հարկէ , ինչ մարդիկ չեն իմանում թէ քառասուն տարի մի ժողովուրդ , մի ազգ չէ կարող անշարժ կանգնած մնալ , չէ կարող քննել , չէ կարող անգործ մնալ և եթէ չգործէ նա բարի , անշուշտ կը գործէ չար , եթէ չորոնէ երջանկութիւն , կորոնէ թշուառութիւն , եթէ շինելուց ձեռք վեր առնէ , անշուշտ քանդելով կը սլաքապի , վասն զի բնութիւնը սլաքապութիւն չէ սիրում . ինչ մարդիկ չեն

իմանում, որ մի ազգ չէ կարող էն դրութեան մէջ մնալ, ինչ դրութեան մէջ որ թողել են քառասուն տարուց առաջ, էն մարդկանց համար ծանր չէ կրկնել. քող փռաստուն տարի յետ մնան Հայերը :

Ի հարկէ, ինչ մարդիկ, որ չեն իմանում թէ իրանց անձնամոռ ժամերումը, իրանց փառքով ու պատուով շրջապատած բողբոջներումը, իրանց քնած ժամանակներումը, թշնամին սկսած է հատուկում իւրեանց տունը, կողոպտում և բարձն անգամ գլխի տակից հանում և գտակը գլխիցը փախցնում, այն մարդկանց համար շատ հեշտ է կրկնել. քող փռաստուն տարի յետ մնան Հայերը :

Ի հարկէ, էն մարդիկը, որոնք սկանչները փակում են և չեն լըսում-արթուն կացիք. որոնք իրանց պարտաւորութիւնը չեն հասկանում թէ. քանի ժամանակ ունիք քարի գործեցիք, որոնք մարդկային կատարելութեան ամենամեծ զազաւարին չեն դիմում թէ, Կասարեայ եղիք, ինչպէս անը երկնաւոր Հայրն կասարեայ է. որոնք չեն լսում մարդկութեան յառաջադէմներին ձայնը - յառնջ, յառնջ, էնպէս մարդկանց համար շատ հեշտ է կրկնել. քող փռաստուն տարի յետ մնան Հայերը :

Պատիւարակութիւնը և կրթութիւնը խափանելով, ուսումնարաններին յետադիմութիւն քարոզելով, և յառաջադէմներին հալածելով, չենք իմանում, յետ կը մնան արդեօք Հայերը, թէ կը գնան, իրանց մատաղ հասակում կը մնան արդեօք մանուկները, թէ կը ծերանան : Ո՛չ, ո՛չ Ք. վարդապետ, Հայերը կը գնան, մանուկները կը ծերանան, քայց թէ ո՞ւր կը գնան և ի՞նչպէս կը ծերանան, պատմութեանն ենք թողնում պատասխանելու : Հայերը կը գնան, ինչ ճանապարհով որ գնացել են, և մանուկները կը ծերանան, ինչպէս ծերացել են իրանց մերձատր նախնիքը : Կը գնան և կը ծերանան, և գնալով ո՞ւր կը հասնին, կարող են երկար գնալ, թէ կը կորչին. ցաւ է մեզ այդ ապագայն մեկնել :

Մարդը յետ մնալու համար չէ ստեղծուած. մարդը ստեղծուած է յառաջ գնալու համար, ազնուագործելու համար և իրան նախնեաց բարի սկստածքը շարունակելու համար : Անաստուններն են միայն, որ յաջորդական գործունէութիւն չունին : Ամեն մինը նրանցից նոր է սկսում իրան ցեղի գոյութիւնը. ինչպէս որ հազար տարից առաջ մեծացել է մի անասուն, նոյնպէս և մեծանում է այսօր, հա-

զար տարուց յետոյ , մի այլ անատուն . Իսկ ընդհակառակն մարդկութիւնն առաջ է գնում , մարդկութիւնը նոր նոր գիւտեր է գրտնում , նոր միջոցներ իրան յառաջագիմութեան ճանապարհն հեշտացնելու համար , և ներկայն անցեալի հետ համեմատելով ' շատ մեծ է երկուսի մէջ եղած տարբերութիւնը : Մարդը ժառանգական արժանաւորութիւն ունի , նա պարտական է իրան նախնեաց աւանդած ժառանգութիւնը ոչ թէ միայն անկորուստ պահպանել , այլ և ճոխացնել և կատարելագործել , իրան նախնեաց սկսած շինուածը ' ինքը շարունակել , Լոյս են աւանդել , պէտք է էն լուսից նոր նոր ճրագներ վառել , որ լոյսը բազմաճայ . լեզու են աւանդել , պէտք է էն լեզուն մշակել , որ նոր զանձերով ճոխանայ . հարստութիւն են աւանդել . պէտք է շահեցնել և ոչ թէ անպիտան ծառայի նման հողի փլատակների տակ թաղել . եկեղեցի են աւանդել , պէտք է հարազատութեամբ յարատեւել և պայծառացնել : Մենք ճշմարտութեան և լուսոյ նահատակների ժառանգներ ենք , պէտք է ունենանք և նահատակ սերունդներ : Մեզ աւանդած ճրագը ' պէտք է շիջած և ծխելիս աւանդենք մեր յետագաներին : Մեզ հասած ազգայնութիւնը ' պէտք է շնչատառ և զիսկնացած աւանդենք և մեր սերունդներին թաղման հանդիսակատարներ և լաւ կաններ շինենք . կարճ ասել , ' պէտք է յէս մնանք , այլ յառաջ և յառաջ . պէտք է արթուն լինինք , պէտք է գործենք , պէտք է զրտենք , պէտք է աւելցնենք :

Յառաջագիմութիւնը աստուածային օրէնք է և բոլոր մարդկութեան պարտաւորութիւն . և միթէ մի մարդ իրաւունք ունի այս ընդհանուր օրէնքը կանգնացնել և մի ազգի հրամայել . թո՛ղ քառասուն տարի յէս մնան : Միթէ մի մարդ իրաւունք ունի ' արեգակին հրամայել ' թէ մի ծագիր . ես կամենում եմ , որ մարդիկ քնեն , ես կամենում եմ , որ նրանց գիշերը երկարի , ես կամենում եմ որ նրանք լինին և չ'լինին , կենդանի լինին և չը շարժվին , ծամանակ ունենան և չը գործեն : Ասենք թէ ' էն աքաղաղները շրջինքները կտրեցին , որոնք ազազակում են , որոնք աւետում են արշալուսի զալուստը , սակայն արեգակին չեն կարող հրամայել , ճշմարտութիւնը չեն կարող խեղդել , լոյսը կը ծագի և կը մերժի էն հեշտալիք խաւարը , որով ծածկում էին իրանց մերկութիւնը : Արե-

գակը չի յետ քաշիլ երբէք իրփոն ճառագայթները, չ'նայելով՝ որ մի կողմից շաղով ու ցողով ջրում և կենդանացնում է բնութիւնը և միւս կողմիցը բարձրացնում է երկրից խեղդիչ և մահկանացու գոլորշիներ, ինչ կուզէ լինի, նա կենդանութեան պատճառ է, նա Արեգակ է: Ճշմարտութիւնը չի լռիլ, ինչ կուզէ պատահի, դարձեալ նա ճշմարտութիւն է, նա քաջալերում և ոգևորում է իրան վկային սրտապնդելով, — Մի ասիւր, թէ ես մի հատիկ աւազ եմ, չեմ կարող դէմ կենալ այն կարծիքների փոթորկին, որ յուզում, բարձրացնում է անագին փոշին օդի մէջ. մի ասիւր թէ մի հատիկ աւազ եմ, չեմ կարող դէմ կենալ փոթորկին, իմացիր որ ծանրանում է այդ մի հատիկ աւազը ինչպէս մի քարածայռ այն հողի վրայ, որ կարծիքների քամին տանում է, որովհետեւ թէ ուշ թէ վաղ աշխարհս ճշմարտութեան կողմը պէտք է անցնի և ճշմարտութեան զրօշն է յառաջադիմութիւնը: Շատերը կ'ազազակեն՝ թէ թո՛ղ յետ մնան, բայց նա յառաջ կը գնայ: Արեւիլ է ճըշմարտութեան և յառաջադիմութեան վկաների անունները կորչին, բայց նրանց վկայութիւնը յաւիտեան կը մնայ:

15 Յունվարի 1865 ամի Շուշի

ԲՈՒՐԱՍՏԱՆ

Մնաս բարով, Բուրաստան, ախսոս վարդերդ չը տեսի.
Սիրուն տեսքիդ կարօտած՝ պայծառ զարդերդ չը տեսի.
Երկնային շաղ ու ցողով լուացած պատկերդ չը տեսի.
Արշալուսի հետ ծիծաղող՝ բացած աչերդ չը տեսի:
Թողնում եմ էդպէս կիսատ՝ չիմանալով ի՞նչ կը լինիս:
Կը ջրվիս, կը պահպանվի՞ս, թէ թուխսդ յուսով կը լինիս.

կը բացվի՞ս, կը զարգարվի՞ս, թէ ինձ պէս տխուր կը լինիս。
Անպահապան Բուրաստանն՝ երբէք զարգարուն չը տեսի :

Մնաս բարով, Բուրաստան, տախտակս հայլն : (*)

Շատ եմ թողել, չափած ձևած՝ Բուրաստան քեզի պէս .

Հողը մորած, ծառեր տնկած՝ այգեստան քեզի պէս ,

Լարով քաշած, ուղիղ շարած՝ ծառաստան քեզի պէս .

Սիրտս միշտ կարօտ մնաց՝ ծառերս ծաղկած չը տեսի :

Սիրեցի ես սիրուն պարտեզ՝ լաւ ցանկապատ Բուրաստան ,

Սերմի համար շատ ման եկայ՝ մերթ Եւրոպէ, միշտ Հայաստան .

Ծաղիկների լաւն ընտրեցի՝ տնկեցի սիրուն ծառաստան .

Աչքերս կարօտ մնացին՝ հասած պտուղներ չը տեսի :

Հայաստանի հողի վրայ դրախտի անուն լսեցի ,

Սիրուն տեսքովն սիրահարուած՝ նրա պաասկերն նկարեցի ,

Անմեղութեան՝ ճշմարտութեան ցրված սերմերն հաւաքեցի .

Գարնան վերայ ձմեռն եկաւ՝ բացված ծաղիկներ չը տեսի :

Դրախտի սիրովն էրված՝ հարածական շատ ման եկի .

Բերրի հողում, մաքուր օդում՝ ես մի պարտեզ որոնեցի ,

Հայաստանիս սուրբ ջրերն՝ առուններով բերել տուի .

Խարդախներն պղտորեցին՝ անարատ ծաղիկ չը տեսի :

Պարտիզումս տնկեցի ես՝ շատ թզենի ու ձիթենի .

Սողոմոնի այգու նման՝ շատ նռնենի ու նշենի .

Ոսոխներ դարան մտան՝ խառնեցին բարդի վայրենի .

Պարտեզս աւեր եղաւ՝ պտղալի ծառեր չը տեսի :

Անմեղութիւն որոնելով՝ վարդ մանիշակ շատ ցանեցի ,

Սոխ ու սխտոր պաշտեցին՝ իմ դրացիքս եգիպտացի ,

Բլբուլի տեղ՝ բայդուշ դրին՝ մութն աւերակ սիրեցին .

Փշի մէջ, տատասկի մէջ՝ վարդը բացուած չը տեսի .

Քանի՛ քանի պարտեզներ՝ էսպէս խոսկան մնացին .

Կամ Հարաւ և կամ Հիւսիս՝ խիստ տօթ ու ցրտով քանդեցին .

Ո՛չ մէկն չը խզեաց խեղճ քրտնաթոր պարտիզականին

Գարունն անցաւ, ամառն եկաւ, պարտիզի կարօտ մնացի :

(*) Իւրաքանչիւր տան վերջը առաջին տունը կը կրկնուի :

Ծաղիկներս առան տարան՝ օտար երկիր օտար սահման ,
 Ամեն ծաղիկ իր հողն ունի՝ էս մի օրէնք է բնական ,
 Տէրն ուրիշ տեղ չը տնկեց , այլ դրախտն ի Հայաստան .
 Հայաստանի բնիկ տունկն՝ օտար տեղ ծաղկած չը տեսի :
 Ո՛վ իմ սիրուն բուրաստան , վարած մշակած եմ թողնում .
 Ինչ՞ կը լինիս , չեմ իմանում , սիրտս շատ կոտրած եմ թողնում .
 Զրեւդ օտար ականից՝ մշակոյ յարգած եմ թողնում .
 Ո՛չ մի անտէր այգեստան՝ ծաղկած ու հասած չը տեսի :
 Բուրաստանն անտէր անջուր՝ պարտիզպանն ճնց կը թողնի ,
 Մատղաշ որդին օտար յուսով՝ լաւ ծնողը ճնց կը թողնի .
 Սոխակին վարդից խլում են՝ խեղճ սոխակը ճնց չը թողնի .
 Բաժանած սիրտը սէրից՝ երբեք մխիթար չը տեսի :
 Քո անունն , քո յիշատակ՝ սրտումս պահած կը լինի .
 Սրտի պէս Բուրաստան՝ ճով երբեք տեսած կը լինի .
 Սրտի մէջ բուսած վարդն՝ շարունակ ծաղկած կը լինի .
 Անմեղութեամբ վառուած սիրտն երբեք անապատ չը տեսի :
 Աշուղի շնորհք չունիմ , քո սէրն ինձ աշուղ կը շինի .
 Սէրն շատին լեզու տուաւ՝ ինձ էլ սիրաբան կը շինի .
 Համ կ'երգեմ , համ կը կանչեմ՝ քանի բերնումս շունչ կը լինի ,
 Իմ Բուրաստան , իմ Վարժարան , ան , ես քեզ ծաղկած չը տեսի :

45 Ապրիլի 1865 ամի . Ղարաբաղ .

Բ.

ԵՅՔ զանարժանն՝ ըստ պիտոյիցն՝ հչ
յանդիմանես, մի լինիր վարդապետ:

ԵԶՆԻԿ

Առաջին զլիտյ մէջ Արաքաղու վարժարանական անցքերն արդէն հանգամանօրէն պատմեցինք, ժամ է այժմ եղծել այն մոլորամիտ բանաբաղումիւնը, որով Չամուրճեան պատուելին ջանացել է արատաւորել Շանշեանի երկասիրութիւնը — Համսոսոսոսքիւն քրիստոնէական ուսման Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցոյ — որ քննութեամբ վաւերացած է Կրօնական ժողովէն և տպագրուած է: Ժամ է ցոյց տալ, որ Չամուրճեան պատուելին իւր ծամածուր բանաբաղութեամբ մեղանչած է դասագրքի առաքինի հեղինակին դէմ, մեղանչած է վաւերացնող Կրօնական ժողովին դէմ, մեղանչած է Հայաստանեայց Եկեղեցոյն ճշմարիտ վարդապետութեան դէմ: Ժամ է ցոյց տալ՝ որ Շանշեանի երկասիրութիւնն տարիներով տոկաց ամեն Թշնամական խարդախութեանց և նենգութեանց և կարէ տոկալ ամենակերպ քննութեանց և վերաքննութեանց, վասն զի իւր հաստատութեան խարխիւն Աստուածաշունչ Գիրքն է, իւր ուղղութիւնն Հայաստանեայց Եկեղեցոյ վարդապետութեան անմոլար ոգին և իւր դասական եղանակն խիստ պատշաճաւորն և արդիւնաբերն բարոյական զարգացման համար: Կամակորութիւնն կարէ առանց փաստի և ապացուցի կասկածաւոր համբաւել նոյն դասագիրքն, ինչպէս էր Մատթէոս Կանողիկոսի կոնդակն: Իմաստակութիւնը կարէ ծամածուել և քաշքշել, ինչպէս է Մեռնակն: Հալածասիրութիւնն կարէ վերաքննութեան պատրուակաւ տարածումն յետաձգել, ինչպէս է լուսոյ և ճշմարտութեան մի քանի ոսոխներու նենգ հնարագիտութիւնը. վերջապէս մոլեռանդութիւնը կա-

րէ տմարդաբար փականքի և հրոյ մատնել , բայց ճշմարտութիւնը անհետ առնել՝ անհնարին է , նոյն դասագրքի մի օրինակն անգամ բաւական է նենգաւորները , չարականները և խաւարի կամակոր սպասուորները խայտառակել . վասն զի նորա պարունակութիւնն Ս. Գրոց և Ս. Հարց վկայութեանց վրայ է հիմնուած և իմաստականերու խելապատակէն փչած թիւր մեկնութիւններէն ո՛չ կը սասանի և ո՛չ կարատաւորի : Շատ տագնապեցան ոմանք , շատ աշակերտական անհոգ գրուած դասատետոր խարդախեցին , շատ քրտնեցան զոնէ երևակ մոլորակով մի քանի մոլար մտքեր երևան հանել և սակայն ինչ է իրենց դառն քրտանց վաստակը , եթէ ո՛չ մի քանի ծամածուռ շաղակրատանք , տղայական քաշքշուք և անարգ կամակորութիւն :

Երբոր ընթերցողք ակներև աեսնեն թէ Չամուրճեան պատուելին ոտնակոխ առնելով բանադատութեան սրբութիւնը՝ ծայրատել և հաշմոտել է քննութեան առած դասագրքի կապակից պարբերութիւնները և Ս. Գրքի վկայութիւններն էլ անտեսութեան տուել , երբոր տեսնեն թէ բնաւ ամենևին չէ կամեցել մտադրութիւն դարձնել ամբողջական պարունակութեան վրայ , այլ ըստ քմաց մեկնաբանել է այս ինչ կամայն ինչ բառն և տողն . երբոր տեսնեն թէ այնպիսի ինքնահնար մոլորութիւններ է երազել , որ բնաւ ամենևին տեղիք չունին դասագրքին մէջ , միթէ չպիտի ամենեքեան մեզ հետ վկայեն թէ՝ Չամուրճեան պատուելոյն արածն բանադատութիւն չէ , այլ բանաբաղութիւն և ծամածռութիւն :

Սկսենք ուրեմն հաստատուն փաստերով ապացուցանել մեր ասածներն . նախ՝ դասագրքի ամբողջ իմաստներն յառաջ բերելով , յետոյ Չամուրճեանի ծայրատածներն և ապա մեր եղծը կամ հերքումն ըստ կարգին :

Պ. Շանչեան իւր աշխատասիրութեան մէջ Ս. Գրքի վսեմութեան գերազանցութեան , աստուածային հոգւով գրուելուն , հաստատուելուն և տարածուելուն վրայ երկարօրէն խօսելէն զկնի՝ ասած ունի թէ՝ Հրաշից և Մարգարեութեանց մէջևս կը փայլի քրիստոնէութեան մեծութիւնը : Ահա նորա բուն խօսքերը իւր Դասագրքէն . — «Որ-

պէս զի հրաշքը կարողանայ դառնալ հաստատութիւն կրօնի՝ պէտք է ունենայ նախ՝ այնպիսի գործքեր , որ յայտնապէս մեծ լինին քան մարդու զօրութիւնը , զորօրինակ յարութիւն մեռելոց և այլն : Երկրորդ պէտք է լինի հաստատող այնպիսի ուսման , որ արժան է Աստուծոյն : Եւ երրորդ պէտք է լինի ժողովքի կամ բազմութեան մէջ , որ կարողանայ ունենալ վկայներ : Այս ամեն նշանները մենք տեսնում ենք Քրիստոսի հրաշքների մէջ : »

Մարգարէութիւնը կրօնի հաստատութիւն դառնալու համար պէտք է լինի նախ՝ այնպիսի ապառնի բաների վրայ , որ չէ կարելի իմանալ ոչ ժամանակի հեռաւորութեամբ և ոչ այլ հանգամանքով , ինչպէս է զալուստն Քրիստոսի , հաստատութիւն քրիստոնէութեան այս խօսքով . « Ես յաղթեցի աշխարհի և այլն : » Երկրորդ՝ պէտք է լինի ասած պարզ խօսքերով որ չունենայ երկու միտք կամ մոռութիւն Երրորդ՝ պէտք է լինի սուրբ կրօնի հաստատութեան համար և չորրորդ՝ պէտք ունենայ իրա կատարումն : Այս ամեն նշանները Թէ Մարգարէների գուշակածն Քրիստոսի վերայ և Թէ՝ Քրիստոսի ասածն քրիստոնէութեան վերայ՝ բոլորն ևս անմերի կատարուեցան : » (Տես երես 13) :

Ընթերցողը կարող են տեսնել այս տեղ Թէ՝ որչափ սերտ կապակցութիւն կայ իմաստից դասաւորութեան մէջ և Թէ՝ ինչպէս առաջին երկրորդ , երրորդ և չորրորդ պայմաններէն կազմուած է ամբողջութիւն Թէ հրաշից մասին և Թէ մարգարէութեան : Բայց Պ . Զամուրճեան (որովհետև նպատակը նենգութիւն է) իմաստները ծայրատելով և Թլիխատելով՝ այսպիսի կերպարանք է տուել յիշեալ տողերուն . « Որպէս զի հրաշքը կարողանայ դառնալ հաստատութիւն կրօնի պէտք է ունենայ նախ՝ այնպիսի գործքեր որ . . . որ լինի ժողովքի բազմութեան մէջ , որ կարողանայ ունենալ վկայներ : « Մարգարէութիւնը պէտք է ասած լինի պարզ խօսքերով , որ չունենայ երկու միտք և կամ մոռութիւն : » (Տես Երեսակ Թիւ 117.) Եւ Թէ Պ . Զամուրճեան տպագրուած գիրքն այսպէս կը ծայրատէ , սիրելի ընթերցող , իմացիր Թէ՝ ինչէր չէն արել արդեօք ճշմարտութեան անհաշա ոտիսները և քանի անգամ առանց հեղինակի գիտութեան՝

չեն առել անմեղ մանկանց զրաժ դասական տետրակներն և խար-
դախելով՝ այս ինչ կամ այն ինչ տեղն ղրկել, և Թիւր մեկնութիւն-
ներ տալով՝ միամիտ մարդիկ որսացել: Բայց ինչ կարողացան և
ինչ կարող են անել, քանի որ Շանշեանի երկասիրութեան արժա-
նաւորութիւնը ոչ Թէ տառերուն և բառերուն վրայ է, այլ հոգւոյն,
վասն զի՝ զիրն սպանող է, իսկ հոգին կեցուցանող: « Գիրն սպա-
նանէ, այլ հոգին կեցուցանէ »: Մի քանի մարդիկ միայն զիրն ծա-
մածռելով՝ հալուեցան, մաշուեցան և սպանուեցան, բայց հազա-
րաւոր մանուկներ, հազարաւոր մարդիկ հոգին ըմբռնելով՝ զօրա-
ցան և քրիստոնէութեան քաղցրութիւնը ճաշակեցին: Դասագրքի
պարունակութեան ոգին ըմբռնողներն զմայլեցան և մեզ ասողներ
եղան, որ ոչ Թէ միայն քրիստոնէի, այլ Հօտէնտոտի սրտին վրայ
անգամ ազդեցութիւն կանէ այն զիրքն, բայց ինչ անես, որ տառա-
մուլ բառամուլ Չամուրճեանց համար էլ նոյնը քար զայծակղումեան
դարձաւ: Արդարեւ՝ ցաւ է մեզ համար քրիստոնէական վեճմ նիւ-
թերուն վրայ բանակաւ լինիլ այնպիսի անձանց հետ, որոնք վա-
րակուած են բառական ժանտախտով՝ և ոչ Թէ ոգւորուած են քր-
իստոնէական հոգւով, բայց ինչ կարող ենք առնել, քանի որ զի-
տենք Թէ իմաստակութիւնը պիտի պարծի, եթէ անպատասխանի
ծողունք: Ուրեմն նոյն պարծանքը յօգս ցնդելու համար զոնէ
պարտք կը համարինք պատասխանել: —

Պ. Շանշեան՝ քրիստոնէական կրօնի հրաշքներուն հաստատու-
թիւն և ճշմարիտ գերազանցութիւն տալու համար՝ ասած է —
Հրաշքը պէտք է շինի ժողովքի կամ թագմութեան մեջ, որ վիսներ
ռնենայ — մատնանիշ առնելով Քրիստոսի հրաշքները. իսկ Պ. Չա-
մուրճեան այս ճշմարտութիւնը չընդունելու և իւր ինքնահնար աս-
տուածաբանութիւնը ցոյց տալու համար յառաջ կը բերէ Կանայի
հարսանեաց հրաշքը (չուրը զինի փոխալիլը) և Յիսուսի այլակերպու-
թիւնը: Պ. Չամուրճեան եթէ կ'ուրանայ Աւետարանը, որ երկու
մարդն անգամ ժողով և ճշմարտութեան վկայ կը կոչէ. « Ուր իցեն
երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա. —
Երկու և երիւք վկայիւք հաստատեսցի ամենայն բան. » կուրանա

ուրեմն և Շանշեանի գրածին նշմարտութիւնը . իսկ եժէ կը հաւատայ Աւետարանին , հետևապէս պիտի ընդունի , որ հարսանեաց տաճարապետները և բազմականները ժողով էին և վկայ , ինչպէս և այլակերպութեան ականատես երեք աշակերտները իսկ ուրեմն և Շանշեանի գրածն քրիստոնէական նշմարտութիւն է , Երեւակի յառաջբերութիւնը անարգ աչքակապութիւն : Թողունք ասել որ բնագրի մէջ ժողովֆի կաւ բազմութեան է գրած . իսկ Երեւակին մէջ կաւ շաղկապն աներևութացած և միայն ժողովֆի բազմութեան կրկնուած՝ Աւետարանի խօսքերէն խուսափելու համար :

Բաց յայտման է Պ. Չամուրճեան , չ՛գիտենք ինչ մտքով , անտես և անվկայ հրաշք հաստատելու համար այսպէս կ'ասէ . « Սուրբ կուսին զՏէրն մեր ծնած ատենը կոյս ըլլալը հրաշք էր . . . բայց ով կրնար զիտնալ սուրբ կուսին կուսութիւնը . » նոյնպէս օրինակ կը բերէ և Հաղորդութեան խորհուրդը : Այս մասին մենք այսպէս կը պատասխանենք Պ. Չամուրճեանին — Այն բանը որ անհաս է մարդկային մտաց , ինչպէս են Քրիստոսի մարդեղութիւնը , հաղորդութեան խորհուրդը և այլն , որոնք սոյն անհասութեան պատճառաւ խորհուրդ կոչուած են , (Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածապաշտութեան , որ երևեցաւ մարմնով , և այլն , Տիմ. Ա. Գ. 16) այսպիսի բաներուն մէջ վկանները աչքերը չ'են , այլ հաւատն է : Ամեն հաւատացողներ վկայ են Քրիստոսի անհաս ծննդեանն ի սրբոյ կուսէն և Հաղորդութեան խորհրդին՝ իրենց հաւատքով . բայց եժէ նիւթական տեսութիւն և քննութիւն կուզէ Պ. Չամուրճեան , այդ էլ Թող իմանայ , որ նշմարիտ հաւատացեալները երբեք միտք և ցանկութիւն ունեցած չ'են և չունին իրեն պէս անդամագննութեան և քիմիագիտութեան առարկայ շինել անհաս խորհուրդները և հաւատը ծաղրել :

Պ. Չամուրճեան , որովհետև ինքն չընդունիր , որ մարգարէութիւնը պէտք է պարզ լինի , երկու միտք չունենայ և մոռութիւն , այս իւր դաւանութիւնը ապացուցանելու համար բռնի յառաջ է բերել այնպիսի վկայութիւններ և այնպիսի մեկնութիւններ է տուել , որ կամակոր մտաց ծնունդ են , ինչպէս ընթերցողք պիտի տեսնեն :

Որպէս թէ Ովսէի խօսքը . « յեզիպտոսէ կոչեցից զորդի իմ » պարզ մարգարէութիւն չէ եղած Քրիստոսի վրայ, ըստ Չամուրճեանի : Որպէս թէ Յիսուս ըստ մարգարէութեանն Էմմանուէլ չէ կոչուած . և որպէս թէ Յովնանու երեք օր և երեք զիշեր մնալըն ի փոր կիտին պարզ մարգարէութիւն չէ եղած Քրիստոսի յարութեան համար :— Այնպիսի տղայական և սքօլաստիքական ձևեր են այս առարկութիւնները , որ ընթերցողներէն կը պատկառինք երկարօրէն խօսիլ այս մասին : Բայց դարձեալ այսքանը կասենք . որ Ովսէի խօսքը ամենապարզ մարգարէութիւն է և կատարուած Քրիստոսի վրայ , ինչպէս որ յայտնի է Աւետարանէն Յովսէփի փախուստը յեզիպտոս և դարձը մանկամբ և մարբ հանդերձ ըստ յայտնութեան հրեշտակի Տեառն : Յիսուս կոչուած է Էմմանուէլ , և է իսկապէս , վասն զի Էմմանուէլ կը թարգմանի ընդ մեզ Աստուած , և Յիսուս ինքն ասաց թէ՝ « Ես ընդ ձեզ եմ . » իսկ Յովհաննու մասին եղած պարզութիւնը չ'տեսնողը պէտք է փարիսեցոց և դպրաց նման չար և շնացող լինի , որոնց այսպէս յանդիմանեց Քրիստոս . « Ազգ չար և շնացող նշան խնդրէ , և նշան մի՛ տացի նմա , բայց նշան Յովնանու : Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս և զերիս զիշերս : » (Մատ. Ժ. — 4) :

Այսպէս անհ Պ. Չամուրճեան ծայրատելով և զլխէն փչած մեկնութիւնները տալով Պ. Շանշեանի դասագրքին՝ եզրակացուցել է որպէս թէ դասագիրքը կը մերժէ մարգարէութիւն և հրաշք, որպէս թէ մոլորութիւն կայ գրքի մէջ , և այլն և այլն : Բայց թող իմանայ Երեւակի խմբագիր Յովհաննէս պատուելին , որ Պ. Շանշեանը հրաշքը վկայութեամբ խոստովանելով՝ և մարգարէութիւնն պարզ՝ ոչ թէ մոլորութիւն կը քարոզէ , այլ նորա բուն իսկ նպատակն է ժողովուրդն զգուշացնել շահամոլ աչքակապներէ , կախարդներէ , հմաներէ , դիւապաշտ վհուկներէ , Յանէսի և Համբէսի նրման սուտ մարգարեներէ , դաբիրայական երկդիմի պատգամախօսներէ , խաւարաշրջիկ նեոներէ , որոնց համար ամենայն մոծութիւն , երկդիմութիւն , խաւար և ծածկութիւն միշտ ձեռնտու են պարզամիտները պատրելու համար , և որոնք լոյս և վկայ չ'են սի-

րեր, այլ կը ցանկան միշտ գիշեր լինի ժողովրդեան վրայ թագաւորած, որ իրենք համարձակ շրջին և ամեն խաղեր խաղան .

Թիղ իմանայ Պ. Չամուրճեան, որ մոլորեցուցիչն և ճշմարիտ մարգարէութիւն ուրացողն ինքն է, որ այսպէս կը սահմանէ մարգարէութիւնը իւր քրիստոնէական տետրակին մէջ . — «Զինչ է մարգարէութիւն . — Ըլլալիք բաները տարիներով առաջ իմացնել կամ շատ հին ատենները կամ հեռու տեղերը եղած բան մը մարդէ չիմացած ճիշդ պատմել : » Ինչ^օ ասել կուզէ բազմահմուտ Պատուելին : Մարգարէ կուզէ համարել ապաքաղդէական մոգերը, եգիպտական քուրմերը, և օղերեղոյթից, մոլորակաց շարժման և երևման գուշակ աստեղագէտները : Մարգարէ կուզէ քարոզել նոյն իսկ իւր անձն, և իւր օրացոյցն մարգարէութիւն, որով խաւարմունք և փոփոխութիւնք օդոց կը գուշակէ, հչ ապաքէն այս կը հետևի իւր տուած սահմանէն — Ըջալիք բաները տարիներով առաջ իմացնել : Բայց թողնենք այս, (գուցէ մի օր ստիպուինք ընդարձակօրէն խօսիլ Պ. Չամուրճեանի գրաւոր վաստակոց վրայ) և գանք այժմ Ս. զրքի ուսման հարկաւորութեան մասին խօսելու, որ մեծ մտադրութեան արժանի է :

Պ. Շանշեան իւր դասագրքի մէջ գրած է . « Որովհետև Սուրբ Գիրքն Աստուծոյ խօսք է, որով Արարիչն յալտնել է իրան կամքն, ուրեմն՝ ինչ մի այնպիսի լաւ բան կարող է լինիլ արարածի համար, ինչպէս ճանաչելն Աստուծոյ կամքը : Ուստի հարկաւոր է ամէն մարդու անպատճառ ուսանիլ Սուրբ Գիրքը, որի ուսումն ոչ թէ միայն մի իրաւունք է մարդու համար, այլ անհրաժեշտ պարտաւորութիւն, ինչպէս ասում է Քրիստոս . « Քննեցէք զգիրս, զի նոքօք համարիք դուք ունիլ զկեանս յաւիտենականս : » (Յովհ. Ե. 39 .) Այլ յօրէնս Տեառն են կամք նորա . յօրէնս նորա խորհեացի նա ի տուէ և ի գիշերի : » (Մաղ. Ա. 2 .) Առաքեալներն գրում էին իրանց թղթերն կամ ժողովքի և կամ անհատ մարդկանց վերայ և պատուիրում էին, որ իրանք կարդան և ուրիշներին ևս տան կարդալու : Պարտաւոր է ուրեմն քրիստոնեայն թէ իրան գործքով և թէ իրան խօսքով տարածել Աւետարանի ուսումն : Ով որ կամենում

է ուսանիլ Աստուծոյ կամբը՝ նրա համար Աստուածաշունչ Գիրքը շատ պարզ է, նա այնքան պարզ է, որ ամենքը կարող են ուսանիլ և գործ ղնել, ուղեցոյց ունենալով իրանց՝ եկեղեցւոյ նախնի հարցը իրանց ջերմութեամբ խորհրդածութիւններով : Քնն լիցի ասել, որ Աստուած տուել է այնպիսի յայտնութիւն, որից կախուած է մարդկային փրկութիւնը, և պարզ չէ ամենի համար : « Ամենայն զիրք Աստուածաշունչը են օգտակարք ի վարդապետութիւն, ի յանդիմանութիւն, յուղղութիւն և ի խրատ արդարութեան : » (Տիմ. 2 Գ. — 16.) « Ճրագ են բանք քո ոտից իմոց և լոյս տան շաւղաց իմոց : » (Սաղ. ՃԺԸ. — 105.) « Ապա եթէ իցէ ծածկեալ Աւետարանն մեր՝ ի մէջ կորուսելոցն է ծածկեալ : » (2 Կորնթ. Գ. — 3.) Որովհետև Աստուածաշունչ Գիրքն Աստուծոյ խօսք է, ուրեմն պէտք է կարդանք նրան նախ՝ հեզութեամբ, զգանք հարկաւորութիւն ուսման, նորոգութեան և օգնութեան Աստուծոյ : Երկրորդ՝ պէտք է կարդանք ուշի ուշով, պատուով, հնազանդութեամբ յամենայն հոգւոյ, պատճառն որ լսում ենք Աստուծոյ խօսքը, ինչպէս ասում է. « Խօսեաց, Տէր, զի լուիցէ ծառայ քո : » (Ա. Թագ. Գ. — 9.) Երրորդ՝ պէտք է կարդանք սիրով, շնորհակալութեամբ, սրբութեամբ սրտի և ջերմութեամբ : Եթէ ցանկանում ենք լուսաւորուիլ պէտք է սրբենք մեր միտքը և սիրտը ճանաչելով Աստուածային ճշմարտութիւններն և ուսանելով այն ամենայն, ինչ որ խոստացել է Աստուած և ինչ որ արել է մեզ համար, և այս ամենը միացնելով կատարեալ հաւատքի հետ, պէտք է կատարենք ամենայն պատուէր, ինչ որ պահանջում է մեզանից մեր հաւատն : Չորրորդ՝ պէտք է կարդանք աղօթքով, որ Աստուած բաց անէ մեր սիրտն իրան հոգւոյ և ճշմարտութեանց համար, ինչպէս արել է իր ընտրած մարդկանց : Այսպիսի աղօթքով խնդրում էր Դաւիթ մարգարէն, որ կարողանայ Աստուծոյ արդարութիւնը ճանաչել ասելով. « Խոստովանեղեց բեզ, Տէր, յուղղութիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քո : » (Սաղ. ՃԺԸ. — 7.) Եւ վերջապէս՝ պէտք է դատենք մեր անձը և իմանանք թէ գործ ենք զրել արդեօք Աստուծոյ խօսքը, որ պէտք է մեզ դատի, թէ ոչ : » (Տես Համ.

քրիստոնէական ուսման, Պ. Շանշեանց, երես 14 — 15) Բարեմիտ ընթերցողները ակներև կարող են տեսնել, որ մի մարդ առանց Սուրբ Գիրքն ուրանալու, չէ կարող վերոգրեալ սողերն ուրանալ, որոնք Սուրբ Գրքի ուսման հարկաւորութեան կը վերաբերին և որոնք նոյն իսկ Սուրբ Գրքի հիման վրայ են գրուած : Այդպէս է արել և Պ. Չամուրճեանը, այսինքն առաջ Սուրբ Գիրքն ուրացել է, որ կարողանայ Պ. Շանշեանի գրած ճշմարտութիւններն ուրանալ, և անն Սուրբ Գրքի վկայութիւններն ի բաց թողլով՝ պարզամիտներու առջև աչքակապութեան խաղ խաղալու համար, այսքանն է միայն առել Երեւակի մէջ յիշեալ սողերէն. — « Հարկաւոր է ամեն մարդու անպատճառ ուսանիլ Սուրբ Գիրքը, որի ուսումն ոչ միայն մի իրաւունք է մարդու համար, այլ անհրաժեշտ պարտաւորութիւն : Ով որ կամենում է ուսանիլ Աստուծոյ կամքը՝ նրա համար Աստուածաշունչ գիրքը շատ պարզ է : Նա այնքան պարզ է, որ ամենքը կարող են ուսանիլ և գործ դնել, ուղեցոյց ունենալով իրանց՝ եկեղեցւոյ նախնի հարցը իրանց ջերմեռանդն խորհրդածութիւններով : Քաւ լիցի ասել, որ Աստուած տուել է այնպիսի յայտնութիւն, որից կախուած է մարդկային փրկութիւնը և պարզ չէ ամենի համար » : Մոռացանք ասել, որ այն կտորը բոլորովին չէ ուզել տեսնել, որով բացատրուած է թէ ինչպէս պէտք է կարդալ Սուրբ Գիրքը և որն որ հեղինակի բարեպաշտութեան և ջերմեռանդութեան ճշգրիտ պատկերն է :

Եւ անն այսպէս կրճատելէն զկնի՝ սկսել է մի նորօրինակ և օտարոտի վարդապետութիւն արել Երեւակի 118 թուոյն մէջ, որոյ բովանդակութիւնը բառ առ բառ քաղուածելով՝ առաջ կը բերենք այս տեղ ընթերցողաց մտադրութիւնը անոնց վրայ դարձնելու՝ և հերքելու . 1. « Թէ որ Սուրբ Գիրքը կարդալը հաւատք ստրկելու համար կարեւորութիւն ունենար և հոգւոյ փրկութիւնն անկէց կախեալ ըլլար նէ, Սուրբ առաքեալները ինչ եռանդեամբ հաւատք քարոզելու կաշխատէին նէ, նոյն եռանդեամբ ալ դպրատուններ բանալու աշխատելու էին » : 2. « Թէ որ ասանի ըլլար նէ (այսինքն թէ որ Սուրբ Գրքի ուսումն կարեւորութիւն ունենար) Տէրն մեր աշխար-

հիս երեսը պտտած ատենն ըրած քարոզութիւնները առաքեալներուն մեկին զրել կրնար տալ, վասն զի առաքեալներն ամենն ալ կարդալ զրել չգիտցող մարդիկ չէին » : 3 « Առաքելոց մէջ հաւատոյ վարդապետութիւնը զրի առնող չըկայ Մատթէոս աւետարանչէն առաջ Սուրբ Պօղոս առաքեալը ամեն մէկ նամակը մէկ մէկ պատճառով զրեց . թէ որ այն պատճառները չըլլային նէ , պիտի չը զրէր » : 4. « Ինչու՞ համար Սրբազան առաքեալները և ոչ նոյն իսկ Տէրն մեր հաւատոյ հոգեկեցոյց վարդապետութիւնը զրով չ'աւանդեցին . վասն զի զրուածը դիւրաւ չը հասկցուիր » : 5. « Պօղոս առաքեալը Նոր Կտակարանին պաշտօն կը ցուցնէ բերնով վարդապետութիւնը . . . հաւատոյ վարդապետութեան հոգին չէ թէ զըրոց վրայ , այլ բերնով քարոզութեան վրայ է . « Արար զմեզ պաշտօնեայս նորոց Կտակարանացս , ոչ զրով , այլ հոգւով . (ըստ Զամուր. բերնով) զի զիրն սպսնանէ , այլ հոգին (ըստ Զամուր. բերանըն) կեցուցանէ » :

Վերոգրեալ խօսքերէն յայտ յանդիման կը տեսնուի , որ Պ. Զամուրեան բացարձակ կը խոստովանի որ Սուրբ Գրքի ուսումն հարկաւոր չէ և նորա պարունակած ճշմարտութիւնները փրկութեան և վարդապետութեան հիմունք չ'են . կը խոստովանի , որ Սուրբ Գիրքը զրուած է ստիպմամբ և ակամայ , այսինքն առանց Քրիստոսի և առաքելոց կամբին . կը խոստովանի որ միայն բերան հարկաւոր է և բերանով աւանդութիւն , և ոչ գիրք . կը խոստովանի հետևապէս որ Սուրբ Գրքի թարգմանութիւնքն ևս ընդդէմ են քրիստոնէութեան , վասն զի Քրիստոս զրել անգամ չկամեցաւ , թող թէ բազմամիւ լեզուներով թարգմանել : Առ քեզ մոլորութիւն մոլորութեան և յանդուգն ծնամանք ընդդէմ Աստուծոյ , ընդդէմ քրիստոնէութեան և ճշմարտութեան :

Բայց թէ ինչու Զամուրեան այսպէս փականքի և արգելարանի տակ կը դնէ Սուրբ Գիրքը՝ ինքն կը պատասխանէ այս մասին . « Անձամբ Սուրբ Գիրք կարդալն բողոքականութեան հիմն է , կըսէ . միայն առաքելոց միտքն բացաւ Սուրբ Գիրքն հասկնալու , կըսէ . առաքեալներէն զատ մէկի մը համար այսպիսի խօսք մը չըկայ ,

կրսէ: » Եւ այսպէս ըստ իւր դաւանութեան միայն եկեղեցականներուն կուգէ սեպհականել Սուրբ Գիրքը: Քայց թէ ինչ իրաւունքով ինքն կը մեղանչէ իւր դաւանութեան դէմ, և ոչ թէ միայն Սուրբ Գիրք կը կարդայ, կը մեկնաբանէ, կը ծռումէ, այլ և զինքն ի վեր քան զՊատրիարք և զԿրօնական ժողով համարելով՝ նոցա վաւերացուցածն կրկին կսկսի քաշել և քաշքշել. այստեղ է ահա աչքակապութեան բուն գաղտնիքը:

Իսկ մենք՝ մեր եղբարքը — Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակներուն — յայտնապէս կասենք որ ամենին ականջ չը դնեն մարդասպաններուն, (որոնք եթէ հնարք ունենան Սուրբ Գիրքը շղթայով կը կապեն և կը բանտարկեն իբրեւ 1800 տարուան յանցաւոր), այլ թող սիրեն և ընծերցասիրեն այն հանուր մարդկային ազգի միակ միաբնակութեան Գիրքը, ինչպէս սիրել են մեր Նախնիքը, որով զարգացել է մեր Ազգի հոգևոր կեանքը և զրականութիւնը և որով կարէ զարգանալ մեր բարոյական ոյժը, անխոչ գործունէութիւնը և կատարելագործութեան եռանդը: Մենք կասենք բացարձակ և ցոյց կտանք, որ հարկաւոր է ուսանիլ և կարդալ Սուրբ Գիրքը. —

Վասն զի պատշաճ է կարդալ.

Վասն զի կարդացել են ճշմարիտ հաւատացեալք.

Վասն զի կարդացել են Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակները.

Վասն զի պարտ է կարդալ.

Ա. Սուրբ Գիրքը պատշաճ է կարդալ. — Իսրայելացւոց ազգի զլիաւորները, ոչ թէ միայն կը կարդային, այլ և իրենց ձեռքով կ'օրինակէին հին Կտակարանը, իշխանութեան համեմուտ համար, որ անդադար ընծեռնուն: « Եւ ընծերցի զնա զամենայն աւուրս կենաց իւրոց, զի ուսցի երկնչիլ ի Տեառնէ: » (Բ. օր. ԺԸ. — 19) Դատաւորք Ղևտացիք, քահանայք, սոսկականք, ամենքը առ հասարակ, ամեն վիճակէ, մեծ և փոքր, պարտաւորուած էին իրենց մտքի մէջ դրօշմել, իրենց որդւոցը ուսուցանել և նաև զրանց սեմոց վրայ գրել. « Եւ եղիցին պատգամքս այսոքիկ, զորս ես պա-

տուիրեմ քեզ այսօր, ի սրտի քում և յանձին քում և իմացուցես զայս որդւոց քոց և խօսեսցիս նոքօք ի նստիլ ի տան, և զնալ՝ ի ճանապարհի, ի ննջել և ի յառնել և արկցես զսոսա նշան ի ձեռին քում և եղիցի անշարժ առաջի աչաց քոց և գրեսցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց և ի դրունս քո: » (Բ. օրին. 2. 7. 9.) իսկ տաղաւարահարաց տօնին յատկապէս պատուէր կար հանդիսապէս ընծեռնուլ ի լսելիս բոլոր ժողովրդեան:

Քրիստոս պատուէր կը տայ. « Քննեցէք զգիրս, զի նոքօք համարիք ունել զկեանսն յաւիտեանական: » (Յով. Ե. 39.) Եւ ծանիջիք զճշմարտութիւնն և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ: » (Յով. Ը. 32.)

Առաքեալք իրենց Թղթերը կը գրէին Թէ ժողովքի և Թէ անհատ մարդկանց վրայ, և կը պատուիրէին կարդալ. « Որպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սակաւուք առ ի կարող լինելոյ ընծեռնուլ և ի միտ առնուլ զիմաստութիւնն զիմ ի խորհրդեան Քրիստոսի: » (Եփես. Գ. 3-4) « Եւ յորժամ ընծեռնուցու առ ձեզ զԹուղթդ, արասջիք զի և ի Լաւողիկեցւոց եկեղեցւոջն ընծերցի և զառ ի Լաւողիկեցւոցն և դուք ընծեռնուցուք: » (Կող. Գ. 16.)

Յովհաննէս Աւետարանիչն երանի կը տայ Սուրբ Գիրք կարդացողին. « Երանի որ կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգարէութեանս այսորիկ: » (Յով. Յայտ. Ա. 3) Պօղոս երգում կը տայ կարդալ. « Երգմանցոցանեմ զձեզ ի Տէր ընծեռնուլ զԹուղթդ առաջի ամենայն եղբարց սրբոց: » (Թեսաղ. Ա. Ե. 28.) Գործք Առաքելոցը կը գովէ Բերիացիք Ս. Գիրք կարդալու համար. « 2ի սոքա ազնուականացոյնք՝ քան որք ի Թեսաղոնիկն էին, որք ընկալան զբանս ամենայն յօժարութեամբ, հանապազ քննէին զգիրս, եթէ իցէ՝ այս այսպէս: » Գործ. ԺԷ. 11.)

Բ. Ճշմարիտ հաւատացեալք միշտ կարդացել են Սուրբ Գիրքը. — Քրիստոնէութեան տարածման հետ պարտաւորութիւն եղած էր քրիստոնէից ընծեռնուլ Սուրբ Գիրքը: Հայրը կը մեկնէր և կուսուցանէր իր որդւոյն, կնոջն, ծառայիցն, նոյնպէս կ'առնէին և մարք, այնպէս որ, իւրաքանչիւր տուն եկեղեցի էր, կասէ Ոսկերեբան:

Ոչ՝ միայն հովիւք , այլ և աշխարհական քրիստոնէից շատերն ի բերան զիտէին Սուրբ Գիրքը . վասն զի անդուլ կընծերցասիրէին , իրենց հետ կը կրէին , ինչպէս որ շատ սրբոց մարմինք գտնուեցան Աւետարան լանջաց վրայ և նոյն իսկ Ոսկեբերանն կասէ Թէ՛ իրեն ժամանակ շատ կանայք Աւետարանն իրենց պարանոցէն կախած ունէին : Շատերը կը ցաւէին հալածանաց ժամանակ , որ զրկուած են Սուրբ Գրքի կարդալէն : Որպէս զի անբարոյական և առասպելախառն գրքեր չկարդան քրիստոնեայք , այլ Սուրբ Գիրք ընծերցասիրեն , այսպէս կը հրաւիրէ ոմն ՚ի հնոց . « Զի՞նչ քեզ պակաս իցէ յԱստուածաշունչ զիրս . եթէ պատմութեան ըզճանայցես , ահա քեզ Թագաւորացն զիրք . եթէ իմաստասիրութեան և քերթողութեան , ահա Մարգարէքն , ահա Յովք , ահա Առակքն , յորս բազմապատիկ առաւել հանճարս գտանիցես քան ի բնաւ քերթողս և իմաստասէրս , զի Աստուծոյ են խօսք՝ որ միայն է իմաստուն . եթէ երգս խնդրես՝ ահա ունիս զՍաղմոս , եթէ զհնոցն վէպս՝ աւանիկ Մննդոցն Գիրք , եւ պարզաբար ասել օրէնք Տեառն զբնաւ փրկաւէտ պատուէրս և զխրատս ուսուցանեն քեզ : »

« Կամիս այլ ևս միսիծարութիւն չահիլ , կաղաղակէ Ոսկեբերան , հրամայեան դպրացն ժողովել զգիրս աստուածեղէն օրինացն առնուլ և ընծեռնուլ » : Կամիս տեսանել (զհաւատացեալն սուրբ արտիւ) բերան նորա իմաստութիւն և հանճար է և զնոգւոր օրհնութիւնս գետել . և սիրտ՝ զրոց տեղեկութիւն և ճշմարիտ կրօնից զգուշութիւն , մարդասիրութեան և քաղցրութեան կրթութիւն : » Փութաբար ընծերցջիր զգիրս աստուածային , կը յորդորէ Ս. Եփրեմ , զի այն իսկ գներքինին պայծառագործեաց . . . զի մեծ իմն վճար է զրոց վերծանութիւն » : Որ՞ մէկը թուենք , որ մէկը գրենք , բաւական կը համարինք Ոսկեբերանի խօսքը կրկնել . « Սատանայական մտաց է այն՝ որ ոչ տան հայիլ մեզ ի զանձն (յաստուածեղէն Գիրան) զի մի և զմեծութիւնն շահեսցուք : »

Գ. Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակները միշտ հարդացել են Ս. Գիրք . — Հայկական կենաց մէջ՝ հայերէն զրոց գիւտը և Սուրբ Գրքի Թարգմանութիւնը այնպիսի մի նշանաւոր դարացուի է , որ ոչ

Թէ միայն ամեն գրագէտ հայ , այլ և շատ անգրագէտք անգամ՝ անանդութեամբ զիտեն : Ամենքը կը խոստովանին որ , Թէ՛ հայկական գրոց զիւտը և Թէ՛ Աստուածաշնչի Թարգմանութիւնը ծնունդ են հարկաւորութեան ուսման Սուրբ Գրոց : Թէ՛ ինչ աշխատանք և տքնութիւնք են կրել այդ մասին մեր անմահ Թարգմանիչք և Թէ՛ հրչափ ուրախացել են Սուրբ Գրքի Թարգմանութեան կատարման համար , բարձրաբարբառ վկայք են այս մասին մեր պատմագիրները , և Թէ՛ ինչպէս իսկ և իսկ ուսուցանելու համար են Թարգմանել , անհ , ի միջի այլոց , Ղազար Փարպեցւոյ խօսքերը « Եւ տարեալ ի զլլուխ Ս . Հայրապետին Սահակայ զգործ մեծ հոգևոր վաստակոյն (Թարգմանութեան) կարգեցան վաղվադակի յայնմհետէ դպրոցք հոտին ուսմանց , բազմացան դասք զրչաց՝ ելլելս առնելով զմիմեամբ ևայլն » : Ուր՞ Թողունք Ս . Մեսրոպայ դպրոցները ի Փողման , ի Փոքր Ասիայ , յԱղուանս , ի Վրաստան և յայլ տեղիս , որոց բուն նպատակն էր Սուրբ Գրքի ուսումն ծաւալել : Ուր՞ Թողունք հայհական եռանդեան այն հրաբորբոք դարը , ուր , ըստ Եղիշէին , « Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր , նոյն ինքն քահանայ , մարմինք իւրաքանչիւր՝ սուրբ սեղան և ոգիք նոցուն՝ պատարագ ընդունելի : Ուր « Սաղմոսք էին նոցա մրմունչք երգոց և ընծերցուածք սուրբ Գրոց կատարեալ ուրախութիւնք » : Ուր՞ Թողունք , որ ոչ Թէ միայն եպիսկոպոսունք և երիցունք , այլ և նախարարք և զօրավարք Սուրբ Գրոց ուսմամբ կ'եռային , ուր ոչ միայն Վարդան պատերազմի դաշտին մէջ Մակաբայեցւոց՝ զիրքը կը կարդար , այլ և Հայոց աշխարհի փափկասուն տիկնայքը Սուրբ Գրքով կը մխիթարէին — « Զի ինքն իսկ (Վարդան) տեղեակ էր ի մանկութենէ Սուրբ Կտակարանաց : Զոր ի ձեռն առեալ զքաջ նկարագիր Մակաբայեցւոցն ընծեռնոյր ի լսելիս ամենեցուն և յորդառատ բանիւր զելս իրացն իմացուցանէր նոցա » : Իսկ Հայոց աշխարհի կանանց համար այսպէս կասէ Եղիշէն , « Սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մըրմունչք ի բերանս նոցա և մխիթարութիւնք կատարեալ ընծերցուածք մարգարէիցն » :

Ուր՞ Թողունք , որ ոչ Թէ միայն մեր կրօնական , մեկնողական , վար-

դապետական և աղօթական զրբերու մէջ կը փայլին Սուրբ Գրոց ցոլացմունք, այլ և մեր Նախնեաց բանաստեղծութիւնն անգամ բղխուածք են Սուրբ Գրոց, այլ և պատմագրութիւնք անգամ կրօնական տիպ կը կրեն իրենց վրայ: Ուր՞ Թողունք որ շատ անգամ եկեղեցականները տկարացել են մայրենի եկեղեցւոյ դաւանութեան մէջ և աշխարհականք Սուրբ Գրոց հմտութեամբ պաշտպանել են իրենց եկեղեցւոյ ճշմարիտ դաւանութիւնը, ինչպէս Գագիկ պաշտպանեց Սուրբ եկեղեցւոյն մէջ և Յունաց աստուածաբանները պապանձեցոյց (տես Մատթէոս Ուրհայեցի): Ուր՞ Թողունք Լուսաւորչի յորդորները աստուածային ուսմանց, Ս. Սահակայ կանոնական պատուէրները, և նամականի Ներսիսի Շնորհալոյն, որոյ համար աւանդութիւնը կը պատմէ թէ Հռոմկլայի բերդապահներուն և զիշերապահներուն անգամ պատուիրեց զիշերները փոխանակ անձոռնի երգոց՝ երգել. — « Յիշեսցուք ի զիշերի և այլն: »

Ուր՞ Թողունք, որ Սուրբ Գրոց ուսման հարկաւորութիւնը և սէրը այնչափ զգալի և տարածուած է եղել Հայոց մէջ, որ բիւրաւոր ձեռագիր Աւետարան և Աստուածաշունչ է եղել սփռուած Հայաստանին մէջ, որոնք որչափ և դարերով՝ հրոյ, սրոյ և աւերածութեան ճարակ եղան, դարձեալ այսօր իսկ հազարաւոր օրինակներով կը գտնուին, և միայն Էջմիածնի մէջ հարիւրներով ձեռագիր աւետարան կայ և եօթանասունէն աւելի Աստուածաշունչ: Ուր՞ Թողունք որ այս ուսման սէրն և սովորութիւնն կը շարունակի տակաւին Հայաստանի զիւղերուն մէջ, ուր Սաղմոս և Աւետարան են ընթերցանութեան առաջին գրեանքն:

Երբոր մի հայ գրագէտ Սուրբ Գրքի պատուէրները, քրիստոնէից կատարածները և նոյն իսկ Հայաստանեայց եկեղեցւոյ հոգին կուրանայ, որ 18 դար անընդհատ ապրել է միայն Սուրբ Գրքով, երբոր այս ակներև ճշմարտութիւնները ջանահնար կը լինի ծածկել և Սուրբ Գիրքը փակել Հայկազն ժողովրդեան առաջ, միթէ կարող է նա սիրել Պ. Շանշեանի դասագիրքը, որ շարահիւստուած է Սուրբ Գրոց և Սուրբ հարց վկայութեանց վրայ: Բայց մենք՝ ոչ թէ Պ. Չամուրճեանն համոզելու համար (որ իր վարդապետու-

թեամբ իր անձն արդէն հանած կերելի Հայաստանեայց եկեղեցիէն) այլ մեր Հայ եղբայրները սիրելու համար, դարձեալ կը կրկնենք որ հարկաւոր է ուսանիլ, հարկաւոր է կարդալ Սուրբ Գիրքը:

Դ. Պատճառն ուսանիլ Սուրբ Գիրքը, — վասն զի Աստուծոյ կամքն է, նորա խօսքը, նորա ճշմարտութիւնը, մեր կենաց առաջնորդող լոյսը և ճրագը. « Ճրագ են բանք քո ոտից իմոց և լոյս տան շաւղաց իմոց »: Մեր եկեղեցւոյ ամեն զաւակները պարտական են կարդալ, ինչպէս կարդացել են մեր նախնիքը, վասն զի մեր եկեղեցին քրիստոնէական եկեղեցի է և ոչ քրմապետական, որ միայն քուրմերուն պահած լինի ընծերցումն: Քրմապետութեան արքանեակները կարող են մեր եկեղեցիէն դուրս գնալ և ժահահոտ ու բորբոսած գաղափարներով զլուխ չը ցաւեցնել: Ամենին հարկաւոր է ուսանիլ, վասն զի ամենի համար խօսուած և զրուած է Սուրբ գիրքը, վասն զի հարկաւոր է կարդալ, որ ոչ միայն մխիթարուինք, այլ և ամեն հոգւոյ և ամեն մոլար վարդապետութեան չը հաւատանք, գրոյն հաւատանք, այլ և զգուշանանք չար մշակներէ, սուտ մարգարէներէ, խաւարամիտ քարոզիչներէ, դիւապաշտպան երազախօսներէ, և այլն և այլն: Հարկաւոր է ուսանիլ Սուրբ Գիրքը և երանի թէ Աստուածաշնչի տպագրուած և ձեռագիր օրինակները իրար հետ համեմատուին և հազարաւոր օրինակ Աստուածաշունչ տպագրուի Սուրբ Էջմիածին, որպէս զի չ'մուրանք օտարներէն, որպէս զի դիւրահաս և ձեռնահաս լինի Հայաստանեայց եկեղեցւոյ որդւոց համար, որ իւրաքանչիւր որ ուսանելով և ընծերցասիրելով և հոգեպարար կերակրովն զմայլելով՝ կարենայ ասել Եզեկիէլ մարգարէի հետ. « Կերի զայն և եղև ի բերանի իմում իբրև զբաղքութիւն մեղու: » (Եզ. Գ. 3.):

Այսպէս անս քանի որ մեր Հայաստանեայց եկեղեցին իւր սկզբնաւորութեան օրէն ցարդ՝ անհրաժեշտ պարտաւորութիւն քարոզած է Սուրբ Գրքի ուսման հարկաւորութիւնն իւր ամեն զաւակաց համար, և քանի որ Պ. Չամուրճեան նոյն հարկաւորութիւնն բացարձակապէս կ'ուրանայ, հարկ չը մնար ասել ուրեմն, որ ինքն չը պատկանիր նոյն եկեղեցւոյն: Հարկ չ'մնար ասել նոյնպէս, որ

Սուրբ Գրքի ուսմամբ հարկաւորութիւնն ուրանալով՝ կ'ուրանայ և ամեն ճշմարտութիւն, ամեն կատարելութիւն և ամենայն ջանք և փափաք սրբութեան և նորոգութեան, որոնք իւրաքանչիւր քրիստոնէի անպայման պարտականութիւնքն են: Անցնինք ուրեմն Պ. Զամուրճեանի ուրացութեան միւս կէտերուն:

2. Զամուրճեան Երեւակի 119 թուոյն մէջ կ'ուրանայ Հոգւոյն Սրբոյ ներգործութիւնը եկեղեցական խորհրդոց մէջ՝ հակառակ այն ճշմարիտ ասացուածքին, որ Շանշեան գրած է իւր դասագրքի 20 երեսում թէ. « Հոգին Սուրբ ներգործում է մարդու վրայ . . . աղօթքով և եկեղեցական խորհուրդներով »: Եթէ եկեղեցական խորհրդոց մէջ Հոգւոյն սրբոյ ներգործութիւն չ'կայ, ինչպէս կը պնդէ Երեւակի նոր աստուածաբանը, ինչու համար են ուրեմն սահմանուած Քրիստոսի եկեղեցւոյն մէջ: Ինչո՞ հարկաւորութիւն ունին այն սուրբ արարողութիւնքն, եթէ եկեղեցւոյ զաւակաց հոգւոյն և սրտին վրայ չ'պիտի առնեն մի փրկարար ազդեցութիւն Հոգւոյն Սրբոյ: Ինչու՞ համար են այն գրքերը, աւետարանները, սաղմոսները, աղօթքները, քարոզները, երգերը և շարականները, որոնք կը կարդացուին խորհրդոց կատարման ժամանակ և որոց մէջ զիսաւորապէս կը խօսուի Հոգւոյն սրբոյ ներգործութեան վերայ, և կը հայցուի նորա օգնութիւնն՝ սրբութեան և նորոգութեան համար, հաւատով զօրանալու և յուսով ամրանալու համար: Երբոր Պ. Զամուրճեան իւր այլանդակ բժախնդրութեան կրքէն կուրանալով՝ հոգւոյն սրբոյ ներգործութիւնը կ'ուրանայ եկեղեցական խորհրդոց մէջ, իր խօսքէն կը հետևի ուրեմն, որ չընդունիր Հոգւոյն սրբոյ ներկայութիւնը ժամերգութեան մէջ և եկեղեցին կը համարէ անկենդան և անհոգի լոկ ծիսակատարութիւն: Բայց թող իմանայ նորաբան Պատուելին, որ այդպիսի եկեղեցի չ'կայ, և եթէ կայ՝ այն էլ Զամուրճեանց ժողովարանն կարէ լինել և ոչ թէ Հայաստանեայց եկեղեցի:

Պ. Զամուրճեան հակառակ քրիստոնէական կատարելագործութեան և հետևապէս հակառակ Պ. Շանշեանի քրիստոնէական երկասիրութեան (ուր երես 20 ասուած է թէ. « Մարդս երբէք չ'պետք

է ընդդիմանայ Հոգւոյն սրբոյ , այլ միշտ պէտք է որոն է ճշմարտութիւն ») մի տեսակ անարգ իմաստակութեամբ կը ծաղրէ ճշմարտութիւն որոնելու պարտաւորութիւնը և կը վարդապետէ թէ չպէ՛ս հ որոնել ճշմարտութիւն : Բայց առաւել լաւ կանէր Չամուրճեան, եթէ պիղատոսի նման հարցնէր թէ « Զինչ է ճշմարտութիւն » քան թէ որոնելու հարկաւորութիւնը ուրանար և ծաղրէր , վասզի ճշմարտութեան հարկաւորութիւնն ուրանալն աւելի վատ է քան թէ ճշմարտութիւն չճանաչելն : Ամեն ժամանակ և ամեն դար տգիտութեան, և ստութեան բարեկամները և խաւարի սպասաւորները Չամուրճեանի սկզբունքն են վարդապետել ժողովուրդը տգիտութեան, անտրիապաշտութեան և ֆանատիկութեան մէջ զլորելու համար , իմանալով ' որ տգիտութիւնը ամեն բանի կհաւատայ , անտրիապաշտութիւնը դատաստան և քննութիւն չսիրէր և ֆանատիկութիւնը օժանդակ կլինի ստութեան պաշտօնեաներուն իրանց ցանկացած խաղն խաղալու և ամեն աչքակապութիւն ' որպէս ճշմարտութիւն ծախելու : Բայց բարեբաղդաբար ' ճշմարտութեան ընտիր նահատակները թմրութեան, անշարժութեան և ստութեան դէմ միշտ պատերազմած են և իրանց կեանքով ու մահով միշտ քաջալերած են պատերազմելու, վասն զի հոգեկան թմրութիւնն մարդկային ամեն տկարութենէն վտանգաւոր և կորստական է ճանաչուած : Եւ այս փառաւոր նահատակութեան անխորտակելի զօրութիւնը այն փրկարար պատուէրներուն մէջ է , որով քրիստոնէութիւնը կպատուիրէ միշտ աղօթել , միշտ հսկել , միշտ հայցել , միշտ բաղիւնել , միշտ խնդրել , միշտ որոնել , միշտ անիշ շնորհօք եւ գիտութեամբ , և միշտ ջանալ լինիլ կատարեալ , որպիս եւ Հայրն երկնաւոր կասարեալ է :

Այս արժնութեան և կատարելագործութեան սկզբունքն ուրանալ ' կնշանակէ քրիստոնէութեան հոգին ուրանալ . վասն զի ' աստուածանմանութիւնն այնպիսի մի մեծ ասպարէզ է քրիստոնէի համար, որ անդադար պարտաւորուած է մէկ առաքինութենէ միւսն վերածնել և ունեցած շնորհքն ու քանքարն շահեցնել , վասն զի ' թմրութեամբ ' մի րուպէի մէջ կարող են կորնչիլ մարդուս բարոյական հարստութիւններն, որոնք նիւթականի նման չ'են, որ արկղի մէջ փակուին

և պահպանուին: Այս պատճառաւ է, որ երանութիւն է խոստացած նոցա՝ որոնք ծարաւի են, որոնք աղքատ են հոգւով և միշտ ճշմարտութիւն, արդարութիւն և սրբութիւն կ'որոնեն: Եւ ոչ ապաքէն այս արձնութեան և ճշմարտասիրութեան դասն կը կրկնէ Պ. Շանշեան, երբոր կ'ասէ. « Մարդս ևս պէտք է աշխատէ իրա կողմից, որ արժանանայ Աստուածային ողորմութեանը: Պէտք է ունենայ հետևողութիւն զործ դնել այն օգնութիւնները, որ Հոգին սուրբ տալիս է նորան և ամեն ժամանակ պէտք է մտքումը պահէ ոչ թէ իբրև լոկ ճանաչողութիւն կամ գիտութիւն, այլ ունենայ հեզ ճշմարիտ և խոնարհ սիրտ, որ երբէք չընդդիմանայ Հոգւոյն սրբոյ, այլ միշտ որոնէ ճշմարտութիւն »: Այս չէ արդեօք և Դաւիթ մարգարէի աղաղակն « Առաքեան, Տէր, զոյս քո և զճշմարտութիւնս քո, զի առաջնորդեսցեն ինձ և այլն »: Եւ միմէ Պ. Չամուրճեան սորա ներհակն պնդելով չի նմանիր Աւետարանի անհաւատարիմ ծառային, որուն յանդիմանեց Տէրն ասելով. « Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ, ծառայ անհաւատ . . . Ընդէր ոչ ետուր զարծածն իմ ի սեղանաւորս և եկեալ ես տոկոսեօք պահանջէի: »

Պ. Չամուրճեան Երեւակի 118 թուոյն մէջ Սուրբ Գրքի կարդալն արգելելէն զկնի՝ 122 թուոյն մէջ էլ քարոզելն կարգելու՝ հակառակ Պ. Շանշեանի այս ասացումին. « Հոգւոյն սրբոյ տուած հասարակ շնորհքներն բազմաթիւ են և զանազան: Այս կարգումն կարելի է դնել ամենից առաջ այն ճանաչողութիւնն, որ մենք ստանում ենք կարդալով և քարոզելով Աստուծոյ խօսքը: Սա ևս Հոգւոյն սրբոյ շնորհքն է, պատճառն որ նորա զօրութեամբ գրեցին Սուրբ Գիրքն Մարգարէք և Առաքեալք » (երես 57): Այս տողերը կարդացող եկեղեցականը անպատճառ իւր քարոզչական պարտքը պիտի հասկանայ և աշխարհականը՝ պատահած ժամանակին խօսել և պատմել իւր իմացած քրիստոնէական ճշմարտութիւնները, առանց մտքէն անգամ անցնելու՝ շուրջառ ձգելու և սեղան ելնելու, ինչպէս Չամուրճեանն կերպաբանէ, բայց թէ ինչո՞ւ կարգելու հրաշաքան պատուելին, ինչո՞ւ կշիռի և կզարիուրի կարդալ և քարոզել բառերէն, ինչո՞ւ կբաշքէ և խելքէն փչած խեղածիւր մեկնութիւններն կըտայ:

Այսպէս կը պատասխանէ ինքն . — Սուրբ Գիրք կարդալն եւ քարոզելն երիցականութիւնն է , քողոքականութիւնն , եւ հեռեւապէս մոլորութիւնն : Այ՞ քեզ իմաստակ բանաբաղումիւն : Ով՞ ասաց Պ. Չամուրճեանին , թէ Հայ քրիստոնէայն իրաւունք չունի Աստուծոյ խօսքը կարդալ և խօսել : Ով՞ ասաց նորան , թէ Հայ ծնողը իրաւունք չունի իւր զաւակներուն Աստուծոյ պատուէրները քարոզել : Ով՞ ասաց նորան , թէ Հայ ուսուցիչը իրաւունք չունի իւր աշակերտներուն քրիստոնէական դասեր ուսուցանել : Ով՞ ասաց նորան թէ Հայք իրաւունք չունին իրանց ընկերութեանց մէջ Աստուծոյ խօսքը խօսել : Եւ միթէ քարոզել . միայն առաքելութիւն անել կնշանակէ , մի թէ մեր ամեն խօսքերը քրիստոնէական ճշմարտութեամբ — իբրեւ աղիւ — համեմեալ չպիտի լինին , ինչպէս Առաքեալն կպատուիրէ : Ինչ՞ յանդգնութեամբ ուրեմն կը ջանայ Պ. Չամուրճեան Աստուծոյ խօսքը Հայ գերդաստաններէն , դպրոցներէն և ընկերութիւններէն հալածել : Կուզէ որ Պղնձէ Քաղաք և Եփեմերտի կարդան և խօսեն , թէ Երեւակ կարդան և քարոզեն : Երեւակ կարդալ կպատուիրէ Պ. Չամուրճեան , Երեւակ , զոր Թեթևամտաբար Սուրբ Գրքի տեղ դնելով այսպէս կ'ասէ 123 Թուոյն 205 Երեսին մէջ . « Եկեղեցականք , որ այս Թերթը (Երեւակը) չ'են կարդար , կամ նպատակը ինչ ըլլալը , կամ իրենց պաշտօնին պարտաւորութիւնը չեն գիտեր » : Իմացէք , եկեղեցականք հայոց , որ դուք ձեր պաշտօնին պարտաւորութիւնը պիտի ճանաչէք , ոչ թէ Սուրբ Գրքով , (որոյ ուսման հարկաւորութիւնը կմերժէ Պ. Չամուրճեան) այլ Երեւակով , հրաշագան և զարմանազան Երեւակով : Վայ քեզ կոյր իմաստակութիւն , որ լուսոյ և ճշմարտութեան աղբիւր Սուրբ Գիրքը կ'ջանաս հայու ձեռքէն յափշտակել և հայութիւնը անդրալեռնեան վիհը գլորել , պապական նեխած գաղափարներով :

Պ. Չամուրճեան զայրանալով Շանշեանի քրիստոնէական երկասիրութեան դէմ (ուր երես 57. 58. բացէ ի բաց մերժուած է մոլեկրօնութիւնն , որպէս հակառակ շնորհաց Հոգւոյն Սրբոյ , և որ հակառակ քրիստոնէական մարդասիրութեան և որպէս սրբութեան պէս արմատ տմարդի հալածասիրութեան) բացարձակ ջատագով

կը հանդիսանայ մոլեկրօնութեան՝ Երեւակի 123 թուոյն մէջ: Խրատ
կտայ եպիսկոպոսներուն, որ մոլեռանդ լինին և հալածեն օտար
դաւանութիւնները, նա մանաւանդ մոլեկրօնութիւնը թագաւորաց
և իշխանաց անհրաժեշտ պարտականութիւն կ'համարէ՝ տէրու-
թեանց բարեկարգութեան և հանգստութեան համար հսկելու: Ար-
դեօք որչափ կը ղգանայ Պ. Չամուրճեան, որ կրկին վերադառնան
սպանիա — կրօնական փայտակոյտները, խարոյկները, բանտերը,
օղօղափէները, որով հաւատաքննութիւնը կ'որհնէին, կը սրբէին և
մարդիկ զոհելով՝ կը համարէին պաշտօն մատուցանել Աստուծոյ:
Արդեօք որչափ կը տազնապի և կը քրտնի Պ. Չամուրճեան դահին-
ներ զանել սիրոյ և ներողութեան Աւետարանի մէջ և ֆանատիկու-
թեան նաւակատիք կատարել: Որչափ՝ կը փափաքի մոլեկրօնու-
թեան դաւանակիցներ ունենալ, եկեղեցականաց մէջ իշխանապիւրու-
թիւն գրգռել և հալածանք յարուցանել, Բայց ի զուր աշխատանք
և անպտուղ եռանդ: Հայաստանեայց եկեղեցին երբէք մոլեկրօ-
նութեամբ իւր սեղանն չէ պղծած, թող ուրեմն Հնդկաստանի բը-
րահմաներու մէջ համախոհ ընտրէ իւր համար Պ. Չամուրճեան,
եթէ սպասաւորել կը ցանկայ մոլեկրօնութեան: Թող իմանայ, որ
ինչպէս Պ. Շանշեան, նոյնպէս և Հայոց եկեղեցւոյ իւրաքանչիւր
զաւակը մերժելով կը մերժեն մոլեկրօնութիւնը, վասն զի իրենց ե-
կեղեցին բոլոր մարդկութեան համար կ'աղօթէ, վասն զի կը հալա-
ծուի, բայց հալածել չ'քարոզէր երբէք, կը վիրաւորուի, բայց չի
վիրաւորէր, վասն զի պարանոց ունի, բայց սուր ոչ երբէք, և
այսօր նորա միակ պարծանքն է հալածեալ եկեղեցի անուանիլ և
ոչ հալածող և հալածանքները նորա ընտրութեան, սրբութեան և
անարատութեան բարձրաբարբառ վկայքն են և իւր պատմութիւ-
նն է պարզապէս Պատմութիւն Աշխարհաբան: Անցնինք ուրեմն
Չամուրճեանի Աշխարհաբանութեան կէտին վրայ խօսելու:

Ամեն Աշխարհա քրիստոնէայք կ'ստատովանին, որ քրիստոնէութեան հաստատման համար՝ ի սկզբան հրաշքներ յաճախ կը գոր-
ծուէին, բայց որչափ որ քրիստոնէութիւնը տարածուեցաւ, այնչափ
հրաշից կարեւորութիւնը նուազեցաւ: Հրաշքը ամենակարեւոր էր,

որպէս զի Հոգին սուրբ բնական գտնէ իր համար մարդկանց սրտերուն մէջ, որպէս զի իւր նորոգութիւնը հաստատուի աշխարհումս և ինքն իւր ճշմարտութիւններով և շնորհքներով միանայ մարդկութեան հետ և քրիստոնէութիւնը թագաւորէ, բայց քանի որ քրիստոնէութիւնը հաստատուեցաւ, ծաւալեցաւ և իւր վարդապետութիւնը ընդունուեցաւ որպէս ճշմարիտ, կատարեալ, փրկարար և աստուածային վարդապետութիւն, ուրեմն հրաշից կարեւորութիւնը նուազեցաւ: Վասն զի ամեն քրիստոնեայք կը խոստովանին, որ ճշմարիտ քրիստոնէի արժանաւորութիւնը սիրոյ ամենամեծ պատուիրանի կատարման մէջ է և հչ թէ հրաշագործութեան: Վասն զի Քրիստոս հրաշագործութեամբ չափտի ճանաչէ իւր հետևողները, այլ սիրով և իւր կամքը կատարելով: «Բազումք ասիցենցիս յաւուր յայնմիկ, Տէր, Տէր, ոչ յանուն քո մարգարէացաք և յանուն քո դէս հանաք և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք: Եւ յայնժամ ասացից ցնոսա, եթէ ոչ երբէք զիտէի զձեզ, ի բաց կացէք յինէն և այլն»: Վասն զի Քրիստոս յայտնապէս յանդիմանած է նշան խնդրողները. «Ազգ չար և շնացող նշան խնդրէ»: Վասն զի Պօղոս առաքեալն բացարձակ կաղաղակէ Ս. կորնթ. ԺԳ. գլխոյն մէջ, որ Սերն է քրիստոնէի ամենամեծ և ամենասքանչելի նշանը. «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ՝ և սեր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ պղինձ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ ղօղանջեն: Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն և զիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սեր ոչ ունիցիմ, ոչինչ եմ և այլն»: Ոչ՞ ապաքէն Պ. Շանշեանն ևս սոյն այս հիման վրայ և սոյն այս զուխները յիշելով կը գրէ հետևեալ տողերը իւր երկասիրութեան 56 և 57 երեսներուն մէջ. «Երբ եկեղեցին բաւական հաստատուեցաւ, որ հասարակ քահանաներն անգամ կարողանում էին քարոզել Աւետարանն և կառավարել իրանց եկեղեցին՝ կարօտութիւն չ'մնաց արտաքին հրաշագործութեանց: Մենք պէտք է ուրախանանք որ մեզ տուած են հասարակ շնորհքներ, որոնք կարող են նորոգել, այսինքն տալ մեզ հաւատ, սրբութիւն և մխիթարութիւն: Պէտք է ուրախա-

նանք որ Հոգւոյն սրբոյ այս շնորհքներով տակաւին այս աշխարհումս կարող ենք ճաշակել յաւիտենական երջանկութիւն և ընդունակ լինիլ փրկութեան: Առաքեալն Պօղոս խօսելով հրաշալի շնորհքների վրայ՝ յորդորում է, որ աւելի օգտաւէտ շնորհքներ որոնենք: « Բայց նախանձաւորք լերուք շնորհացն, որք լաւքն են » և զովում է սերն առ Աստուած և առ մարդ ասելով. « Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ ևայլն »: Ով՞ կարող է ուրանալ այս քրիստոնէական ասացուածի ճշմարտութիւնը: Ով՞ կարող է պնդել թէ արտաքին հրաշից կարօտութիւն ունի այն քրիստոնեայն, որոյ սիրտը ոտըր է, հաւատը և յոյսը աննկուն, որոյ կեանքէն շնորհք կը փայլատակի, բերանն արդարութիւն կը խօսի և լեզուն ճշմարտութիւն կը քարոզէ, որ բնաւ երբէք հրաշից կարօտութիւն չունի, վասն զի բընական և ինքն Հոգւոյն սրբոյ և վառարան սիրոյ, յորոց մին աղբիւր է հրաշից և միւսն հրաշք հրաշից՝ ի վեր քան զամենայն հրաշքս: Միթէ այսպէս քարոզած չեն և մեր եկեղեցւոյ վարդապետները ընդ որս և Ներսէս Լամբրոնացին պատարագի սուրբ խորհրդոյ բացայայտութեան մէջ. « Ձի նշանն ոչ հաւատացելոց, այլ անհաւատից »: Ով՞ կը համարձակի ուրեմն պնդել թէ ճշմարիտ քրիստոնեայք կարօտութիւն ունին արտաքին նշանաց և արուեստից, — ոչ ոք, բացի Չամուրճեանէն, վասն զի ինքն նշանախնդիր է, հաւատքին մէջ հաստատ չէ, նշաններու կը կարօտի որ Աստուծոյն հաւատայ, և սակայն նշան ոչ տացի նմա, բայց միայն նշան և հրաշագործութիւն Մկրտիչ վարդապետի Տիգրանեան, որոյ հրաշքները իբրեւ ապացոյց յառաջ կը բերէ Երեւակիս մէջ՝ Պ. Շանշեանի զրուածքն հերքելու համար: Վնայ քեզ կոյր բանաբաղութիւն, որ Մկրտիչ վարդապետի հրաշքներով կուզես կրօնք պահպանել և զուցէ մին օր էլ նոյն վարդապետն ի շարս սրբոց դասել, և այս ամենը անամօթաբար առնել յանուն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ:

Պ. Չամուրճեան, Շանշեանի երկասիրութիւնն արատաւորելու համար, Սուրբ Գրքի ուսման հարկաւորութիւնն ուրանալէն զկնի՝ Երեւակի 125 թուոյն մէջ Հաւատոյ հանգանակին անթերի ճշմար-

տութիւնն ևս կ'ուրանայ: Վասն զի Շանշեան իւր դասագրքին մէջ երես 60 63, համաձայն Հանգանակի չորրորդ մասին (Հաւատամք ի մի միայն ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցի) բացատրած է եկեղեցւոյ այս յատկանիշները — ձի, ընդհանրական, առաքելական, սուրբ — իսկ Չամուրճեան պակասաւոր գտած է դասագիրքն, որ չ'պարունակէր ուսուցանող եւ ուսանող, կղերական եւ աշխարհական, զինուորեալ եւ յաղթական բաժանումներ, յորմէ կը հետեւի որ, ըստ Չամուրճեանի, Հանգանակն ևս պակասաւոր է, զոր Հայաստանեայց եկեղեցին, 1500 աարիէն աւելի է, կխոստովանի անձերի և ամեն օր Աւետարանը ձեռքին կը կրկնէ: Կը հետեւի որ Չամուրճեանի ունեցած չունեցած հաւատը լոկ բառերու եւ տառերու վրայ է, որով այսքան հակասութեանց մէջ կը զլորի, և ոչ զրուածքի պարունակութեան ոգւոյն վրայ, որով ամենայն ինչ ըստ արժանոյն բացատրուած է,

Պ. Չամուրճեան Թերեհաւատած է սոյն սահմանէն ևս, որով Շանշեան սահմանած է եկեղեցին այսպէս. « Եկեղեցին է հաւաքումն այն մարդկանց, որոնք հաւատում են Յիսուս Քրիստոսին: Այն մարդիկը, որոնք հաւատում էին առաքելաների բարոգութեանը և ընդունում էին Աւետարանը՝ բնական էր որ նրանք որոշուել էին հեթանոսներից և եբրայեցիներից՝ Աստուծոյն պաշտելու համար հոգւով և նշմարտութեամբ, ինչպէս առաջին անգամ այսպէս հիմնուեցաւ Երուսաղեմում եկեղեցին »: Հաւասար Յիսուս Քրիստոսին առաքելոց քարոզութեամբ, ընդունել Աւետարան, պաշտել զԱստուած հոգւով եւ նշմարտութեամբ, այս ամենը բաւական չ'են եղել Չամուրճեանին համոզելու, որ եկեղեցին զՅիսուս Քրիստոս կը դաւանէ Աստուած, այլ նոյն պատուելին իւր անհաւատ տեսութեամբ անհաւատութիւն տեսնելով եկեղեցւոյն տուած սահմանին մէջ՝ կը հարցնէ. — « Յիսուսի Քրիստոսի հաւատացող մարդոցմով պիտի ըլլայ այս միութիւնը (եկեղեցին) բայց զՔրիստոս ինչ հաւատալու է . . . Սոկենեաններն ու Ռացիօնալիստները ամենն ալ ժամանակին Յիսուս անունով և Քրիստոս մականունով մարդ մը աշխարհ եկած ըլլալը կը հաւատան, անկէց անդին չ'են անցնիր »:

Եթէ առաքեալք և Աւետարան զՔրիստոս՝ Աստուած չեն քարոզած, և եթէ Շանշեան ոչ միայն բովանդակ դասագրքի ամեն էջերուն, այլ և 40—50 երեսներուն մէջ յատկապէս Քրիստոսի աստուածութեան վրայ չէ խօսած, իրաւունք ունի Չամուրճեան Թերահաւատելու: Բայց քանի որ ամենուն մէջ Քրիստոսի աստուածութիւնն դաւանուած է և Չամուրճեան կամակործելով չուզեր հաւատալ, հարկ է ուրեմն ասել, որ ինքն ոչ միայն մոլորամիտ է, այլ և մերկ անհաւատ, որ Առաքելոց քարոզութեամբ և Աւետարանով Յիսուսին հաւատալուն մէջ անգամ անհաւատութիւն կը տեսնէ:

Պ. Չամուրճեան Երեւակի 127 թուոյն մէջ չընդունիր որ քրիստոնէի մեղաց թողութիւնը և փրկութիւնը Քրիստոսի մարդեղութեան և չարչարանաց արդիւնքովն է, վասնորոյ և կը Թերահաւատի Շանշեանի այս խօսքին վրայ. « Երրորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ապաշխարութիւնն, որով մեղաւոր և զղջացեալ քրիստոնեայն խոստովանում է Աստուծոյն՝ առաջի նրա քահանային իրա մեղքն և ստանում է քահանայի աղօթքով և Քրիստոսի խօսքով և չարչարանքի արդիւնքով մեղքի թողութիւն. » և Թերահաւատութեան շարժառիթն այն է, որ Չամուրճեան ապաշխարութեան գլխոյն մէջ չէ տեսել այս բառերը — ծովապահուրթիւն կամ լոկ պահեցողութիւն, գիշերը երկու երեք ժամ քուն ծախել և աղօթքի պարսպիլ, աղփասաց ողորմութիւն տալ: Սակայն թող ներուի մեզ ասել՝ ու Շանշեան՝ Չամուրճեանի պէս սուտ քրիստոնեայ չէ, որ միայն ապաշխարութեան օրուան ձգէ այն պատուէրներն, որոնք նշմարիտ քրիստոնէի հանսպազօրեայ պարտքն են, այն է ժուժկալել, աղօթել, ողորմիլ, սիրել: Շանշեանի դասագրքին մէջ ոչ թէ լոկ ապաշխարութեան օրուան համար, այլ ամեն տեղ և ամեն ժամանակի համար պատուիրուած է սրբութիւն, ողորմածութիւն, ժուժկալութիւն, պահեցողութիւն, մարդասիրութիւն, աղօթք և այլն: (Կարդան երես 18, 27, 58, 59, 65, 68, 69, 70, 81, 105). Եւ մի թէ ապաշխարութեան և հաղորդութեան համար այս խօսքերը չունի ասած Պ. Շանշեան — « Ապաշխարութեան խորհուրդը մեծ պարտք է դնում ապաշխարողի վրայ, որ նա ջերմեռանդութեամբ

և ճշմարիտ զղջմամբ խոստովանի իրա բոլոր մեղքերը, Թողնի իրա պարտապաններին իրանց մեղքն, որովհետև առանց հաշտուելու մարդկանց հետ և Թողնելու նրանց մեղքն, չէ կարող ինքն ևս հաշտուել Սատուծոյ հետ և Թողութիւն ստանալ . . . պէտք է միտքը պահէ որ Սատուած նայում է մեր սրտին և ատում է կեղծաւորութիւն : Պէտք է մանրամասն քննէ իր ամեն զգացողութիւնները, ամեն խօսակցութիւնները, կեանքի ամեն գործքերը, մտածէ ընդհանուր և յատուկ պարտաւորութեանց վրայ, մանաւանդ այս մեծ պարտաւորութեան վրայ, որ է հիմն և սկիզբն հոգեկան կենաց, այս ինքն հաւատ, սէր առ Սատուած և սէր առ մարդ :» (Երես 68-74).

Կատարեալ ուրացութիւն և անհաւատութիւն է Չամուրճեանի պնդելն թէ՛ Շանշեան միայն հաւատ կը քարոզէ և ոչ գործք, վասն զի՛ Շանշեանի դասագրքի մի ամենամեծ արժանաւորութիւնն այն է, որ ուսանելն, ուսուցանելն և առնելն, տեսականն ու գործնականն իրարմէ անբաժան աւանդած է, սկսանելով նոյն իսկ 1 և 2 երեսէն — « Անպտուղ կը լինի լոկ ուսումն կամ իմացումն կրօնի և աւելի դատապարտութիւն կը բերէ մեր զլիսին, եթէ գործով ևս ցոյց չտանք մեր իմացածը և սովորածը : . . . Մարդուս բոլոր կեանքը ընծայ պէտք է լինի Սատուծոյն : Օր ըստ օրէ պէտք է անի մարդս և զօրանայ սրբութեան մէջ : Օր ըստ օրէ պէտք է աւելի մօտենայ Սատուծոյն » : Բայց եթէ Շանշեան Սատուծոյ ողորմութիւնն առաւել մեծացուցած է մեղաց Թողութեան համար, այն էլ իւր աւածն հիմնած է Ս. Քրքի հետևեալ վկայութեանց վրայ, զորս Չամուրճեան նենգութեամբ ի բաց Թողած է դասագրքէն, այն է. « Արդարանան ձրի նորին շնորհօք ի ձեռն փրկութեան, որ ի Յիսուս Քրիստոս : Եւ գտայց ի նմա իբրև ոչ եթէ զիմ ինչ արդարութիւն, որ յօրինաց անտի է ունիցիմ, այլ զհաւատոցն Քրիստոսի, որ յՍատուծոյ արդարութիւն է : Ոչ ի գործոց արդարութեան զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեան ապրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեան և նորոգութեան Հոգւոյն սրբոյ » : (Երես 68-71).

Պ. Չամուրճեան Երեւակի 130 Թուով Հաղորդութեան սուրբ խոր-

հուրդին մէջ իսկապէս Քրիստոսի մարմնոյ և արեան մատակարարումն կուրանայ՝ հակառակ Շանշեանի այս խօսքին — « Ընդ տեսակաւ հացի և գինւոյ՝ իսկապէս նաշակում ենք Քրիստոսի մարմինն և քմպում նրա արիւնն մեր մեղքի թողութեան և յաւիտենական կեանք ժառանգելու համար . . . հաղորդուիլ նշանակում է ներքին հոգևոր միութիւն Քրիստոսի և մեր բոլոր եղբայրների հետ , որ մենք ամենքս մի մարմին ենք ի Քրիստոս , որ է Գլուխ » : Չամուրճեանի ուրացութեան բուն պատճառն այն է , որ Շանշեան իւր բացատրութեան մէջ պատարագի արարողութիւնն երկարօրէն չէ պատմած և մանաւանդ որ (յանբուժելի ցաւ սրտի Չամուրճեանց) գոյափոխութիւն բառ չէ գործ դրած : Մէկ մարդ Չամուրճեանի չափանհաւատ պէտք է լինի , որ այսպիսի պատճառներով թերութիւն և մոլորութիւն տեսնէ Շանշեանի գրուածքին մէջ . որոյ նպատակն եղել է , ոչ թէ պատարագի արարողութեան ինչպէս կատարուիլը պատմել , (որ Խորհրդատետրին մէջ պատմուած է և ամեն քրիստոնեայ կը տեսնէ Սուրբ Պատարագին ժամանակ) այլ Հաղորդութեան խորհրդի վսեմութիւնը և հաղորդուողի պարտաւորութիւնները բացատրել :

Եթէ խիղճ ունենար Պ. Չամուրճեան և փոքր ի շատէ քրիստոնէական զգացմամբ կարդար Շանշեանի սրտաբուղիս գրուածքն հաղորդութեան խորհրդին վրայ , անշուշտ այնպիսի ծայրայեղ անհաւատութեան մէջ չ'էր գլորիլ և խառնակ խելապատակին մէջ խառն ի խուռն և առասպելօրէն ամբարշտած՝ Կալվինի , Զուինկլիի Մելանքթոնի , Լութերի և այլոց պատմութիւնները չ'էր յեղյեղիլ անդադար՝ պարզամիտներու աչքը մոխիր փչելու համար : Եթէ խիղճ ունենար Չամուրճեան , այնքան խարդախ հետևանքներ չ'էր երազել , այնքան անարգաբար չ'էր խօսիլ սուրբ խորհրդներուն վրայ , այնքան զգուելի նամարտակութիւններ չ'էր անել քրիստոնէական նշմարտութեանց վրայ , այնքան չ'էր յանդգնիլ իր ցած ու անարգ կրքերուն ծառայեցնելու առարկայ կարծել քրիստոնէութիւնը և եկեղեցի պաշտպանելու պատրուակաւ՝ մոլորութիւն , անհաւատութիւն , բազմադանդութիւն , մոլեկրօնութիւն և ամեն տե-

սակ զազիր մտածութիւններ լռելեայն սերմանել իւր Երեւակին մէջ ի գայթակղութիւն պարզամտաց: Եթէ Չամուրճեանի դիտաւորութիւնը եկեղեցին պաշտպանել լինէր, ոչ թէ Շանշեանի դասագիրքը կը ծամածռէր, որուն մէջ եկեղեցւոյ դէմ բան չ'կայ, այլ Քաթրճեանի Տարբերութեան գրքին յախուռն և ժպիրհ թշնամանքներուն կպատասխանէր, որ մոլորեալ քարոզած է զեկեղեցին Հայաստանեայց և հեռի յառաջնորդութենէ Հոգւոյն Սրբոյ: ⁽¹⁾

Մենք երկար կարող ենք խօսիլ Չամուրճեանի բանաբաղութեանց վրայ և վաղուց արդէն խօսած կը լինէինք, բայց որովհետեւ կը տեսնենք, որ ութօրեայ Երեւակն ամիսներով աներևութանալէն յետոյ՝ երևան կելանէ և իւր մոլորամիտ բանաբաղութիւնն էլ տակաւին կը շարունակէ, ուստի առ այժմ բաւական կը համարենք, ի վախճան մեր գրութեան մի համառօտ եզրակացութեամբ ամփոփել Չամուրճեանի ուրացութեան գլխաւոր մասունքները՝ շարունակութեանց եղծը այլում ժամանակի Թողլով: Ընդդէմ Շանշեանի դասագրքին՝ այս է ահա Չամուրճեանի դաւանութիւնը.

Ա. Քրիստոսի հրաշքները վկայութեամբ չ'են.

Բ. Սուրբ Գրքի մարգարէութիւնները պարզ չ'են, այլ մթին և երկդիմի.

Գ. Սուրբ Գրքի ուսումն հարկաւոր չ'է, այլ Երեւակի.

Դ. Հոգին Սուրբ ներգործութիւն չունի եկեղեցական խորհրդոց մէջ.

Ե. Հարկաւոր չէ ճշմարտութիւն որոնել կամ խնդրել.

(1) Մի օր լսեցինք, որպէս թէ Պ. Չամուրճեան պատասխան գրած է Քաթրճեանին, բայց օժանդակող բարերար մի կուզէ, որ հրատարակէ: Ինչ՞ աչքակապութիւն, միթէ՞ փոխանակ զՇանշեան հայհոյելու անդադար եւ զՄուրաշեան՝ Երեւակի միամեայ համարներուն մէջ, չէր՞ կարող իւր պատասխանն հրատարակել ընդդէմ Քաթրճեանի. բայց ինչու՞ այդպիսի բան անէ, երբոր ինքն հոգւով մարմնով համամիտ է Քաթրճեանին եւ նորա գրքին մէջ զովութեան անգամ արժանացած:

Զ. Հարկաւոր չէ մոլեկրօնութիւնը մերժել .

Է. Հարկաւոր չ'է սիրել, այլ պէտք է նշանախնդիր լինել .

Ը. Աւետարանով և առաքելոց քարոզութեամբ Յիսուս Քրիստոսին հաւատալն՝ Աստուած հաւատալ չ'է .

Թ. Հանգանակի մէջ եղած եկեղեցւոյ յատկանիշները մոլորամիտ և պակասաւոր են, առանց ուսանող, ուսուցանող, զինուորեալ և յաղթական բաժանումներու :

Փ. Քրիստոնէի պարտքերը հանապազօրեայ չ'են, այլ միայն ապաշխարութեան օրուան համար .

Այս է անս Զամուրնեանի խոստովանութեան համառօտ պատկերը Երեւակի մի քանի թիւերէն հանած, բայց եթէ դիտողութեան ենթարկուին նորա բոլոր գրուածքները, արդեօք քանի՞ այլանդակութիւնք, քանի՞ մոլորութիւնք և քանի՞ հակասութիւնք երեւան դուրս կը գան : Արդեօք քանի՞ դարանք Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ, քանի՞ ստութիւնք ճշմարտութեան դէմ և քանի՞ թշնամանք Աստուծոյ դէմ : Թողենք առ այժմ այս տաժանելի խուզարկութիւնը, բաւական համարելով մեր Լուսաւորիչ Հայրապետի խրատական վճիռը կրկնել . « Շնորհալից մտաց և հաւատացելոց՝ սակաւ բանք խրատու բաւական են առ ուղղութիւն . իսկ անհաւատից և անշնորհաց՝ և յոյով բանք խրատուց ոչինչ օգուտ գործեն, որոց խաւարեալ են միտք իւրեանց և օտարացեալ են ի շնորհաց անտի Աստուծոյ . . . Որ ստահակին և մոլորին ի չարիս, և նենգելով լինին բանաարկու և մոլորեցուցանեն զայլս յուղիղ հաւատոց և ի սուրբ վարուց՝ և նախանձին ընդ բարեգործան և լինին խռովարարք և պղտորիչ պարզամտաց՝ զդիւացն զկարգ ունին » : Յաճախ .

Պ. Զամուրնեանի գրաւոր դարանները Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ՝ վաղուց արդէն նշաւակուած են : Բացի մասնաւոր հայազգի ուսումնականաց և լրագրապետաց հերքումները, որոնք եղած են Զամուրնեանի անհարազատ հայութեան դէմ, Կ. Պօլսոյ եկեղեցական ուխտը ևս, ընդ նախազահութեամբ Յակոբոս

Պատրիարքի՝ Համագումար ժողով կազմելով՝ արձանագրութեամբ մերժած է նորա մոլար դրութիւնը և շրջաբերականով յայտնած ի գիտութիւն ազգիս Հայոց : Այս արձանագրութիւնը և շրջաբերականը , (որոց օրինակը կը գտնուի հայ պատմագրական յիշատակարանաց հետախոյզ Մեծարոյ Թադէոսի Միհրդատայ Միհրդատեանցի մօտ , և արդէն Մաւիս պատուական լրագրին միջոցաւ էլ հրատարակուած է), արժան կը համարինք կրկին տպագրել այս տետրակիս մէջ, որպէս զի հեռաւորք և մերձաւորք իմանան , որ Շանշեանի քրիստոնէական դասագրքի բանաբաղն Չամուրեան պապականամիտ Պատուելին է և ոչ թէ մի հարազատ հայ քրիստոնեայ :

Ահա համագումար ժողովի արձանագրութիւնն .

Մեր Հայոց ուղղափառ սուրբ եկեղեցին ոչ Լութերականութիւն կընդունի և ոչ Հռովմայ նոր վարդապետութիւն : Յայսմ միջոցի Չօհալ (այժմ Երեւակ) անուն տետրակի հեղինակն անհնազանդ գտանելով Պատրիարքին և Ազգային Հոգևոր ժողովոյս , ըստ որում մի ի գլխաւոր կանոնաց ժողովոյս է տեսանել նախ զամենայն ազգային տպելի գրեանս կամ տետրակս և ապա տալ հրաման տպագրութեան , սա խանգարելով զայս կանոն և ըստ ինքեան համարձակեալ հնարել հակառակ մերս սուրբ եկեղեցւոյ զնոր վարդապետութիւն , այսինքն զՊապին ընդհանրական գլուխ եկեղեցւոյ լինելն , պատճառ ետ իրաւացի գայրակողութեանց եւ շփոթութեանց՝ գրեթէ քոյր ազգայնոց , և հետևաբար կերպ առ կերպ բողոքանաց դրունս եբաց : Ուստի երկիցս գրով հրաւիրեցաք զալ ի ժողովս . բայց ոչ անձամբ եկն և ոչ գրով պատասխանեաց , վասնորոյ ժողով արարեալ ի Պատրիարքարանի ամենայն հոգևորականքս պարտ և արժան համարեցաք միաբանութեամբ հերքել Չօհալ տետրակն և տնօրինեցաք յատուկ յայտարարութեամբ ծանուցանել յոռքեան Ազգիս՝ անընդունելի գոլ նոյն տետրակին վասն նոր վարդապետութեանցն պարունակելոց ի նմա , որով և խափանեացի շփոթ Ազգիս , հանդարտեացին սիրտք ամենեցուն և ուղղադաւան Ազգ մեր և եկեղեցի մասացէ ի խաղաղութեան , որ է առաջին պարտաւորութիւն ներ-

կայ հոգեւոր ժողովոյս, վասն որոյ ամենեքեանքս ինքնայօժար մե-
րով ձեռամբ ստորագրեմք ի ստորեւ,

1856 Յունվարի 19

ի Պատրիարքարանս ի Փռմքափու .

Պատրիարք Կ. Պօլսոյ Յակոբ Արեւայիսկ. Պատրիարքական փոխանորդ Ս. Եպիսկ.
Ն. Յովհաննէս վարդապետ Բարդիշ Խաւփիղի. Ն. Յովհաննէս վարդ. Ղալաթիոյ.
Նիկոպօլսոյ դէս Յովհաննէս վարդ. Աբրահամ վարդ. Էյիպու. Յովհաննէս Եպիսկ.
Եդեսեան. Ն. Կարապետ վարդ. փոխանորդ Ս. Երուսաղէմի. Ն. Գրիգոր վարդ.
Եէնի գարուի. Անդրէաս վարդ. Խարակէօմրիսկի. Իգնատիոս վարդապետ Բերայի,
Աբանագինէ վարդ. Մկրտիչ վարդ. Խրիսեան. Վրդանէս վարդ. Կէտիփաւայի
Մայր Եկեղեցւոյ աւագ Տ. Գրիգոր Բահանայ. Ն. Տ. Գալուստ աւագ Բահ. Միջագիւղի.
Յովհաննէս աւագ Բահ. Փափագեան Իսկիւսարու. Տ. Յարութիւն Պալասու.
Տ. Ասատուր Խարակէօմրիսկի. Տ. Գրիգոր Միջագիւղի. Տ. Յովհաննէս Խարակէօմր.
Տ. Փիլիպպոս Սամաթիոյ. Տ. Գրիգոր Պէտիքաւու. Տ. Պաղտատար Պալասու.
Տ. Պաղտատար աւագ Բահ. Իսկիւսարու Ս Կարապետ Եկեղեցւոյ. Տ. Յովհաննէս
Ղալաթիոյ. Տ. Ստեփան Պէյօղլուի. Ն. Երեմիա Բահ. Խաւփիղի. Տ. Յարութիւն
Ղալաթիոյ. Տ. Արսէն Էյիպու. Տ. Պօղոս Մայր Եկեղեցւոյ. Տ. Մաղափա Պալաս.
Տ. Գրիգոր Խարակէօմրիսկի. Տ. Սամուել Խարակէօմրիսկի. Գրիգոր վարժապետ
Տ. Յովհան Միլղայեան. Գեորգ վարժապետ Չափրասնեան ի Բերայ: (1)

Գերազատիւ Հոգաբարձու Իշխան Աղայք օրհնեալ սիրելիք
մեր ի Տէր .

Ի քանի մի ամսոց հետէ հեղինակութեամբ Պ. Չամուրճեանի
Պրուաւցւոյ՝ Չօհալ անուն տաճկական բարբառով տպեալ տետրակ
մի սկսաւ հրատարակիլ. բայց հեղինակն հակառակասեալ և ինքնա-
հաւան ոմն չինելով՝ վաղագոյն ազգային Հայաստան անուն լրագ-

(1) Չամուրճեանի կրօնական դրութիւնը հերքուած է նախ 1856 Մարտի 7 եւ 19
Թուականով, որոց օրինակներն եւս հրատարակուած են Մաախ լրագրին մէջ Թիւ
496 եւ 501 եւ երկրորդ դարձեալ նոյնպէս Կրօնական Հոգեւոր ժողովով հերքուած
է 1861 յուլիսի 6, որ եւ սպազրուած է յիշեալ լրագրին 492 համարին մէջ : Բայց
յայտմանէ Պ. Թադէոս Միհրդաս Միհրդասեանցն ընդարձակ Դատաւարական ունի
հրատարակած Չամուրճեանի դէմ, որուն ճակաւին չէ համարձակած պատասխանել :

րին խմբագիրն էր, երբ Ազգն զգուեալ՝ ի նմանե հառ ի ձեռացն եւ հրաժարեցոյց յայն պաշտօնէ՝, յիս կալեալ ի սրտի իւրում, յետ ժամանակաց հնարիւք իմն ձեռնամուխ եղև հանճարել զայս Զօնալ տետրակն և մեք գթալով թոյլատրեցաք նմա, որպէս զի այնու ձեռնագործաւ իւրով փոքր ի շատէ ապրեսցի ընտանեօքն : Սակայն միջոց գտաւ ներքին կիրքն և թոյնն հակառակութեան իւրոյ թափել ոչ միայն ի վերայ Բւթիւնեան Պ. Կարապետի, այժմեան ազգային Մասիս լրագրոյն խմբագրի, այլ և զՊապն Հռովմայ Գերագոյն իշխան և գլուխ ընդհանուր եկեղեցւոյ քրիստոնէից հաստատել ժրպիւղեցաւ ի գլխաւոր սրբազան առաքելոյն Պետրոսէ (1) յաջորդաբար բերեալ հասուցանելով, որ է անտեղի և հակառակ կամացն Քրիստոսի՝ Գլխոյն եկեղեցւոյ բոլոր հաւատացելոցս, որպէս յայտարար ինքն Տէրն մեր ի փրկագործ Աւետարանին ի բազում դէպս չունել երբէք կամս գլուխ եկեղեցւոյ կարգել զմարդ որ սխալական, այլ ինքն անսխալի Ստուամծորդին է գլուխ եկեղեցւոյ, ըստ վրկայութեան սրբազան առաքելոյն Պօղոսի. « Զամենայնինչ հնազանդարար ի ներքոյ ոտից նորա և զնա եղ գլուխ ի վերայ ամենայն ի-

(1) Եթէ Պ. Զամուրճեան արդէն կարդացած է Թիֆլիզի Գառն ամսագրի ներկայ տարւոյն համարներն՝ հիմա որչափ արդեօք սիրեն ցաւած է եւ ոգին քաղուած, տեսնելով որ նոյն Ամսագիրն Հռովմայ Պապին գլխաւորութիւնը բացէ ի բաց մերժելէն յետոյ՝ Պետրոս առաքելոյն ի Հռովմ գնալն եւս սուս կը հանէ : Որչափ, կասենք. յուսաբէկ եւ սրտաբէկ եղած է հիմա Պ. Զամուրճեան իւր բոլոր քրտնաթոր ջանքերուն ունայն անցնելուն համար, որովհետեւ՝ ոչ թէ միայն իւր հակառակորդներն են իրեն դէմ, այլ եւ շատագոված, իւր համամիտ կարծած Ս. Ք. Մանդինեանցն իւր Գառն ամսագրով : Ոհ, ի՞նչ մեծ յուսահատութիւն է մարդու համար, երբ որ իւր համախոհ եւ համընթաց կարծածներն անգամ իւր սրտի սիրած ամենափափուկ առարկային դէմ են : Միթէ այսպէս չէ՞ Պ. Զամուրճեանի համար նաեւ Պ. Թահիրեանցն, որ մինչդեռ առաջինն իբրեւ սրբութեան մասունք կը պաշտէ եւ կը փառաւորէ Մասեթոս Կաթողիկոսի գրած կոնդակներն Ղարաբաղու դպրոցն կործանելու համար, երկրորդն զնոյն իսկ կոնդակագիր Կաթողիկոսն քարքարոս, անիրաւ, թոյլ եւ անհաստատ կ'անուանէ, եւ սակայն երկոքեան ի միասին իրար համամիտ են՝ Շանշեանի, Մուրաշեանի եւ այլոց անունն արատաւորելու եւ, եթէ հնար ինչ իցէ, ողջ ողջ այրելու : Բայց միթէ՞ այսպէս չէ՞ ամեն համամտութիւն, ինչ տեղ անձնական շահն է շարժառիթ եւ ոչ ճշմարիտ եւ աննենգ համակամութիւն :

րիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն, որ զամենայն յամենայնի լնու:» Եփես. Ա. 22 23: Եթէ մարդ զոր կամէր զնել զլուխ ի վերայ առաքելական Վաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ՝ հարկաւոր ցուցանէր զՊետրոս կամ զայլ առաքեալս և ոչ առէր թէ. «Նս ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»:

Թէպէտ Պ. Չամուրճեան ծանածոռքեամբ բերէ զքանի մի վկայութիւնս ի զլխաւոր սրբազան Հարց և ընդունելի վարդապետաց մերոց, որք զքրիստոնէական խոնարհութիւն յանձին բերեալ՝ սովոր էին առնել ի նամակագրութեան իւրեանց առ ի պատիւ զմիմեամբք ելանել, բայց սա (Չամուրճեան) կրճատելով զքանս եւ զհետեւեալ տունն ոչ դնելով ⁽¹⁾ և կամ ի Վենետիկի Մխիթարեանց տպագրութենէն առնելով, որոց սովորութիւն է զբանս և զիմաստս զրոց սուրբ Հայրապետացն մերոց ծամածռել, և ըստ քմաց շողորթութեան իւրեանց յարմարել փութան և ընդունայն ընդ մերս Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ մաքառին զրախօսութեամբ:

Արդ՝ Հոգեւոր ժողով Պատրիարքարանիս և բոլոր հեգեորականք Մայրաքաղաքիս միարանութեամբ հերքեցաք զայնր տետրակի զօսար վարդապետութեան քանս, որ ընդդէմ է ողջամիտ վարդապետութեան սրբոյ եկեղեցւոյ մերոյ: Ուստի զգուշացուցանեմք զձեզ և զամենայն վիճակայինս ձեր ի տեսանելոյ զնոյն Զօհալ տետրակն մի շփոթեալ զայթակղեսչիք, իբր թէ՝ համազգի գիտնական Պատուելի վարժապետն գրեալ և հաստատեալ է ընդդէմ բազում ուղղափառ եկեղեցեաց զանընդունելի բանս: Քանզի Պ. Չամուրճեանի դիտումնն ոչ այլ ինչ է, բայց միայն իւր անձնական շահասիրութիւնն, յուսնեւ առաւել դրամակն ունիցի առնուլ՝ այնր կողման ջատարհանել:

(1) Այսպէս կրճատել եւ ծայրատել է Պ. Չամուրճեան Շանշեանի քրիստոնէական երկասիրութիւնն, եւ երեւի թէ այս կրճատութեան անարգ եղանակը՝ առանձին տաղանդ եւ ճարտարամտութեան անփութութիւն ունակութիւն դաւանած է իրեն համար, որ միշտ կը շարունակէ իր բանաբաղութեանց մէջ: Որովհետեւ Երեւակի 128 թուոյն մէջ պարզապէս կասէ որ, Հայաստան, Զօհալ եւ Երեւակ պարբերականներու ոգին եւ ուղղութիւնն անփոփոխ է. — «Չամուրճի անուանած Տէրոյնցը տաճկերէն խօսի նէ՝ Զօհալ կըլլայ եւ հայերէն խօսի նէ՝ Երեւակ, բայց միշտ նոյնը կըսէ»:

գով հանդիսանայ. Տէր տեսցէ եւ դատեսցէ, թշնամիքս ընտանիք իւր:

Ի սկզբանէ անտի ի սուրբ Լուսաւորչէ մերմէ և յերից ընդհան-
րան հոգեգումար սուրբ ժողովոց զոր ինչ հաւատս և զվարդապե-
տութիւնս ընկալաք, անարատ և անայլայլելի պահեմք⁽¹⁾ և ունիմք
անխախտ որպէս նախնիքն մեր, նոյնպէս և մեք պարտիմք ի նոյն
հաստատիլ և ի լուսաւոր շաւիղս նոցին ընթանալ առանց խոտորելոյ
յաջ կամ յանակ: Ով մեկնեացէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, յոր
հաստատեալ եմք ի սկզբանէ լուսաւորութեան Ազգիս մինչև ցայսօր,
և մինչև ցյաւիտեան յայս և ի սոյն հաւատս պահեացէ զմեզ նենա-
րարն մեր և փրկիչն և գլուխն եկեղեցւոյ Յիսուս Քրիստոս. ամէն:

Կարէ և այս յայտարար զրութիւն մեր համապատասխանել եր-
կու ամսօք յառաջ առ մեզ ուղղեալ պատուական նամակի դարեւոր
յարգելի իշխանաց և Հոգաբարձու Ազայից: Յաւել կացջիք ողջ և
անփորձ համայն քոյանովք ձերովք պահպանեալ և զօրացեալ ի խը-
նամս Տեառն:

Մնամ միշտ սիրող ի սրտէ ազօթարար.

1856 Մարտ 7 ի Պատրիարքարանի

Կ. Պօլսոյ ի Քումքաբու.

Պատրիարք Կ. Պօլսոյ

ՅԱԿՈԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



(¹) Բայց Պ. Չամուրճեան՝ հակառակ Հայաստանեայց եկեղեցւոյ, բաց ի երեք
Տիեզերական ժողովներն, Քաղկեդոնի ժողովն էլ կընդունի Լեւոնի տումարով
հանդերձ, եւ, իր դրութեան նայելով, գուցէ ընդ նմին եւ շատ ժողովներ, ինչ-
պէս են Լասերանեան, Տօլեսանեան, Ֆլորենսեան եւ չգիտեմ ինչ:

Հայաստանեայց եկեղեցական վարչութեան խորին եւ ամենախորին մտադրու-
թիւնը կը հրաւիրենք ներկայ տարւոյս երեւակի 129 թուոյն 334 էջին վրայ, ուր կը
ցաւի Պ. Չամուրճեան ասելով. « Քաղկեդոնի ժողովոյն եւ Լեւոնի տումարին մեր
մէջ չընդունուիլն՝ իբրեւ բար գայթակղութեան մը եղած էր. » եւ ներսէս Շը-
նորհալու խօսքերն եւս կրճատելէն եւ թիւր մեկնելէն զկնի՝ կը յաւելու. « Սուրբ
Շնորհալի Հայրապետն Յունաց հետ միանալու համար՝ բաւական ջանք ըրաւ՝ բայց
մահը վրայ գալով՝ չը յաջողեցաւ »:

Գ.

Մարդու խօսքէն իւր սիրտն կը յայտնուի
և ուղիղ սիրտն է հշմարտութեան առաջին
գործին : ՈՍԿԵՓՈՐԻԿ

Եթէ ընծերցողը կարդացած են արդէն Երեւակի 103էն մինչև
130 թիւերն՝ անշուշտ նշմարած կը լինին, որ Չամուրճեանց նա-
խանձայուգութեան և առատ զրախօսութեան բուն շառժառիթն ե-
ղած է Շանշեանի վրայ տարածուած համբաւն ի շարս կանոնիկո-
սական ընտրելեաց՝ և մեր վարդապետանալու բաղձանքն- Առաջ-
նոյն վրայ հարկ չենք համարիլ երկարօրէն խօսել, որովհետեւ՝ եթէ
Մասնէոս Կանոնիկոսի մահէն յետոյ՝ ի շարս այլոց Շանշեանն ևս
համբաւեցաւ որպէս կանոնիկոսական ընտրելացու, դորա պատ-
ճառն բնաւ ամենևին ոչ իւր ցանկութիւնն եղած է և ոչ որ և իցէ
մարդու հետամտութիւն, այլ լոկ այն համարումն, որ ականատես
ժողովուրդն ունեցած է նորա առաքինութեան, ուսումնական
նութեան և հայրենասիրութեան վրայ, որուն մեծ ապացոյց է նոյն
իսկ Չամուրճեանց տազնապն ու յուզմունքն, վասն զի՝ եթէ Շա-
նշեանի արժանաւորութիւնն յայտնի չլինէր, նոքա հանգիստ կը
նստէին և ոչ թէ կսարափէին և իրենց երեակայութեան հետ կմար-
տնչէին, մինչդեռ ոչ ոք կար հետամուտ Շանշեանի ընտրութեան
համար, ոչ եկեղեցական, ոչ աշխարհական. ոչ երեսփոխան և ոչ
խորհրդական: Իսկ երկրորդ խնդրոյն, այսինքն մեր վարդապետա-
նալու բաղձանքին համար փոքր ինչ ընդարձակօրէն խօսիլ արժան
կը համարինք, ոչ թէ մեր յօժարութենէն շարժեալ, այլ Երեւակի
անվերջ զրաքանութենէն ստիպեալ:

Ամեն մտածող մարդ կհաստոյվանի, որ վիճակի ընտրութիւնն

Մեծ նշանակութիւն ունի մարդու բովանդակ կենաց համար : Չկայ վիճակ այնպէս երջանիկ և արդիւնաբեր, ինչպէս բնաւորութեան, ընդունակութեան և ներքին համոզման յարմար ընտրած վիճակն. բայց չկայ և այնպէս անտանելին և ապարդիւնն, ինչպէս անհոգութեամբ, ստիպմամբ և սխալմամբ ընտրածն : Ինչ մարդիկ որ այս պարագաներուն վրայ խորհած են, նոքա լաւ կրհասկանան վիճակի ընտրութեան ազդեցութիւնն ոչ միայն անհատական, այլ և ընկերական կենաց համար : Ուստի կատարեալ անկեղծութեամբ կը համարձակինք ասել, որ վիճակի ընտրութիւնն մեր աշակերտութեան օրէն մեր համար եղած է մի սուրբ և ծանրակշիռ մտածմունք : Մենք մտածել ենք այնպիսի մի տեղ բռնել ընկերականութեան մէջ որ միայն մեր անձին չլինինք օգտակար, այլ և, ըստ չափու կարողութեան, մեր մերձաւորին, մեր ազգակցին : Այս խորհրդածութեան մէջ, ժամանակին և պարագային նայելով, ամենէն նուիրական ճանապարհն երևցել է մեզ ուսանիլն և ուսուցանել. վասն զի միայն դաստիարակութեան մէջ ենք տեսել ազգային երջանիկ ապագայի և վերակենդանութեան խորհրդաւոր սերմունքը : Հանգամանքներն էլ ամեն կողմանէ մեզ օժանդակել են այս բաղձանքին մէջ. վասն զի ճշմարիտ բաղձանքները՝ Պասքալի ասածին պէս, զետերու նման են, որոնք այնպիսի ճանապարհ են, որ իրենք կրնան և մարդը իւր գնալու տեղը կը տանին : Մեր պատանեկութեան օրէն սկսած ուսուցչական պաշտօնը եղել է մեր համար որպէս սուրբ պարտաւորութիւն, պաշտօն՝ արդարեւ նիւթական կողմէն ոչ նախանձելի. մանաւանդ մեր խեղճ ազգին մէջ, բայց բարոյական կողմանէ անհամեմատ քաղցր և նուիրական այն զգայուն դաստիարակին համար, որ զիտէ մանկանց վառվռուն աշխուժութեան հետ ինքն ևս օր աւուր գեղեցիկ յոյսերով մանկանալ, նորոգիլ և զուարթանալ : Սակայն դաստիարակական պաշտօնի մէջ որչափ յարատեւած ենք, այնչափ և զգացած ենք, որ մեր ազգի ներկայ վիճակին նայելով՝ միայն մանկանց դաստիարակութիւնն բաւական չէ, հարկաւոր է ընդ նմին, ծնողներն ևս, եթէ ոչ դաստիարակել, գէթ դաստիարակութեան օգուտն և ճանապարհներն ցոյց

տալ , որպէս զի ընտանեկան կեանքն ևս ձեռնառու լինի դաստիարակութեան սուրբ նպատակին , կատարեալ համոզուելով՝ որ մինչդեռ հայկական ընտանիքները գործակից չեն դպրոցներուն վարքով , կեանքով , խորհրդով և յարատևութեամբ՝ դաստիարակութիւնը միշտ կաղ ի կաղ պիտի ընթանայ և ակնկալած օգուտները չպիտի կարենայ մատակարարել : Ուստի այս համոզմամբ՝ շահաւետ երեցած էր մեզ դաստիարակութեան պաշտօնի հետ զուգախառնել և եկեղեցականն , այսինքն վարդապետանալ և ազգային դպրոցներուն սպասաւորելու ժամանակ՝ սպասաւորել միանգամայն և եկեղեցւոյն , ժողովրդին , ժողովրդին՝ որուն կենդանի խօսքը միայն կարէ ազդել այժմեան ժամանակուսն , (քանի որ մեծ մասամբ անգրագէտ է) քան թէ գրաւոր հրատարակութիւնները , որոնք իբրև ճայն քարքառոյ յանապատի կհնչին և անլուր կը մնան : Բաց ի մեր սեպհական համոզումը՝ ուրիշ շատ նշանաւոր անձինք ևս քաջալերած են մեր նպատակը , ի շարս որոց երջանկայիշատակ Ներսէս Կաթողիկոսն ինքն ուրար տալով մեզ աշակերտութեան ժամանակ քանի մի ընկերաց հետ՝ պատուիրած է քարոզ կարդալ եկեղեցում , և Ներսիսեան դպրոցի Վարչութիւնն ևս մեր ուսման վկայագիրն դրրոշմած է իւր արձանագրութեանց մէջ այսպիսի եզրակացութեամբ — Արժանի և քահանայական աստիճանի : ⁽¹⁾ Բայց չենք թագցնել նոյնպէս յայտնել , որ շատ մարդիկ էլ մեր եկեղեցականաց խեղճ և արհամարհեալ վիճակը տեսնելով՝ ծաղրած են մեր վարդապետանալու դիտաւորութիւնն , թշուառութեան անձնատուր մէկն համարելով զմեզ և յորդորած են քաղաքական արքունի պաշտօնի մէջ մտնել ,

(¹) Զամուրճեան Պատուելին ե թէ թերահաւատութիւն ունի այս մասին , նոյն իսկ իւր մանրիմ թղթակից Թահիրեանցէն կարէ ստուգել , որ այն ժամանակ դպրոցի Հոգաբարձութեան անդամ լինելով՝ ինքն ևս ստորագրած է , Վարդ է նա ամեն անարգ միջոցներու դիմել և մեզ հայհոյել , բայց իւր ստորագրութիւնն չէ կարող ուրանալ :

որուն համար մեր իրաւունքն ևս կառաջնորդէր մեզ ամեն կերպով։ Ուստի՝ եթէ մինչև ցայսօր յետաձգուած է մեր որոշումն, պատճառն այն եղած է միայն, որ աւելի համոզուինք մեր ընտրելի վիճակի վերայ, որ յետոյ չապաշաւենք. ապա թէ ոչ մեր մտքովն անգամ երբէք չ'էր անցնիլ, թէ մենք մի օր պիտի փափաքինք վարդապետութեան փշոտ ասպարէզն մտնել և արգելքներ պիտի մեր առջևն ելանեն, այն ինչ, ցաւօք սրտի կընկատէ ամեն մարդ, որ շատ'ստորին, տգէտ և աննշան անձինք անգամ համարձակ հասած են քահանայական, վարդապետական և նաև եպիսկոպոսական աստիճանի և շատերն էլ վեղարներն կը ձգէին, եթէ չը պատկառէին։ Քնաւ փոյթ չէր մեզ արգելքներ տեսնել մեր առջև, երովհետն՝ ամենաբարի Նախախնամութիւնը՝ ուղիղ սրտերը վարձատրելու համար՝ մարդկանց չարամտութենէն անգամ անխմանալի կերպով օգուտ հանած է և կը հանէ (Դուք խորհեցարուք զինէն ի չարութիւն, կասէր Յովսէփ իր եղբայրներին, և Աստուած խորհեցաւ վասն իմ ի բարութիւն) բայց ճշմարտութիւնն այս է, որ ոմանց թշնամանաց պատճառաւ ստիպուած ենք բացերևակի հաղորդել մեր բարեմիտ և զգայուն եղբարցը։ Այս համոզումը որ մենք ունէինք Ռուսաստանին մէջ, նոյնը ունեցանք և Տաճկաստանի մէջ, վասն զի մեր Ազգի բարոյական կարօտութիւնը համարեալ թէ ամեն տեղ միօրինակ է, ուստի և մեր Եկեղեցին և իւր Վարչութիւնն մի համարելով թէ աստ և թէ անդ՝ աներկմիտ յուսով խնդրամատոյց եղանք տեղւոյս Կրօնական Ժողովին՝ իրմէն կախեալ տնօրէնութիւնն առնել մեզ վարդապետ ձեռնադրելու համար. որով մի կողմէն էլ աւելի դիւրութիւն կը տեսնէինք և օգտակարութիւն մեր ճանապարհորդութեանն, որ մըտադիր էինք առնել Հայաստանին մէջ։ Այս ամեն պարագաները համառօտիւ բացատրուած են մեր խնդրագրի մէջ անգամ, որ անցեալ տարի մատուցած ենք Կրօնական Ժողովին և որոյ օրինակն հետևեալն է.

« Առ Պատկառելի Ժողով Արօնական Վարչութեան Հայաս-
տանեայց Եկեղեցւոյ Ի Տաճկաստան

Խոնարհական խնդիր

Ի Փարեզնե Տէր Գրիգորեան Մուրաշեանց

Ըստ հայրական ընտրութեան երջանկայիշատակ Հայրապետին
Ներսիսի Ն. որդեգրեալ նմա Ի մանկական տիող և որպէս յատուկ
սան նորին հայրապետութեան աշակերտեալ Ի Ներսիսեան Ազգային
Հոգևոր դպրոցի Տփլիսայ Ի թիւս գիշերօթիկ աշակերտաց նոյն
Վարժարանի՝ ուխտեալ է իմ, ըստ կամաց մեծախնամ Որդեգրողի
իմոյ, նուիրել զանձն իմ Ի սպասաւորութիւն եկեղեցւոյ, Ի խրախոյս
և Ի պատրաստութիւն ընդ այս կոչումն ապագայ՝ ստացեալ է իմ
զուրար Ի նոյն երօնելի Հայրապետէն և պատուիրեալ տակաւին
յաշակերտութեան անդ՝ քարոզել (քարոզ կարգալ գրով) յեկեղե-
ցիս Տփլիսայ ընդ ամենաքաղցր ակնարկութեամբ Հովուապետին
Հայաստանեայց։ Ի 1857 ամի աւարտելով իմ զընթացս ուսման և
ստանալով զՎկայագիր յառաջադիմութեան և վարուց՝ ըստ տնօրէ-
նութեան վարչութեան դպրոցին վարեալ է իմ զամս ութ զպաշտօն
ուսուցչի հայերէն դպրութեան Ի վերին դասարանս՝ զոլով նախ՝
վերահացու Ի վերայ որդեգիր և երթնել աշակերտաց և ապա՝ տնօ-
րէն վարժարանի ըստ ուսումնական տեսչութեան։ Վասն ամենայն
պաշտօնակատարութեանց իմոց Վարչութիւն Ներսիսեան դպրոցի
շնորհեալ է ինձ զվկայագիր Ի նշան զոհութեան։ Ըստ անդուլ թա-
խանձանաց հայ հասարակութեան Շուշի քաղաքի թողեալ զյիշեալ
պաշտօնակատարութիւնսն և հրաւիրեալ յՆղիշեան Ուսումնարանն
Ղարաբաղու յօգնականութիւն և Ի փոխանորդութիւն տեսչական
պաշտօնի՝ վարեալ է իմ անդանոր ևս զզանազան դաստիարակական
պարտաւորութիւնս, յամենայնի զոհունակ կացուցանելով՝ որպէս
զՎարչութիւն ուսումնարանին, նոյնպէս և զհասարակութիւն քաղա-
քին, ըստ իմովսանն բաւականութեան։

Այսպէս անձ, ոչ միայն յաշակերտութեան, այլ և յուսուցչու-
թեան՝ զամս ինն ուսուցանելով և ուսանելով և ճանապարհորդեալ Ի
զանազան հայաբնակ քաղաքս և Ի գեօղս՝ հասու լինելով վիճակի

ժողովրդեան, որ քան զօր համոզեալ և հաստատեալ եմ ի նոյն միաս
 ի նուիրել զանձն իմ ի սպասաւորութիւն մայրենի եկեղեցւոյ՝ ընդ
 ուսուցչական դասախօսութեանն զուգախառնելով միանգամայն և
 զբեմքասացութիւն սեղանոյ Տեառն : Բայց չե ընկալեալ տակաւին
 զկոչումն ուխտիս՝ ցանկայի և զՀայո Տաճկաստանի տեսանել և շըր-
 ջեալ ընդ Հայաստան դառնալ ի տեղի ծննդեան իմոյ և սննդեան :
 Այսու յուսով հանապարհորդեալ ի Պօլիս՝ յանակնկալն մահտարա-
 ժամէ արգելայ ի քաղաքիս՝ կորուսանելով զյարմար ժամանակ
 հանապարհորդութեան : Ուստի և վստահացեալ ընդ քաղցր աղ-
 նարկութիւն պատկառելի ժողովոյդ՝ համարձակիմ յայտնել զմին
 զայսոսիկ հանգամանս բաղձանաց իմոց և խնդրել խոնարհութեամբ,
 զի արասցէ զտնօրէնութիւն առ ի ձեռնադրել զիս ի վարդապետ՝
 ի կատարումն բաղձամեայ ուխտիս և ի լրումն անմահ կամաց եր-
 ջանկայիշատակ Որդեգրողի իմոյ Տեառն Ներսիսի :

Ոչ աւելորդ համարիմ ընդ վերոգրելոցն ամենից յարակցել և զայս
 ի գիտութիւն հոգևոր Ատենիդ, զի եմ ես ի Տաւուշ գեղջէ Գուգարաց
 աշխարհին, ի նշանաւոր տոնմէ, որդի Գրիգորի քահանայի հոգե-
 զաւակի Աթոյիկոսին Նւիրեմի, և թոռն Մուրատայ — Միրզազիորզի
 Գովլաթբէգեան մականուանելոյ, աւագ եղբայրն իմ զտանի ի քա-
 հանայական կոչման և երկոքին կրտսերքն՝ մին յարքունի պաշտա-
 ման ի Տփլիս և միւսն յարքունի վարժատան ի նոյն քաղաքի :
 Եթէ հարկ ինչ հարցախուզութեան ընդ առաջ ելանիցէ՝ յուսամ զի
 ծանիցեն զիս՝ ըստ դաստիարակական պաշտօնակատարութեանց
 իմոց և ըստ ինչ ինչ գրաւորական երկասիրութեանց՝ ոչ միայն Հայք
 Ռուսաստանի, այլ և ոմանք յեկեղեցականաց և յաշխարհականաց
 Տաճկաստանի, ի վերջին ժամանակս ի Ռուսիայ եղելոց :

Ակն ունելով բարեհաճ տնօրէնութեան պատկառելի ժո-
 ղովոյդ՝ մնամ խորին ակնածութեամբ նուապտ ծառայ

Ի Նոյեմ. 1865 ամի Կ. Պօլիս .

Գ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Կրօնական ժողովն սիրով ընդունեց մեր խնդրագիրը և խոստացաւ հետեւեալ նիստին մէջ արժանն տնօրինել : Բայց քանի մի շաբաթներ անցնելով և ժողովն ամբողջական կամ գէթ առաւելագոյն մասամբ նիստ չունենալով՝ տնօրէնութիւնն յետաձգուեցաւ . մինչև որ բաւական ժամանակէն յետոյ ժողովին ներկայանալով պատասխան ստացանք որ, ինչ ինչ դժուարութիւններ կը տեսնուին մեր խնդրոյ կատարման համար , այն է մեր չմեծանալն որ և իցէ վանքի մէջ կամ եպիսկոպոսի հովանաւորութեան տակ , մեր օտար երկրացի լինելն և տեղւոյս ժողովրդին անծանօթ գոլն և այլն : Կրօնական ժողովի անուամբ եղած այս մերժողական որոշումն , թէպէտ և համապատասխան չէր ոչ մեր բաղձանքին , ոչ մեր մատուցած խնդրագրի պարունակութեանը և ոչ ժողովականաց շատերու ցանկութեանը , որոնք զուցէ ականայ խորին լռութիւն պահպանեցին , սակայն մենք առանց ընդդիմաբանելու կամ թախանձելու , իբրև կրօնական իշխանութեան կամք ընդունելով , մատուցինք մեր յարգանքը և ելանք Պատրիարքարանէն : Բայց ոչ սակաւ զարմացանք , երբոր քանի մի ժամանակէն յետոյ տեղեկացանք , որ Սրբազան Պատրիարքն տեղւոյս ոմանց զաղտնի ազդարարութեամբ միայն արժան է համարել անմտադրութեան տալ մեր խնդիրը , որոյ մասին Թիֆլիզէն ևս մի անձի նամակին մէջ քանի մի տող շնորհակալութիւն հաղորդուած է Նորին Սրբազնութեան : Ցանկալով ուղղակի Սրբազան Պատրիարքէն ստուգել իրաց եղելութիւնը , օր մի որդիաբար ներկայացանք և յայտնեցինք մեզ հաղորդուած տեղեկութիւնը : Նորին սրբազնութիւնը տեղւոյս ոմանց ազդարարութեան ստուգութիւնը մերժեց , բայց մէկ անձնի նամակին մէջ շնորհակալութիւն յայտնելն ընդունեց : Ով՞ էր նամակագիրն , հոյ էր մատուցանողն և ինչ էր շնորհակալութեան անարգ շարժառիթն , մենք չուզեցինք հարցախուզել , վասն զի ցած և խարդախ գործէն , գործողն նանաչելու դժուարութիւն չէր մնացած , մանաւանդ որ նամակն երկրորդական և ուշ բան էր , մեր համար աւելի հաւանականն զաղտնի ազդարարութիւնն էր , որ խիստ արժանահաւատ անձն է հաղորդուած էր մեզ :

Այս միջոցին էր, որ Երեւակի խմբագիրն էլ իւր նորագիւտ խնամակալներուն մի արժանաւոր ծառայութիւն անելու համար, քրտնաթոր աշխատանաց մէջ էր և երկու տղայամիտ և անհիմն կոնդակներ հրատարակելով Պ. Շանշեանի և մեր մասին՝ առատ առատ կը հայհոյէր, կը զրաբանէր և պառաւական անէծքներ կը կարդար, ջանալով պարզամիտները խաբել, որպէս թէ այս առնելով պաշտօն կը մատուցանէ Աստուծոյ : Ուստի մենք տեսնելով մէկ կողմէն սառնութիւն և միւս կողմէն սև նախանձայուզութիւն, տեսնելով որ սիրտ չունեցողներու և ականջին խելք հարցնողներու համար արդէն բաւական առիթ են Չամուրճեանի զրաբանութիւնքը, արժան համարեցինք գործը անմտադրութեան տալ, վասն զի անկեղծութեամբ կը խոստովանինք, որ եթէ ազգին և եկեղեցւոյն սպասաւորելու փափաքն չունենայինք, առաւել սարսափելու էինք վարդապետական խղճալի վիճակէն՝ քան թէ սիրելու : Սակայն հրապարակաւ կը յայտնենք, որ ոչ մեր բաղձանքին համար ապաշաւած ենք, որ ազգի կարօտութենէն յղացած էր մեր սրտին մէջ, և ոչ Երեւակի զրախօսութիւններէն դոյզն ինչ վհատած : Վասն զի՝ ինչ են Չամուրճեանց թշնամանքները, քսութիւնները, եթէ ոչ ստութեան սև ստուերներ, որոնք ճշմարտութեան առաջ պիտի հալածուին, ինչպէս մառախուղը արեգակի առջև, առաւել զգալի առնելով լուսոյ գեղեցկութիւնը : Թէ որչափ զուարճութիւն է մէկ մարդու համար ալեկոծեալ նաւու մէջ լինել, երբ որ ապահով է որ չի խորտակուիլ կամ կորնչիլ, այնչափ զուարճութիւն է և մեր համար Չամուրճեանց տագնապները և յուզմունքները, որոնք կը զայրանան և կը փրփրին, բայց անշուշտ պիտի խոնարհին արդարութեան անյաղթ ուժին առջև : Մենք գիտենք որ ճշմարտութիւնն առաջ պիտի գնայ, բայց կը ցանկանք որ հակառակորդաց դիակները ոտնակոխ առնելով չ'յառաջէ, այլ կենդանւոյն իրան հետևորդ անելով : Բայց խնդիրը այս չէ, խնդիրն Մատթէոս Կաթողիկոսի կոնդակներն են, որոնք Չամուրճեանց զրախօսութեան ապաւէն դարձած են և որոց մասին հարկ կը համարինք, այս գրուածքը վերջացնելէն առաջ, քանի մի խօսք ևս ասել, Չամուրճեանց սիրտը

բոլորովին տակնուվրայ անելու համար : Մենք հաստատապէս գիտենք, որ Մատթէոսի կոնդակներն իւր ձեռքով ստորագրուած են, բայց իր կամքով գրուած չեն, և անհիմնէ իսպառ իրենց պարունակութիւնը և սուտ : Գիտենք նոյնպէս, որ եթէ մի քանի ամիս էլ կենդանի մնար Կաթողիկոսն, անշուշտ իւր ստորագրած կոնդակներուն ներհակն պիտի գրէր, ինչպէս որ շատ անգամ, շատ տեղ և շատ դէպքերով տեսնուած է այս նորա գործողութեանց մէջ, վասնորոյ և յամենայն սրտէ կը ներենք նորա այս ականայ սխալմունքը. քանզի ո՞վ է մարդ, որ կեցցէ և ո՞չ մեղիցէ : Գիտենք նոյնպէս, որ Զամուրճեանք, որչափ գոռան, պոռան և կոկորդները պատառեն, չ'են կարող զՄատթէոսն և իւր կոնդակներն անսխալական ցոյց տալ, վասն զի Զամուրճեանի անգուգական Թահիրեանն՝ ոչ թէ մէկ, այլ 116 յօդուած յանցանաց յայտարարութիւն կ'անէ իւր նամակին մէջ նոյն Կաթողիկոսին համար ասելով — « Միաբանութիւնն Էջմիածնի նկարագրեալ է, որքան ինչ մերձաւորապէս յայտնի էր ամա, զանկանոն արարմունս Մասքեսի ի 116 յօդուածս », և նոյն ինքն Զամուրճեան՝ յիշեալ Կաթողիկոսին սովորական անմտադրութիւնն կը քարոզէ Երեւակի 128 թուոյն մէջ. « Ըստ ոչ գովելի սովորութեան առանց կարդալու ստորագրած պիտի ըլլայ » : Զամուրճեանց և Թահիրեանց համար 116 յօդուած յանցանքի տէր Մատթէոսն, անշուշտ մի սխալմունք էլ Շանշեանի և Մուրատեանի համար կարող էր ունենալ, ուրեմն և բոլորովին սուտ, ինքնահնար և ինքնաստեղծ են Երեւակի ամեն բարուրանքները և բանաքաղութիւնները : Ուստի հարկ կը համարինք ի լուր աշխարհի ասել, որ Շանշեանի և Մուրատեանի դաւանութիւնն չէ հիմնուած ոչ բազմադանդութեան շտեմարան Երեւակին վրայ, ոչ Մատթէոսի կոնդակներուն վրայ, և ոչ նոյն իսկ նորա միւս գրուածոց վրայ, որոց մէջ ըստ ոչ գովելի սովորութեան գուցէ շատ անտեղի դրութիւններ ստորագրած է Զամուրճեանց թելադրութեամբ : Հարկ կը համարինք ասել, որ Զամուրճեան Պատուելին կարող է իւր դաւանած պապական զլխոյն վրայ ցաւիլ, որ այսօր կը տազնապի Հռովմին մէջ, կարող է իւր եղբայրակից ճիգվիթներուն արդեան նեղ վիճակին վը-

րայ վշտանալ և ցաւակցիլ (ինչպէս ցաւակցած է Պաքայայ Թարգմանութեան մէջ) որոնք երկար ժամանակ աշխարհը խաբելէն յետոյ, այժմ իրենք չարաչար կը հալածուին, կարող է արձակ համարձակ Հայոց եկեղեցիէն դուրս գնալ իր համախոհներով, բայց մեր հաւատքին և խղճին վրայ բնաւ ամենևին իրաւունք չունի բռնանալու, ոչ ինքն, ոչ իւրայինքն, ոչ հուր, ոչ սուր, ոչ ջուր, ոչ չամուռ, ոչ Երևակ, ոչ մոլորակ, ոչ սատանայ և ոչ դժոխք: Վասն զի մեր հաւատքը և դաւանած նշմարտութիւնները չեն անհաստատ և խարխուլ, որ ամբարիշտ մարդկանց թիւր և ծուռ դատողութիւններէն, չար գործքերէն և վատ օրինակներէն խախտին և սասանին, չեն հիմնուած շահամոլութեան վրայ, որ Երեւակի դաւանութեան պէս՝ ամեն տարի տասն կերպարանք փոխեն, այլ հիմնուած են ի վերայ անշարժ հիման Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, զոր ի մանկութենէ սիրած ենք, որոյ անարատութիւնը պաշտպանել ուխտած ենք, որոյ ծոցին մէջ ապրիլն փնռք է մեզ, յարատեւութեան համար մեռանիլն՝ կեանք, իսկ կեանքն՝ կատարեալ անմահութիւն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0331399

1999

